Հայաստանի Հանրապետության
Կադաստրի կոմիտե

Աֆրիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան

ԵՐԵՎԱՆ

Աֆրիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան

Տեղեկատու-բառարանն ընդգրկում է Աֆրիկայի խոշոր ֆիզ-աշխարհագրական օբյեկտների ընդհանուր բնութագրերը: Տեղեկատու-բառարանը նախատեսված է գիտական և կրթական համակարգի, ինչպես նաև ընթերցող լայն շրջանների համար:

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի ընթերցող, Ձեզ ենք ներկայացնում Աֆրիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարանը:

Ներկայացված տեղեկատու-բառարանում փորձ է արվել ի մի բերել Աֆրիկա մայրցամաքի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների անվանումների հայեցի գրելաձևը, ինչպես նաև տրվել են նրանց մասին կարևոր տեղեկություններ, որոնք առավելապես բնութագրում են իրենց:

Տեղեկատու-բառարանն ընդգրկում է Աֆրիկայի 310 խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների ընդհանուր բնութագրերը, այդ թվում՝

- ֆիզաշխարհագրական օբյեկտի անվանումը հայերեն և պաշտոնական լեզվով (լեզուներով)
- ֆիզաշխարհագրական օբյեկտի բնութագրումը

Ֆիզաշխարհագրական օբյեկտների անվանումների տեղեկատու-բառարանը ներկայացված է այբբենական կարգով:

Նյութը մշակվել է Կադաստրի կոմիտեի Գեոմատիկայի կենտրոնի աշխարհագրական անվանումների խմբի աշխատակիցների կողմից:

ՏԵՂԵԿԱՏՈՒ-ԲԱՌԱՐԱՆՈՒՄ
ԳՈՐԾԱԾՎՈՂ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐԸ

մ	-	մետր
մ / կմ	-	մետր / կիլոմետր
$մ^3$/ վ	-	խորանարդ մետր /վայրկյան
կմ	-	կիլոմետր
$կմ^2$	-	քառակուսի կիլոմետր
$կմ^3$	-	խորանարդ կիլոմետր

Ա

ԱԲԱՅԱ - ամիարերեն **አባያ ሐይቅ** Աբայա հեյիքի. լիճ Եթովպիայի հարավային մասում, Արբա Մինչ քաղաքից 12 կմ հյուսիս-արևելք: Կազմում է **Մեծ ռիֆտային հովտի** մասը: Լիճն են թափվում մի շարք գետեր ու գետակներ, որոնցից ամենախոշորը Բիլաթեն է: Աբայան ունի արտահոսք դեպի իրենից հարավ գտնվող Չամո լիճը: Ափերը մեղմաթեք են և թույլ մասնատված: Լճում կան բազմաթիվ կղզիներ՝ Հանո, Ուոլիգի (Ալչե Դեսեթ) և այլն: Մակերեսը՝ 1 162 կմ^2: Երկարությունը՝ 60 կմ, լայնությունը՝ 20 կմ: Ծավալը՝ 8,25 կմ^3: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 17 300 կմ^2: Միջին խորությունը՝ 7,1 մ, առավելագույնը՝ 13,1 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 176 մ:
Հայտնի է նաև *Մարգերիտա* անունով:

ԱԲԲԵ - ամիարերեն **አቢ ሐጃክ** Աբի հեյիքի, արաբերեն آبــي بحـــيرة Բուհայրաթ Աբի, ֆրանսերեն Lac Abbé. աղի լիճ Աֆրիկայում, Եթովպիայի ու Ջիբութիի սահմանագլխին: Լճի հիմնական սնուցումը կատարվում է աղերով հագեցված ջերմուկների միջոցով, քաղցրահամ ջուր է ստանում **Ավաշ** գետից: Մակերեսը՝ 450 կմ^2: Ծավալը՝ 3,87 կմ^3: Ջրահավաք ավազանը՝ 64 000 կմ^2: Միջին խորությունը՝ 8,6 մ: Առավելագույն խորությունը՝ 37 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 242 մ:
Հայտնի է նաև Աբիե Բադ անվամբ:
Աբբե անվանումն աֆարերենից թարգմանաբար նշանակում է *Նեխած*:

ԱԲԵՐԴԵՐ - սվահիլի Milima Aberdare, անգլերեն Aberdare Range, կիկույու Nyandarua. լեռնաշղթա Աֆրիկայում՝ Քենիայի կենտրոնական մասում, Նայրոբի քաղաքից հյուսիս: Լեռներից են սկիզբ առնում՝ Էվասո Նյիրո, Ափի, **Տանա** և բազմաթիվ այլ գետեր: Երկարությունը՝ շուրջ 170 կմ: Բարձր գագաթը՝ **Սաթիմա** լեռ (4 001 մ):
Նախկինում կրում էր *Սաթիմա* անունը:
Հայտնի է նաև *Նյանդարուա* անվամբ:
Անվանվել է 1884 թ-ին շոտլանդացի ճանապարհորդ Ջ. Թոմսոնի կողմից, Թագավորական աշխարհագրական ընկերության այն ժամանակվա նախագահ Հենրի Օստին Բրյուսի, 1-ին բարոն *Աբերդերի* պատվին:

ԱԲՈՒ ԿԻՐ - արաբերեն قـــچـــي خليـــير أبِ Խալիջ Աբու Կիր. Միջերկրական ծովի ծոց Աֆրիկայի հյուսիս-արևելքում, **Նեղոսի** գետաբերանի մոտ: Ծոցը գտնվում է Ալեքսանդրիայից 20 կմ հյուսիս-արևելք: Այստեղ է գտնվում Նելսոն կղզին: Ծոցն է թափվում **Նեղոս** գետը: Մակերեսը՝ 500-600 կմ^2: Ծավալը՝ 5-6 կմ^3: Միջին խորությունը՝ 10-12 մ, առավելագույնը՝ 18 մ:
Անվանումն արաբերենից բառացիորեն թարգմանվում է *Հայր Կիր,* որը ստացել է ափին գտնվող *Աբու Կիր* (նախկին Կանոպուս) բնակավայրից:
Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 008 մ, հարաբերականը՝ 3 620 մ:

ԱԲՈՒՆԱ ՅՈՍԵՖ - ամիարերեն **አቡነ ዮሴፍ ተራራ** էբունե Յոսիֆի թրարա. բազմագագաթ լեռ **Եթովպական բարձրավանդակի** արևելյան զառիվայրի մոտ, Լաստա զանգվածում՝ Եթովպիայի Ամհարա շրջանում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 260 մ, հարաբերականը՝ 1 909 մ:

ԱԴԱՄԱՎԱ - ֆրանսերեն Massif de l'Adamaoua, անգլերեն Adamawa Plateau. սարավանդ Կենտրոնական Աֆրիկայում՝ Նիգերիայում, Կամերունում ու Կենտրոնաաֆրիկյան Հանրապետությունում: Ադամավան ընդգրկում է հյուսիս-արևմուտքում **Բենուե**, իսկ հարավ-արևելքում՝ **Սանագա** գետերի միջև ընկած լայնարձակ տարածքը՝ Նիգերիայի հարավ-արևելքը, Կամերունի կենտրոնական ու արևմտյան և Կենտրոնաաֆրիկյան Հանրապետության արևմտյան մասերը: Սարահարթն ունի հրաբխային ծագում, միջին բարձրությունը մոտ 1 000 մ: Այստեղ են գտնվում Օկու (3 011 մ), Բամբուտոն (2 740 մ), Մբամ (2 335 մ) և այլ գագաթները: Հիմքը կազմված է բյուրեղային և մետամորֆիկ ապարներից: Այստեղ գտնվող Ադամավա լեռները հանդիսանում են ջրբաժան **Բենուե** ու **Սանագա** (առաջին հերթին նրա Մբամ վտակի) գետերի ավազանների միջև: Միջին բարձրությունը՝ 1 000 մ:
Հայտնի է նաև *Ադամաուա* անվամբ:
Անվանվել է XIX դարի սկզբում հիմնած և սարավանդի տարածքի մեծ մասը զբաղեցրած էմիրության հիմնադիր և ֆուլբե ժողովրդի առաջնորդ *Մոդիբո Ադամայի* պատվին:

ԱԴՐԱՐ - արաբերեն هضبة أدرار Հադբաթի Ադարար, ֆրանսերեն Plateau de l'Adrar, բերբերերեն ⵄⴷⵔⴰⵔ Ադաղ. սարավանդ **Սահարա** անապատում՝ Մավրիտանիայի կենտրոնական մասում: Ադրարը, Տաղան և Ասաբա սարավանդները իրար հետ միասին կազմում են Թրաբ էլ Հաջրա (Քարի երկիր) անվամբ բնաաշխարհագրական գոտին: Սարավանդը հայտնի է իր բազմաթիվ կանյոններով ու սորացող ավազաբլուրներով: Բարձր կետը՝ Դհար լեռ (829 մ):
Անվանումը բերբերերեն ադաղ *լեռ* անվան աղավաղված ձևն է:

ԱԴՐԱՐ ԻՖՈՂԱՍ - ֆրանսերեն Adrar des Ifoghas, արաբերեն إيفوغاس أدرار Ադրարու Իֆուղաս, բերբերերեն ⵄⴷⵔⴰⵔ ⵏ ⵉⴼⵓⴳⴰⵙ Ադաղ ն Իֆողաս. սարահարթ **Սահարա** անապատում՝ Մալիի հյուսիսում: Արևելքից եզերված է Տամեսնա հարթավայրով, արևմուտքից՝ Ազավակ հովտով և հյուսիս-արևմուտքից՝ **Տանձրուֆթ** անապատով: Տարածքը մասնատված է բազմաթիվ ուեդների խորը հովիտներով՝ Ասեկակա, Իղարղար, Էջերիր, Բուրեսա, Թադլոք, Թին Բիդե, Իբդեկեն, Ին Սետեֆե և այլն: Մակերեսը՝ 250 000 կմ^2: Միջին բարձրությունը՝ 700 մ: Բարձր կետը՝ Էս Սալի լեռ (890 մ):
Անվանումը կազմված է բերբերերեն ադաղ *լեռ* և *Իֆողաս* (տեղաբնիկների ազնվական տոհմ) անուններից:

ԱԹԲԱՅ - արաբերեն أطباء Աթբիհի, անգլերեն Red Sea Hills. տարածաշրջան և լեռնաշղթա Աֆրիկայի հյուսիս-արևելքում, Եգիպտոսում և Սուդանում: Շուրջ 1 700 կմ երկարությամբ ձգվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, Կարմիր ծովի (**Սուեզի ծոցից** մինչև **Եթովպիական բարձրավանդակը**) ափի երկայնքով: Արևմուտքից լեռնաշղթան աստիճանաձև բարձրանում է **Սահարա** անապատի արևելյան մասի՝ **Արաբական** և **Նումբիական** անապատների վրա, արևելքում զառիթափ իջնում դեպի ծովի ափը: Բարձր գագաթներն են՝ Օդա 2 259 մ, Ասոտերիբա 2 215 մ, Էրբա 2 213մ, Համեթա 1 977 մ և այլն: Լեռների լանջերից են սկիզբ առնում մի շարք ժամանակավոր հոսքեր՝ Վադի Օկո, Վադի Դիիբ, Վադի Կինե, Վադի Հուդայն: Միջին բարձրությունը մոտ 1 000 մ:
Լեռնաշղթան հայտնի է նաև *Կարմիր ծովի բլուրներ* անվամբ:
Այժմյան անվանումը արաբերենից أطباء Աթբիհի թարգմանաբար նշանակում է *Իմ բժիշկները* :

ԱԻՐ - ֆրանսերեն Massif de l'Aïr. սարավանդ և բազմագագաթ լեռնազանգված **Սահարա** անապատի հարավում՝ Նիգերում: Լեռները կազմված են ժայռոտ սարավանդից վեր խոյացող, գրեթե կլոր ինը զանգվածներից: Խոշոր գագաթներն են՝ Իդուկալ և Տագլեն (2 022 մ), Տամգակը (1 988 մ), Գրեբունը (1 944 մ) և այլն: Սարավանդի լանջերը զառիվեր ու զառիթափ են, արևմուտքում այն սահուն վերածվում է Տալակ ավազային հարթավայրի, արևելքում՝ կտրուկ ընդհատվում **Տեներե** անապատով: Սարավանդի մեծ մասը զբաղեցնում է քարքարոտ անապատը՝ համադան: Տարածքը մասնատված է ուեդների (կորիների) խորը հովիտներով: Այստեղով են հոսում մի շարք խոշոր ուեդներ (կորիներ)՝ Զագադոնը, Տաֆիդետը, Աջիռուդդուն, Տամգակը, Զիլալեթը, Տամանետը և այլն: Մակերեսը՝ մոտ 79 000 կմ^2:
Երկարությունը՝ շուրջ 330 կմ, լայնությունը՝ մոտ 240 կմ:
Հայտնի է նաև *Այար*, *Ազբին* ու *Աբզին* անուններով:

ԱԼԱՈՒՏՐԱ - մալգաշերեն Farihin' Alaotra, ֆրանսերեն Lac Alaotra. խոշոր հոսանուտ լիճ **Մադագասկար** կղզու հյուսիս-արևելքում: Զբաղեցնում է շուրջ 7 225 կմ^2 մակերեսով ճահճոտ գոգավորության մի մասը: Լճում կան շուրջ 15 կղզյակներ: Ափերը մասնատված են՝ հատկապես հյուսիսարևմուտքում: Լիճն է թափվում և արտահոսում Ամբատո գետը: Մակերեսը՝ 900 կմ^2: Ծավալը՝ 0,945 կմ^3: Միջին խորությունը՝ 1,05 մ, առավելագույնը՝ 3,7 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 753 մ:
Մեծ հավանականությամբ անվան հիմքում ընկած է ինդոնեզերեն laut *ծով* բառը:

ԱԼԲԵՐՏ - ֆրանսերեն Lac Albert, սվահիլի Ziwa Albert, անգլերեն Lake Albert. լիճ Արևելյան Աֆրիկայում, **Մեծ ռիֆտային հովտում՝** Ուգանդայի ու Կոնգոյի ժողովրդավարական Հանրապետության սահմանագլխին: Տեղակայված է Կենտրոնաաֆրիկյան խանդակի մասը կազմող տեկտոնական Ալբերտին իջվածքում: Ափերը թույլ մասնատված են, մեծ մասամբ զառիվեր: Լիճն են թափվում Վիկտորիա Նեղոս, Սեմլիկի, Մուզիզի, Նկուսի և այլ գետեր, արտահոսում՝ Ալբերտ Նեղոսը: Մակերեսը՝ 5 347 կմ^2: Երկարությունը՝ 160 կմ, լայնությունը՝ 30 կմ: Ծավալը՝ 132 կմ^3: Միջին խորությունը՝ 25 մ, առավելագույնը՝ 58 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 618 մ:
1973-97 թթ-ին լիճը հայտնի էր *Մոբուտու Սեսե Սեկո* անվամբ:
Հայտնի է նաև Mvutan Nzige *Մորեխի լիճ* և *Նյանզա* անուններով:
1864 թ-ին լիճը հայտնաբերել է անգլիացի ճանապարհորդ Սեմուել Բեքերը և անվանել Վիկտորիա թագուհու ամուսնու *Ալբերտ Սաքսեն Կոբուրգ Գոթացու* պատվին:

ԱԼԴԱԲՐԱ - ֆրանսերեն Aldabra, անգլերեն Aldabra. ատոլ Հնդկական օվկիանոսի արևմուտքում՝ **Մադագասկար** կղզուց հյուսիս-արևելք, **Սեյշելյան կղզիներում**: Այլ ատոլների ու կղզիների հետ միասին կազմում է 46 կղզիանոց Ալդաբրա կղզեխումբը՝ Սենդրե, Միշել, Էսպրիտ, Մուստիկ, Պարկ, Էմիլ, Դյուբուա և այլն: Սուրբ Ծննդյանից (Կիրիտիմատիից) հետո իր չափերով աշխարհի երկրորդ ատոլն է: Ատոլի հիմքը կազմում է հանգած ստորջրյա հրաբխի խառնարանը: Ընդհանուր մակերեսը՝ 156,75 կմ^2: Երկարությունը՝ 34 կմ, լայնությունը՝ 14,5 կմ: Բարձր կետը՝ մինչև 8 մ: Ափագիծը՝ 85 կմ:
Հայտնի է նաև *Իլյա Դարա*, *Ալդաբրան*, *Ատոլ Ալդաբրա* կամ *Ալդաբրա* կղզիներ անուններով:
Ալդաբրա անվանումը ծագում է արաբերեն الخضرا ալ Խադրա, *կանաչ* բառից, որը հավանաբար ակնարկում է ատոլի ծովալճակի գույնը:

ԱԼՄԱԴԻ - ֆրանսերեն Pointe des Almadies.Աֆրիկայի արևմտյան ծայրակետը՝ 14° 44′ 27,67″ N, 17° 31′ 47,35″ W կոորդինատներով, **Կանաչ հրվանդան** թերակղզում, Սենեգալում:
Անվանումն առաջացել է իսլամում Մուհամմեդ մարգարեին հաջորդող *Ալ Մահդիի* պատվին:

ԱՀԱԳԳԱՐ - արաբերեն جبـــال هقار Ջաբալ Հաքար, բերբերերեն ՀԱՃՕՀՕ Ի ՀՕՀՀՕ Իդուրար ն Ուհագգար / Թասսիլի Ուան Ահագգար. հրաբխային ապարներից կազմված բարձրավանդակ **Սահարա** անապատում՝ Ալժիրի հարավում, Տամանրասետ քաղաքից հարավ-արևելք: Լեռների հյուսիսային լանջից են սկիզբ առնում Ուեդ Իրհառհար, իսկ հարավայինից՝ Ուեդ Ազրու, Ուեդ Տի ն Տարաբին, Ուեդ Տա-կալուս, Ուեդ Տամանրասետ, Ուեդ Ամդեդ, Ուեդ Աջելման, Ուեդ Տեկուիատ ջրահոսքերը:
Մակերեսը՝ 50 000 կմ^2: Բարձր կետը՝ **Թահաթ** լեռ (2918 մ):
Հայտնի է նաև *Հոգգար* անունով:
Ահագգար անվանումն առաջացել է տեղաբնիկ տուարեգների ավագանու անվան հոգնակի *Ihaggaren* ձևից:

ԱՂՏՈՏ ԽՈՐՇ - արաբերեն آرىهـــة خليـــج Խալիջ Կարիհա, հունարեն Κόλπος Φαούλ.Կարմիր ծովի ծոց, Եգիպտոսի հարավարևելյան մասում: Ծոցը հյուսիսից սահմանափակված է Բանաս հրվանդանով: Այստեղ կան մի շարք կղզիներ՝ Մուքավա, Ժայռոտ, Սուրբ Հովհան և այլն: Երկարությունը՝ 30 կմ, լայնությունը՝ 28 կմ: Այժմյան անվանումը հայտնի է հին ժամանակներից՝ հունարեն Ακάθαρτος κόλπος, լատիներեն Simus Immundus անուններով, որոնք թարգմանաբար նշանակում են *Աղտոտ խորշ* (*ծոց*):

ԱՄԲԱ ԱԼԻԳԵ - ամհարերեն **አምባ አልጋ** Ամիբա Ալիգա. լեռ Եթովպիայի հյուսիսում, Տիգրեյ տարածաշրջանում, Դեբուբաբի զոնայում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 438 մ:
Անվանումը կազմված է ամհարերեն **አምባ** ամիբա *միջնաբերդ* և **አልጋ** ալիգա *մահճակալ* բառերից:

ԱՄԻՐԱՆՏՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - ֆրանսերեն Îles Amirante.24 բուստակղզիներից կազմված կղզեխումբ Հնդկական օվկիանոսի արևմտյան մասում՝ **Մադագասկար** կղզուց հյուսիս-արևելք: Կազմում է Սեյշելների Հանրապետության մասը: Կղզիներն են՝ Դերոշը, Ռեմիրը, Բիժուտիերը, Սեն Ֆրանսուան, Ալֆոնսը, Պուավրը և այլն:
Մակերեսը՝ 9,918 կմ^2: Առավելագույն բարձրությունը ծովի մակարդակից 15 մ:

ԱՅԱՇԻ - արաբերեն العياشـــــي جبـــل Ջաբալ ալ Այաշի, ֆրանսերեն Djebel Ayachi, իսպաներեն Jbel Ayachi, բերբերերեն ՕՀՕՕՀ Ի ՀՕՀՀՕՇ Ադրար ն Այյաշ. շուրջ 20 կմ տրամագիծ ունեցող բազմագագաթ լեռնազանգված Աֆրիկայի հյուսիսում՝ Բարձր Ատլաս լեռների արևելքում, Մարոկկոյի կենտրոնական մասում: Լեռան արևելյան լանջերից է սկիզբ առնում Ուեդ Մուլույան: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 757 մ:
Նախկինում հայտնի էր *Իտատա*, *Միդի Համզա* և այլ անուններով:
Լեռն իր այժմյան անունը ստացել է *այտ այաշ* ցեղի անունից:

ԱՆՆՈԲՈՆ - իսպաներեն Annobón, ֆրանսերեն Annobón, պորտուգալերեն Ano-Bom. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում, **Գվինեական ծոցում**:Մակերեսը՝ 17 կմ^2:Երկարությունը՝ 6,4 կմ, լայնությունը՝ 3,2 կմ:Բարձր կետը՝ Քիովյո պիկ հրաբուխ (598 մ):
1973-1979 թթ-ին կղզին կոչվել է Պագալու:
Անոնբոն 1473 թ հունվարի 1-ին հայտնաբերվել է պորտուգալացիների կողմից և ստացել իր այժմյան անվանումը, որը բառացի նշանակում է *Բարի տարի*:

ԱՆՏԻԱՏԼԱՍ - արաբերեն الصـــــغير الأطلـس ալ Ատլաս ալ Սաղիր, ֆրանսերեն Anti-Atlas, բերբերերեն ⵓⵏⵜⵉⴰⵟⵍⴰⵙ Ատլաս Ամեզյան. լեռնաշղթա Աֆրիկայի հյուսիսում՝ Մարոկկոյում, **Ատլաս** լեռների հարավարևմտյան մասը: Անտիատլասը Սուս գետի հովտով բաժանվում է Բարձր Ատլասից, իսկ **Դրաա** գետի հովտով՝ Սաղրու լեռնաշղթայից: Հիմնականում լեռների հյուսիսային լանջերից են սկիզբ առնում բազմաթիվ ժամանակավոր ջրահոսքերը: Մակերեսը՝ 116 587 կմ^2: Երկարությունը՝ 797 կմ, լայնությունը՝ 437 կմ: Միջին բարձրությունը՝ 1 590 մ: Բարձր գագաթը՝ Սիրվա լեռ 3 304 մ:
Հայտնի է նաև *Փոքր Ատլաս* անվամբ:
Անվանումը ստացել է հույների կողմից առասպելական տիտան՝ *Ատլասի* պատվին, որն ի զանազանումն Ատլաս լեռների, անվանն ավելացվել է anti *հակա* մակբայը:

ԱՍԵՂԻ ՀՐՎԱՆԴԱՆ - անգլերեն Cape Agulhas, աֆրիկաանս Kaap Agulhas, պորտուգալերեն Cabo das Agulhas. Աֆրիկայի պաշտոնապես ընդունված հարավային ծայրակետը՝ 34° 49′ 54,09″ S, 20° 00′ 48,07 ″ E, Հարավաֆրիկյան Հանրապետությունում, **Բարեհուսո** հրվանդանից 155 կմ հարավ-արևելք: Սակայն հրվանդանից շուրջ 1,34 կմ արևմուտք կա մեկ այլ անանուն ծայրակետ 34° 50′ 00,25″ S, 19° 59′ 56,59″ E կոորդինատներով: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 140 մ:
XV դարում ամբողջ տարածքը պորտուգալացի ծովագնացների կողմից անվանվել է L'Agulhas՝ նկատի ունենալով մոտակայքում ծովի վրա դիտվող մագնիսական անոմալիան՝ կողմնացույցի սլաքի խոտորումը: Հրվանդանը ի վերջո ստացավ Agulhas (agulha) *ասեղ* անունը, տվյալ դեպքում՝ կողմնացույցի սլաք, որի հայերեն պատճենումն է *Ասեղի հրվանդան*:

ԱՍՍԱԼ - արաբերեն عسـل بحـــيرة Բուհայրահ տե Ասսալ, ֆրանսերեն Lac Assal. խառնարանային անհոսք լիճ Ջիբութիի կենտրոնական մասում, **Աֆարի գոգավորությունում՝ Տաջուրա** ծոցից 5 կմ հյուսիս-արևմուտք: Այստեղ է գտնվում Աֆրիկա մայրցամաքի ամենացածր կետը: Մակերեսը՝ 54 կմ^2: Երկարությունը՝ 10 կմ,լայնությունը՝ 7 կմ: Ծավալը՝ 0,4 կմ^3: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 900 կմ^2: Միջին խորությունը՝ 7,4 մ, առավելագույնը՝ ավելի քան 20 մ: Աղիությունը՝ 350-400 ‰:
Բարձրությունը ծովի մակարդակից՝ -154 մ:
Հայտնի է նաև *Ազալ* անունով:
Այժմյան անվանումն արաբերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Մեղրալիճ* :

ԱՎԱՇ - ամհարերեն **አዋሽ ወንዝ** Ավաշի ուենցի, աֆարերեն We'ayot, արաբերեն نهر أواش Նահր ուլ Ավաշ, ֆրանսերեն Awash. գետ Աֆրիկայում, **Մեծ ռիֆտային հովտի** հյուսիսային մասում, Եթովպիայում: Սկիզբ է առնում Ադիս Աբեբա քաղաքից արևմուտք գտնվող Դենդի լեռան արևելյան լանջի լճից, հոսում արևելք, ճանապարհին սնվելով Կոկա, Շալա, Աբիյաթա, Լանգանո, Ձիվայ լճերից և բազմաթիվ վտակներից, Նազրեթ բնակավայրի մոտ փոխում հոսքի ուղղությունը հյուսիսայինի, Ավաշ

բնակավայրից մի փոքր հյուսիս, դուրս գալիս **Դանաքիլ** անապատ ու իր ճանապարհի վերջում թափվում **Աբբե** լիճը: Հիմնական վտակներն են՝ Կեսեմը, Կաբենան ու Լեդին: Երկարությունը՝ 1 200 կմ: Ավազանը՝ 110 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 46,3 մ^3/վրկ (Ավաշ քաղաքում): Ակունքի բարձրությունը՝ 2 881 մ:
Անվանումը ստացել է Ավաշ բնակավայրից, որի անունն իր հերթին արաբերենից թարգմանաբար նշանակում է *խորտակված* , *ջրածածկ* :

ԱՏԱԿՈՐԱ - ֆրանսերեն Chaîne de l'Atacora, անգլերեն Togo Mountains. լեռնաշղթա Արևմտյան Աֆրիկայում՝ Գանայում, Տոգոյում, Բենինում ու Բուրկինա Ֆասոյում: Ձգվում է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ: Ատակորան առանձնանում է տեղումների առատությամբ: Շղթային են պատկանում նաև Աֆաջատո լեռները, որտեղ գտնվում է Գանա պետության ամենաբարձր կետը (880 մ): Բենինում լեռնազանգվածը կազմված է երեք հիմնական գագաթներից՝ Սոկբարո (658 մ), Տանեկա (654 մ) և Բիրնի: Երկարությունը՝ շուրջ 660 կմ, լայնությունը՝ 20-90 կմ: Միջին բարձրությունը՝ 600 մ: Բարձր գագաթը՝ Ագու լեռ (986 մ):

ԱՏԼԱՍ - արաբերեն الأطلس جبال Ջաբալ ալ Ատլաս, բերբերերեն ⵣⵍⴰⵚ I ⵍⴰⵟⵍⴰⵙ Իդուրար ն Ուաթլաս, ֆրանսերեն Atlas, իսպաներեն Atlas. լեռնահամակարգ Աֆրիկայի հյուսիս-արևմուտքում՝ Մարոկկոյում, Ալժիրում ու Թունիսում: Ձգվում է Տանժերի մոտ գտնվող Սպարտել հրվանդանից մինչև Միջերկրական ծովի Փոքր Սիրթ ծոցը: Ի սկզբանե Ատլաս կոչվել են միայն հռոմեական Մավրիտանիա նահանգում տեղակայված լեռները, այսինքն այժմյան Ատլասի արևմտյան և կենտրոնական մասերը: Լեռները Սահարան անջատում են, Միջերկրական ծովի ու Ատլանտյան օվկիանոսի ափերից: Ատլասը կազմված է մի շարք լեռնաշղթաներից՝ Տել Ատլաս, Բարձր Ատլաս, Միջին Ատլաս, Սահարական Ատլաս և այլն, ինչպես նաև ներքին սարահարթերից (Բարձր սարահարթեր, Մարոկկոյան Մեսետա) ու հարթավայրերից: Լեռների հյուսիսային լանջերից են սկիզբ առնում՝ Ուեդ Տենսիֆտ, Ուեդ Սուս, Ուեդ Ումեր Ռբիա, Ուեդ Մառուտ, Ուեդ Սեբու, իսկ հարավայինից՝ Ուեդ Ձիզ, Ուեդ Դադես ժամանակավոր ջրահոսքերը: Մակերեսը՝ 775 340 կմ^2: Երկարությունը՝ 2 092 կմ, լայնությունը՝ 1 019 կմ: Բարձր կետը **Թուբկալ** լեռ (4 167 մ, Մարոկկոյում):
Հայտնի է նաև Ատլասի լեռներ անունով:
Անվանումը ստացել է հույների կողմից՝ առասպելական տիտան *Ատլասի* պատվին:

ԱՐԱԲԱԿԱՆ ԽՈՐՇ - արաբերեն العـرب خليـــج Խալիջ էլ Արաբը. մեծ ծոց Ալեքսանդրիայից արևմուտք, Եգիպտոսում:Այստեղ է գտնվում Լևանտական ծոցի ափի ամենահարավային կետը:
Հայտնի է նաև Արաբական ծովախորշ անվամբ:
Անվանումը ստացել է *արաբ* ժողովրդից:

ԱՐԵՎԵԼԱԱՖՐԻԿՅԱՆ ՍԱՐԱՎԱՆԴ - սվահիլի Mpanda wa Afrika Mashariki, անգլերեն East African Plateau. սարահարթ Աֆրիկայի հարավարևելյան մասում՝ Ուգանդայում, Քենիայում, Տանզանիայում, Ռուանդայում, Բուրունդիում, Զամբիայում ու Մալավիում: Հյուսիսային հատվածում են տեղակայված **Մերու**, **Կիլիմանջարո** հրաբուխները և **Քենիա** լեռը, ինչպես նաև Աֆրիկայի խոշորագույն **Վիկտորիա** լիճը: Սարավանդը խիստ մասնատված է և եզրափակված **Մեծ ռիֆտային հովտի** հարավային մասով: Սարահարթի կենտրոնական մասում է գտնվում **Խառնարանների բարձրավանդակը՝** Նգորոնգորո կալդերայով: Այստեղ են գտնվում Աֆրիկայի

խոշորագույն գետերի՝ **Նեղոսի**, **Կոնգոյի** և **Զամբեզիի** ակունքները: Երկարությունը՝ 1 750 կմ, լայնությունը՝ 1 400 կմ:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՆԱՊԱՏ - արաբերեն الشـــرقية الصــحراء ալ Սահրաու ալ Շարքիյատու, անգլերեն Eastern Desert. անապատ Աֆրիկայում, **Սահարայի** հյուսիսարևելյան մասում, **Նեղոսի** ու Կարմիր ծովի միջև՝ Եգիպտոսում: Ռելիեֆում գերակշռում են 500 մ միջին բարձրությամբ սարահարթերը: Արևելքից անապատը շրջապատված է լեռնաշղթայով, որի բարձր կետերն են՝ Շաիբ էլ Բանաթը (2 187 մ), Քաթթարը (1 963 մ), Ղարիբը (1 757 մ): Արևելյան անապատի լայնարձակ տարածքները զբաղեցված են շարժվող բարխաններով, ավազային զանգվածներով, իսկ կենտրոնական մասը՝ արմատական ապարների ելքերով: Մակերեսը՝ 220 000 կմ^2: Միջին բարձրությունը ՝ շուրջ 500 մ:
Հայտնի է նաև Արաբական անապատ անվամբ:
Արևելյան է անվանվել ի հակադրություն ***Լիբիական*** (Արևմտյան) անապատի:

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՄԵԾ ԷՐԳ - արաբերեն رق ـــير الشـــــالكبــرقي ալ Արաք ալ Շարկիու ալ Քաբիրու. իր մեծությամբ առաջին էրգը Աֆրիկայի հյուսիսում՝ Ալժիրում, Թունիսում ու Լիբիայում:Արևելքից եզերված է Դահար լեռներով (Թունիս) և Ալհամրա համադայով (Լիբիա), հարավից՝ Տինրեր սարավանդով (Ալժիր), հարավ-արևմուտքից՝ **Թադեմայիթ** սարավանդով (Ալժիր) և հյուսիսից՝ **Էլ Ջերիդ** լճով (Թունիս): Մակերեսը՝ շուրջ 120 000 կմ^2: Երկարությունը՝ ավելի քան 600 կմ, լայնությունը՝ ավելի քան 230 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 280 մ:
Արաբերեն *Էրգ* են կոչվում Աֆրիկայում ավազաթմբերով պատած անապատները:

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԵԾ ԷՐԳ - արաբերեն الـع ـــير الغـــــالكبــرق ալ Արաք ալ Ղարիբիու ալ Քաբիրու, ֆրանսերեն Grand Erg occidental. Արևելյան մեծ էրգից հետո իր մեծությամբ երկրորդ էրգը Աֆրիկայի հյուսիսում, **Սահարա** անապատի հյուսիսարևմտյան եզրում՝ Ալժիրում: Էրգն առաջացել է ցամաքած լճի տեղում: Մակերեսը՝ շուրջ 80 000 կմ^2: Երկարությունը՝ մինչև 570 կմ, լայնությունը՝ մինչև 250 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 500 մ:
Արաբերեն *Էրգ* են կոչվում Աֆրիկայում ավազաթմբերով պատած անապատները:

ԱՐՈՒՎԻՄԻ - ֆրանսերեն Lohale (Aruwimi). գետ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում, **Կոնգո** գետի աջ վտակը: Իտուրի անվամբ սկիզբ է առնում **Ալբերտ** լճից ավելի քան 100 կմ արևմուտք՝ Կապույտ լեռների արևմտյան ստորոտներից: Սկզբում հոսելով սարահարթով, գետը մտնում է **Կոնգոյի** ավազան և հոսելով արևմտյան ուղղությամբ, Բասոկո բնակավայրի մոտ առաջացնելով բազմաթիվ քարվաստներ ու ջրվեժներ, թափվում մայր գետը: Վտակներն են՝ Նգայուն, Իբինան, Լենդան, Մարաումբան և այլն: Երկարությունը՝ 1 287 կմ, լայնությունը գետաբերանում՝ 2,4 կմ: Ավազանը՝ 116 100 կմ^2: Ջրի միջին ծախսը՝ 2 000 մ^3/վրկ: Գետաբերանի բարձրությունը՝ 361 մ:
Հայտնի է նաև *Լոհալե* անվամբ:
Անվանվել է շոտլանդացի հետազոտող Դ. Լիվինգստոնի կողմից, ով հասնելով այս գետի ափերը հարցրել է տեղաբնիկներին նրա անունը և ի պատասխան լսել aruwimi, որը տեղաբնիկների բարբառով թարգմանաբար նշանակում է *Նա ի՞նչ ասեց*:

ԱՖԱՐԻ ԳՈԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ - արաբերեն العفـــر مثلـــث Մուսալաթ ուլ Աֆրի, ֆրանսերեն Dépression de l'Afar, սոմալիերեն Murugada Afar, անգլերեն Afar

Triangle, ամիարերեն **የአፋር ክፍት** Եաֆարի կիֆիտի. երկրաբանական իջույթ Աֆրիկյան եղջյուրում՝ Ջիբութիում, Սոմալիում, Էրիթրեայում և Եթովպիայում: Իր մեջ է ընդգրկում **Դանաքիլ** անապատն ու իջվածքը և **Ասսալ** լիճը: Գոգավորությունով է հոսում միակ **Ավաշ** գետը: Աֆարի գոգավորությունը իրենից ներկայացնում է տեկտոնական հանգույց, որի **Աբբե** լճում հատվում են Կարմիր ծովի ռիֆտը, **Մեծ ռիֆտային հովիտը** և Ադենի լեռնաշղթան: Գոգավորության հիմքը կազմված է լավաներից, այստեղ է գտնվում աշխարհի խոշորագույն հրաբուխներից մեկը՝ Էրթա Ալենը:
Անվանումը ստացել է *աֆար* ժողովրդից:

Բ

ԲԱՄԲՈՒԿ - ֆրանսերեն Monts Bambouk. լեռնաշղթա Մալիի արևմուտքում՝ Սենեգալի հետ սահմանամերձ գոտում: Արևմուտքից եզերված է Տամբաուրա ժայռերով, իսկ Մանդինգո լեռներից առանձնացված է ավազե հարթավայրով: Երկարությունը՝ շուրջ 230 կմ, լայնությունը՝ 5-20 կմ:

ԲԱՆԳՎԵՈՒԼՈՒ - անգլերեն Lake Bangweulu.խոշոր, ծանծաղ լճից և համանուն ճահիճներից ու ողողատից կազմված ջրային համակարգ Զամբիայի հյուսիսում: Իր մեջ է ընդգրկում բազմաթիվ լճակներ՝ Չիֆունաբուլի, Վալիլուպե, Կամպոլոմբո, Կանգուենա, Չալի, Չայա, Վումբա և այլն: Համարվում է աշխարհի խոշորագույն ջրաճահճային անդաստաններից մեկը: Բանգվեուլուն ունի բազմաթիվ կղզիներ՝ Մբաբալա, Չիշի, Չիլուբի, Լիֆունգե Մվենզի, Նսումբու, Չիչիլե, Կասանսա, Պանիյո, Նսալուշի, Նչետա և այլն: Լիճն են թափվում մոտ 17 գետեր ու գետակներ, որոնցից խոշորներն են՝ **Չամբեշին**, Լուենան, Լուպոպոշին, Լուկուտին, Լուբանսենշին և այլն, արտահոսում՝ **Լուապուլան**: Լճի մշտական բաց ջրային մակերեսը կազմում է մոտ 2 975 կմ^2, իսկ ծավալը՝ 5 կմ^3: Մակերեսը՝ 15 100 կմ^2: Երկարությունը՝ 75 կմ, լայնությունը՝ 40 կմ: Միջին խորությունը՝ 4 մ, առավելագույնը՝ 5 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1164 մ:
Անվանումը բանտու լեզուներից թարգմանաբար նշանակում է *Վայր, որտեղ հանդիպում են ջուրն ու երկինքը*:

ԲԱՆԴԱՄԱ - ֆրանսերեն Bandama. գետ Արևմտյան Աֆրիկայում, Կոտ դ'Իվուարում: Կազմավորվում է Սպիտակ և Կարմիր Բանդամա գետերի միախառնումից, հոսում հարավային ուղղությամբ և թափվում **Գվինեական ծոց**: Վտակներն են՝ Նզիմը, Բերեն, Բուն, Յարանին և այլն: Երկարությունը՝ 1 050 կմ: Ավազանը՝ 98 500 կմ^2: Ջրի ծախսը՝ 263 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 400 մ:
Հաճախ ուղակի անվանվում է նաև Սպիտակ Բանդամա:

ԲԱՍԱՍ ԴԱ ԻՆԴԻԱ - ֆրանսերեն Bassas da India.հրաբխային կղզիներից ու ժայռերից կազմված ատոլ **Էպարսե** կղզիների կազմում՝ **Մոզամբիկի նեղուցում**: Մակերեսը՝ 0,2 կմ^2: Ափագիծը՝ 35,2 կմ: Առավելագույն բարձրությունը ծովի մակարդակից՝ 2,4 մ:
Ատոլը հայտնաբերվել է պորտուգալացի ծովագնաց Գասպար Գոնսալվիշի կողմից և անվանվել Baixo da India:1825 թ-ին այն ստացավ այժմյան անվանումը, որտեղ Bassas-ը թարգմանվում է *Ցածր* կամ *Ստորջրյա*:

ԲԱՏԵԿԵ - ֆրանսերեն Plateaux Batéké. սարավանդ Կոնգոյի Հանրապետության ու Գաբոնի սահմանագլխին: Բատեկեն իրենից ներկայացնում է հին հրաբխականության տարածք: Սարավանդի մակերեսը հիմնականում իրենից ներկայացնում է սավաննա: Բատեկեի լեռներից են սկիզբ առնում Օգովե, Մպանա, Մպասա, Լեկոնի, Լեբանգո, Լիկվալա և այլ գետեր: Մակերեսը՝ շուրջ 60 000 կմ^2: Միջին բարձրությունը՝ 350-930 մ: Բարձր կետը՝ Լեկեթի լեռ (1 042 մ):
Անվանումը կազմված է ba բազմության հատկանիշն ընդգծող նախածանցից և նախկինում այստեղ բնակվող բանտու ժողովրդի téké *տեկե* ցեղախմբի անունից:

ԲԱՐԵՀՈՒՍՈ ՀՐՎԱՆԴԱՆ - անգլերեն Cape of Good Hope, աֆրիկաանս Kaap die Goeie Hoop, պորտուգալերեն Cabo da Boa Esperança. հրվանդան Աֆրիկայի հարավում, **Կապի թերակղզում**:
Հայտնի էր նաև Փոթորիկների հրվանդան անվամբ:
1488 թ-ին պորտուգալացի ծովագնաց Բարթոլոմեու Դիաշը Հնդկաստան ուղևորվելիս հայտնագործեց այս հրվանդանը և կոչեց *Փոթորիկների հրվանդան*՝ այստեղ են հանդիպում Ատլանտյան օվկիանոսի Բենգելական սառը և Հնդկական օվկիանոսի Ագուլյաշ տաք հոսանքները: Ըստ ավանդույթի Պորտուգալիայի թագավոր Ժուան II-ը չհաստատեց այդ վանող, վախեցնող անվանումը և հրվանդանը վերանվանվեց Բարեհուսո՝ նկատի ունենալով, որ այստեղից կարող է բացվել այն բարի և հուսալի ճանապարհը, որով պորտուգալացիները կհասնեն երազած Հնդկաստան:

ԲԵ - մալգաշերեն Nosy Be, ֆրանսերեն Nosy Be. հրաբխային կղզի **Մադագասկարի** հյուսիսարևմտյան ափամերձ մասում: Մակերեսը՝ 321 կմ^2: Երկարությունը՝ 26 կմ, լայնությունը՝ 20 կմ: Բարձր կետը՝ Լոկոբե լեռ (455 մ):
Նախկինում հայտնի էր *Ասադա* և *Մանիտրա* անուններով:
Nosy Be անվանումը մալգաշերենից թարգմանաբար նշանակում է *Մեծ կղզի*:

ԲԵՅՔԵՐ - սվահիլի Kiyanja / Mlima Baker, անգլերեն Mount Baker, ֆրանսերեն Mont Baker. լեռ Լուսնի լեռներում, Ռուվենզորի լեռնազանգվածում՝ Ուգանդայում, Կոնգոյի ժողովրդավարական Հանրապետության սահմանից 2,8 կմ հեռավորությամբ: **Սթենլի** և **Սփիք** լեռների հետ միասին այն կազմում է եռանկյունի, որն իր մեջ է ընդգրկում Բուշուկու հովտի վերին մասը: Ունի մի քանի գագաթ՝ Էդուարդ պիկ 4 844 մ, Զեմփեր Պիկ 4 794 մ, Վոլաստոն պիկ 4 626 մ, Մուռ պիկ 4 623 մ, Գրաուերի Ժայռ 4 483 մ, Կանյի պիկ 4 485 մ և այլն: Հարաբերական բարձրությունը՝ 474 մ:
Հայտնի է նաև *Կիյանջա* անունով:
Այժմ անվանվել է Նեղոսի ավազանը հետազոտող *Սեմյուել Ուայթ Բեյքերի* պատվին:

ԲԵՆ ՍԵԿԱ - արաբերեն رأس بن سكة Ռաս բեն Սեկա.Աֆրիկայի հյուսիսային ծայրակետը՝ 37° 20′ 49, 10″ N, 9° 45′ 20,43″ E, Թունիսում, Միջերկրական ծովի ափին, Բիզերտա քաղաքից 15 կմ հյուսիս-արևմուտք:
Հավանաբար այս հրվանդանն էր, որը Καλός ἀκρωτηρία *Հրաշալի հրվանդան* անվամբ հիշատակվում էր Հռոմի և Կարթագենի պայմանագրերում:

ԲԵՆԻՆ - ֆրանսերեն Golfe du Bénin, անգլերեն Bight of Benin. Ատլանտյան օվկիանոսի ծոց, Արևմտյան Աֆրիկայի հարավային ափին, **Գվինեական ծոցի** մասը: Տարածվում է շուրջ 640 կմ մակերեսով, արևմուտքից՝ Սենտ Պոլ (Գանա) հրվանդա-

նից, մինչև Նիգերի գետաբերանը: Ծոցը ողողում է Գանայի, Տոգոյի, Բենինի, Նիգերիայի ափերը: Ափերը ցածրադիր են և ճահճոտ: Ծոցն են թափվում **Նիգեր**, ինչպես նաև Սիո, Մոնո, Վեմե, Բենին, Ֆորկադոս և այլ գետերը: Առավելագույն երկարությունը՝ 300 կմ: Առավելագույն լայնությունը՝ 640 կմ:
Ծոցն իր անունը ստացել է XV-XIX դդ պատմական թագավորության *Բենինի* պատվին:

ԲԵՆՈՒԵ - անգլերեն Benue River, ֆրանսերեն Bénoué. գետ Կամերունում ու Նիգերիայում, **Նիգերի** ձախ վտակը: Սկիզբ է առնում Կամերունի հյուսիսային մասից, **Ադամավա** սարավանդից, ապա հոսելով հյուսիսային ուղղությամբ՝ թափվում Լագդո լիճը, որտեղից արտահոսելով՝ Գարուա քաղաքի մոտ փոխում իր ուղղությունը արևմտյանի, կտրում անցնում Նիգերիայի սահմանը, Նյուման բնակավայրի մոտ կրկին փոխելով իր ուղղությունը, Լոքոջա բնակավայրի մոտ միախառնվում մայր գետին: Օժանդակներն են՝ Կեբին, Հավալը, Ֆարոն, Տարաբան, Շեմանքարը, Դոնգան, Գամանան, Մադան, Դեպը և այլն: Երկարությունը՝ 1 370 կմ: Ավազանը՝ 335 035 կմ^2: Ջրի ծախսը՝ 3 170 մ^3/վրկ:
Հայտնի էր նաև *Չադդա* անվամբ:
Այժմյան անվանումը կազմված է բանտու լեզվի Bé *ջուր* և noué *մայր* բառերից՝ *Ջրերի մայր*:

ԲԻԵ - պորտուգալերեն Planalto Central de Angola. սարավանդ Անգոլայի կենտրոնական մասում: Այստեղից են սկիզբ առնում **Կունենե**, **Կվանզա**, **Կվանգո** և բազմաթիվ այլ գետեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 520-1 830 մ: Բարձր կետը՝ Մոկո լեռ (2 619 մ):
Հայտնի է նաև Անգոլայի կենտրոնական սարավանդ անվամբ:

ԲԻՈԿՈ - իսպաներեն Bioko, ֆրանսերեն Bioko, պորտուգալերեն Bioko. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում՝ **Բոնևիի ծոցում,** Կամերունի ափերից 32 կմ հեռավորության վրա: Կղզին լեռնային է, ափերը զառիվեր: Առաջացել է մինչև 3012 մ բարձրություն ունեցող մի քանի հրաբխային կոների միացումից: Մակերեսը՝ 2 017 կմ^2: Երկարությունը՝ 70 կմ, լայնությունը՝ առավելագույնը 32 կմ: Ափագիծը՝ 270 կմ: Բարձր կետը՝ Բազիլե պիկ (3 012 մ):
Նախկինում հայտնի էր *Ֆորմոզա*, *Ֆեռնանդո Պո* և *Մասիաս Նգեմա Բիյոգո* անուններով:
Հայտնի է նաև *Օտչո* անվամբ:
Կղզին իր այժմյան անվանումը ստացել է 1979 թ-ին՝ Հասարակածային Գվինեայի քաղաքական գործիչ և նախկին վարչապետ *Կրիստինո Սերիշ Բիոկոյի* պատվին:

ԲԻՍՈԿԵ - ֆրանսերեն Visoke, կինյառուանդա Ikirunga cya Bisoke, անգլերեն Mount Bisoke.ստրատոհրաբուխ Արևելյան Աֆրիկայում, **Մեծ ռիֆտային հովտի** արևմտյան ճյուղի կենտրոնում՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության և Ռուանդայի սահմանագլխին: Լեռն ունի համաչափ ձև ու շրջապատված է 8 հրաբխային կոներով: Բիսոկեի հյուսիսարևելյան և հարավարևմտյան լանջերը ծածկված են հրաբխային բլուրներով: Խառնարանը զբաղված է շուրջ 450 մ տրամագիծ ունեցող լճով: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 711 մ:
Հայտնի է նաև *Վիսոկե* անվամբ:

ԲՈԱ ՎԻՇՏԱ - պորտուգալերեն Ilha da Boa Vista. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում, մեծությամբ երրորդը **Կանաչ Հրվանդանի կղզեխմբում**: Կղզու եզրակետերն են հյուսիսայինը՝ Սոլը, արևմտյանը՝ Վարանդինյան, հարավայինը՝ Տարաֆուն, արևելյանը՝ Կառետուն: Հայտնի է իր սպիտակ ավազե լողափերով և ավազաբլուրներով, որտեղ հանդիպում են արմավենիների պուրակներ: Այստեղ կան սակավաջուր գետակներ ու ջրահոսքեր՝ Ռաբիլ, Նորտի, Ֆոնտի և այլն: Մակերեսը՝ 620 կմ^2: Երկարությունը՝ 31 կմ, լայնությունը՝ 29 կմ: Բարձր կետը՝ Իստանսյա լեռ 387 մ:
Անվանումը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է *Գեղեցիկ տեսարան*:

ԲՈԴԵԼԵ - ֆրանսերեն Dépression du Bodélé, արաբերեն اكتئـــــابال بوديلـــــي Բոդիլի ալաիքթիաբ. լայնարձակ իջվածք **Սահարա** անապատի արևելքում՝ Չադի հյուսիս-արևմտյան Բորկու շրջանում: Հյուսիսից եզերված է **Տիբեստի**, արևելքից՝ **Էնեդի** սարավանդներով: Մակերեսը՝ շուրջ 35 000 կմ^2: Երկարությունը՝ 150 կմ, լայնությունը՝ 150 կմ: Բացարձակ բարձրությունը՝ 151 մ (հյուսիսարևելյան մասում):

ԲՈՅՈՄԱ - ֆրանսերեն Chutes Boyoma.շուրջ 150 կմ երկարությամբ ձգվող, ութ սանդղավանդներից բաղկացած քարվաստների համակարգ **Կոնգոյի** Լուալաբե վտակի վրա, Ուբունդու և Կիսանգանի քաղաքների միջև: Աշխարհի ամենաջրառատ ջրվեժներից մեկը: Ակունքի բարձրությունը՝ 386 մ: Անկման բարձրությունը՝ 61 մ: Միջին լայնությունը՝ 1 372 մ: Ջրի ծախսը՝ 16 990 մ^3/վրկ-51 933 մ^3/վրկ:
Հայտնի է նաև Սթենլի ջրվեժներ, Վագենիա, Նգալիեմա անուններով:
Բոյոմա անվանումը տեղացիների լեզվից թարգմանաբար նշանակում է *անկում*:

ԲՈՆՆԻԻ ԾՈՑ - անգլերեն Bight of Biafra, ֆրանսերեն Golfe du Biafra, իսպաներեն Golfo de Biafra. Ատլանտյան օվկիանոսի ծոց, **Գվինեական ծոցի** մասը: Տարածվում է **Նիգերի** գետաբերանից մինչև Լոպես (Գաբոն) հրվանդանը: Ծոցը ողողում է Նիգերիայի, Կամերունի, Հասարակածային Գվինեայի ու Գաբոնի ափերը: Խոշոր կղզիներն են՝ **Բիոկոն**, **Պրինսիպին**, Բոմ Բոմը և այլն: Ծոցն են թափվում **Սանագա**, Օգոուե, Վուրի, Կրոս, Լոկունջե, Մբինի, Մբեյ գետերը: Առավելագույն երկարությունը՝ 300 կմ, առավելագույն լայնությունը՝ 600 կմ:
Հաճախ ծոցի արևելյան մասն անվանվում է Կամերունի ծոց:
Ծոցը նախկինում հայտնի էր Բիաֆրա անվամբ:
Անվանումը 1972 թ-ից ստացել է ծոցի հյուսիսարևմտյան ափին տեղակայված *Բոնի* քաղաքից:

ԲՈՒԱՀԻԹ - ամհարերեն **ՌՅՔԻ ԹՐԱՐ** Բուայիթի թրարա. երկգագաթանի լեռ **Սըմեն** լեռներում՝ Եթովպիայում:Գագաթներն են՝ Բուահիթը 4 437 մ (800 մ), Ամբա Ֆարիթը 4 270 մ (2 061 մ) ու Ինաթիեն 4 070 մ (500 մ):
Հայտնի է նաև *Բվահիթ*, *Բահիթ*, *Բուիհիաթ* անուններով:

ԲՈՒՐԻ - տիգրինյա **ቦርኒ ቡሪ** քերինի բուրի, արաբերեն ورى جـبـبـهــزيرة ش Ծբիհի Ջազիրաթ Բուրի, անգլերեն Buri Peninsula. թերակղզի Աֆրիկայի արևելքում, Էրիթրեայի կենտրոնում, Կարմիր ծովի հարավարևելյան մասում: Արևմուտքից եզերված է Ձուլա, արևելքից՝ Հաուակիլ ծոցերով, իսկ հյուսիսից և հյուսիսարևելքից՝ Մասաուա նեղուցով անջատված է **Դահլակ** կղզեխմբից: Մակերեսը ցածրադիր է,

հյուսիսային և ծայր հարավային մասերում կան մի շարք հրաբխային բլուրներ: Երկարությունը՝ 50 կմ, լայնությունը՝ 20-35 կմ:

Գ

ԳԱԲԵՍ - արաբերեն قـــچـــابس خليج Խալիջ Ղաբիս, լատիներեն Syrtis Minor. Միջերկրական ծովի ծոց Աֆրիկայի հյուսիսային ափերի մոտ, Թունիսի արևելքում, **Համամեթ** ծոցից հարավ: Ծոցի մուտքի հարավային մասում է գտնվում **Ջերբա** կղզին, հյուսիսայինում՝ Կերկենա կղզիները: Ավանդաբար համարվում է Լիբիական ծովի ծայր արևմտյան մասը: Երկարությունը՝ ավելի քան 100 կմ, լայնությունը՝ ավելի քան 100 կմ: Առավելագույն խորությունը՝ շուրջ 50 մ:
Նախկինում հայտնի էր նաև *Փոքր Սիրթ* անվամբ:
Այժմյան անվանումը ստացել է ծոցի ափին գտնվող *Գաբես* քաղաքից:

ԳԱԼԻՏ - Աֆրիկայի հյուսիսային կղզային ծայրակետը՝ 37° 33′ 39,40″ N, 08° 57′ 15,97″ E կոորդինատներով: Գտնվում է Գալիտ ժայռոտ, հրաբխային կղզեխմբի արևելյան մասում՝ Շների կղզիների մասը կազմող անանուն ժայռի, ծայր հյուսիսային եզրին:

ԳԱՀԻՆԳԱ - ֆրանսերեն Gahinga, կինյառուանդա Ikirunga cya Gahinga, անգլերեն Mount Gahinga, սվահիլի Mlima Gahinga. հանգած հրաբուխ Վիրունգա լեռներում՝ Ռուանդայի ու Ուգանդայի սահմանագլխին: Գտնվում է **Մուհաբուրա** և **Սաբյինյո** հրաբուխների միջև: Գագաթն ունի շուրջ 180 մ լայնությամբ ճահճացած կալդերա: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 474 մ, հարաբերականը՝ 2 821 մ:
Հայտնի է նաև Մգահինգա անունով, որը ռուֆումբիրա լեզվից թարգմանաբար նշանակում է *Փոքր քարակույտ* :

ԳԱՄԲԻԱ - ֆրանսերեն Gambie, անգլերեն Gambia River, պորտուգալերեն Rio Gâmbia. գետ Արևմտյան Աֆրիկայում՝ Գվինեայում, Սենեգալում ու Գամբիայում: Սկիզբ է առնում Գվինեայից՝ **Ֆուտա Ջալոն** սարավանդից, ապա հոսելով հյուսիսային ուղղությամբ կտրում անցնում է Սենեգալի սահմանը, որտեղ Մակո բնակավայրի մոտ փոխում իր հոսքի ուղղությունը արևմտյանի ու կազմելով շուրջ 20-30 կմ լայնությամբ էստուար, թափվում Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ Կուլունտուն, Լիտին, Բադիարան, Նիերի Կոն, Նիոկոլո Կոբան և այլն: Երկարությունը՝ 1 130 կմ: Ավազանը՝ 77 054 կմ^2: Ջրի ծախսը՝ 149 -2 000 մ^3/վրկ:
Հավանական է, որ Գամբիա անվան հիմքում ընկած է բնիկների լեզվի gambu *գետ* բառը:

Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է պորտուգալերեն լեզվի աղավաղված câmbio *առևտուր* կամ *փոխանակում* բառից:

ԳԼՈՐՅՈԶ - ֆրանսերեն Îles Glorieuses. 5 փոքրիկ անմարդաբնակ կղզիներ **Կոմորյան կղզեխմբում՝** Հնդկական օվկիանոսում:Մակերեսը՝ 7 կմ^2: Առավելագույն բարձրությունը՝ 12 մ:
Առաջին եվրոպացին ով 1878 թ-ին հայտնաբերեց կղզիները՝ ֆրանսիացի Իպոլիտ Կալտոնն է, որը 1880 թ-ին նրանց անվանեց *Փառավոր կղզիներ* ի պատիվ 1830 թ. հեղափոխության:

ԳՈԹՅՈ - ֆրանսերեն Chutes Gauthiot, արաբերեն شلالات غوتيو Շիլալաթ Ղյություն. ջրվեժներ Չադի հարավում, **Բենուեի** վտակ՝ Մայո Կեբիի և Լոգոնեի գետային համակարգերի հատման տեղում: Անկման բարձրությունը՝ 18 մ: Ակունքի բարձրությունը՝ 266 մ:
Ջրվեժները հայտնաբերվել են 1903 թ-ին ֆրանսիացի կապիտան Ֆորի կողմից և ի հարգանս Կոմերցիոն Աշխարհագրության Միության քարտուղար *Գոթյոյի* , ստացել նրա անունը:

ԳՈՄԵՐԱ - իսպաներեն La Gomera. կղզի Ատլանտյան օվկիանոսում, **Կանարյան կղզեխմբի** կազմում: Մակերեսը՝ 369,76 կմ^2: Երկարությունը՝ 23,7 կմ, լայնությունը՝ 21,3 կմ: Բարձր կետը՝ Գարախոնայ լեռ (1 487 մ):
Հայտնի էր նաև *Յունոնիա* և *Գոմարա* անուններով:
Մեծ հավանականությամբ կղզին իր այժմյան անունը ստացել է բերբերական *գոմարա* ցեղից:

ԳՎԱՐԴԱՖՈՒՅ - սոմալիերեն Marinka Gardafuul, անգլերեն Guardafui Channel. Հնդկական օվկիանոսի նեղուց, Սոմալիի՝ **Գվարդաֆույ** հրվանդանի և **Սոկոտրա** կղզու միջև: Նեղուցը կապում է Ադենի ծոցը Հնդկական օվկիանոսի հետ: Կղզիներն են՝ Աբդ էլ Քուրի, Դարսա, Սամհա և այլն: Լայնությունը՝ 234,05 կմ (Սոմալի-Սոկոտրա), 97,6 կմ (Սոմալի Աբդ էլ Քուրի): Խորությունը՝ մինչև 2 500 մ:
Հայտնի է նաև Ռաս Հաֆունի, Ռաս Ասիր-Սոկոտրա, Գվարդաֆույ հրվանդանի, Գվարդաֆույ Սոկոտրայի ջրանցք, Գվարդաֆույի ջրանցք, Գվարդաֆույի հրվանդանի ջրանցք, Սոկոտրա նեղուց և այլ անուններով:
Այժմյան անվանումը ստացել է ***Գվարդաֆույ*** հրվանդանից:

ԳՎԱՐԴԱՖՈՒՅ - սոմալիերեն Raas Caseyr / Gees Gardafuul, արաբերեն عسير راس Ռաս Ասիր, հունարեն Αρώματα, լատիներեն Aromata promontorium. հրվանդան Աֆրիկայի արևելքում, Աֆրիկյան եղջյուրի հյուսիսարևելյան ծայրամասում: Տեղակայված է Սոմալիում, Ադենի ծոցի մուտքի մոտ:
Հայտնի էր նաև Արոմատա անունով:
Այժմ հայտնի է նաև Ասիր և Գարդաֆույ անուններով:
Գվարդաֆույ անվանումը ստացել է ուշ միջնադարում, որտեղ guarda fui անունը հին իտալերենից թարգմանաբար նշանակում է *հայացք* և *փախուստ*, որն ակնարկում է հրվանդանի վտանգավորությունը:

ԳՎԻՆԵԱԿԱՆ ԾՈՑ - անգլերեն Gulf of Guinea, ֆրանսերեն Golfe de Guinée, իսպաներեն Golfo de Guinea, պորտուգալերեն Golfo da Guiné. Գվինեական ափը ողողող Ատլանտյան օվկիանոսի ծոց, Հասարակածային Աֆրիկայի ափերի մոտ, հյուսիսարևմուտքում՝ Պալմաս (Լիբերիա) և հարավարևելքում՝ Պալմեյրինյաշ (Անգոլա) հրվանդաների միջև: Գվինեական ծոցի բաղկացուցիչ մաս են կազմում **Կամերունյան գծի** կղզիներով իրարից անջատված՝ հյուսիսում **Բենին**, իսկ արևելքում՝ Բիաֆրա ծոցերը: Խոշոր կղզիներն են՝ **Բիոկո**, **Սան Թոմե**, **Պրինսիպի**, **Աննոբոն** և այլն: Ծոցն են թափվում **Նիգեր**, **Վոլտա**, **Կոմոե**, Սասանդրա, Կավալլի, Կրոս, Մոնո, Օգովե և այլ գետեր:Գվինեական ծոցը կարող է համարվել «աշխարհի կենտրոն», քանի որ այստեղ է գտնվում հասարակածի և զրոյական միջօրեականի հատման կետը: Մակերեսը շուրջ 2 350 000 կմ^2: Առավելագույն խորությունը՝ 6 363 մ: Աղիությունը՝ 34-35 ‰, գետաբերաններում՝ 20-30 ‰:
Անվանումը ստացել է իր կողմից ողողվող *Գվինեական* ափից:

ԳՐԱՆ ԿԱՆԱՐԻԱ - իսպաներեն Gran Canaria. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում, մեծությամբ երրորդը **Կանարյան կղզեխմբում**: Ունի շուրջ 50 կմ տրամագծով կլորավուն տեսք: Մակերեսը՝ 1 560,1 կմ^2: Ափագիծը՝ 236 կմ: Բարձր կետը՝ Նիեվես հրաբուխ (1 956 մ):
Հայտնի էր նաև *Տամարան* և *Կանարիա* անուններով:
Gran Canaria անունը թարգմանաբար նշանակում է Մեծ Կանարիա, որտեղ անվան երկրորդ մասը հավանաբար առաջացել է կղզիների լատիներեն Insula Canaria *Շների կղզի* անվանումից:

ԳՈՒԳՈՒ - ամհարերեն **ጉጉ ተራራ** Գուգու թրարա. լեռնագագաթ Գուգու լեռներում՝ Եթովպիայի կենտրոնական մասում, Օռոմիա մարզի՝ Արսի զոնայում: Հանդիսանում է **Ավաշ** և **Ուեբի Շեբելե** գետերի ջրահավաք ավազանների խզվածքի մասը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 623 մ:

ԳՈՒՆԱ - ամհարերեն **ጉና ተራራ** Գունա թրարա. լեռնագագաթ Եթովպիայում, Հարավային Գոնդար զոնայում: Հանդիսանում է Աբայ և Տեկեզե գետերի ջրահավաք ավազանների խզվածքի մասը: Լեռան լանջերից են սկիզբ առնում Գումարա, Ռիբ ու այլ գետեր, որոնք թափվում են **Թանա** լիճը, ինչպես նաև Տեկեզե գետի վտակներ՝ Յիկալոն, Մեբելան, Գոլեյեն և այլն: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 120 մ, հարաբերականը՝ 1 510 մ:

ԳՈՒՋԻ - ամհարերեն **ጉጂ ተራራ** Գուաջի թրարա. լեռ Եթովպիայում, **Աբայա** լճից արևմուտք, Արբա Մինչ քաղաքից 25 կմ հյուսիս-արևմուտք: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 203 մ, հարաբերականը՝ 2 013 մ:
Հայտնի է նաև *Գուղի* անվամբ:

ԳՈՒՐԱՋ - ամհարերեն **ጉርጅ ተራራ** Գուրիջու թրարա. լեռնազանգված **Մեծ ռիֆտային հովտում՝** Եթովպիայի կենտրոնական մասում: Հանդիսանում է **Ավաշ** և Օմո գետերի ջրահավաք ավազանների խզվածքի մասը: Լեռան հարավային լանջից է սկիզբ առնում Բիլատե, իսկ արևելյան լանջից՝ Ջիդաբո գետերը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 719 մ:
Հայտնի է նաև *Գուրաղ* և *Աստա Դեգա* անուններով:
Այժմյան անվանումը ստացել է Եթովպիայի հարավ-արևմուտքում բնակվող *գուրաջ* ժողովրդի անունից:

Դ

ԴԱՀԼԱԿ - տիգրինյա **ዳህላክ** Դահիլաքի, արաբերեն دهلك أرخبيـــل Արախփիլ Դահլակա, անգլերեն Dahlak Archipelago.կղզեխումբ Կարմիր ծովում, Մասսաուա քաղաքից 50 կմ հարավ-արևելք: Մայրցամաքից բաժանված են Մասսաուա նեղուցով: Կղզեխումբը բաղկացած է երկու խոշոր և 124 փոքր կղզիներից՝ Դահլակ, Դհուլադհիյա, Դիսսեյ, Դոհուլ, Էրվա, Հարաթ, Հարմիլ, Իսրա Տու, Նահալեջ, Նորա, Շումմա և այլն: Մակերեսը՝ 900 կմ^2:
Անվանումն արաբերենից թարգմանաբար նշանակում է *Դժոխքի դարպաս*:

ԴԱՆԱՔԻԼ - ամհարերեն **የዳንኪል** Եդանիկըլի. համանուն անապատի մասը կազմող իջվածք **Աֆարի գոգավորության** հյուսիսային մասում, Եթովպիայի և Էրիթրեայի

սահմանագլխին: Իջվածքի տարածքում են գտնվում հանգած՝ Այալու (2 145 մ), Դալոլ (- 48 մ) և գործող Էրթա Ալե (613 մ) հրաբուխները, ինչպես նաև **Ավաշ** գետի գետաբերանը: Երկարությունը՝ 200 կմ, լայնությունը՝ 50 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ -125 մ:
Հայտնի է նաև *Աֆար* և *Դալոլ* անուններով:
Անվանվել է աֆար ժողովրդի անվան արաբերեն *դանաքիլ* անունից:

ԴԱՆԱՔԻԼ - ամհարերեն **የዳንክሊል በረሃ** Եդանիկըլի բերեհա, անգլերեն Danakil Desert, արաբերեն صحراء الدناكل Սուխրա ուլ Դանաքիլ. աղի անապատ Աֆրիկայի հյուսիսարևելքում, **Աֆարի գոգավորությունում՝** Եթովպիայի հյուսիսում ու Էրիթրեայի հարավ-արևելքում: Անապատի հյուսիսարևմտյան մասում են գտնվում համանուն իջվածքը, Այալու (2 145 մ), Դալոլ (- 48 մ), Աֆդերա (1 295 մ) և Ասավիո (1 200 մ) հանգած, ինչպես նաև Էրթա Ալե (613 մ) ու Դաբբախու (1 442 մ) գործող հրաբուխները, **Ավաշ** գետի գետաբերանը: Մակերեսը՝ 136 956 կմ^2: Բարձրությունը՝ 125 մ - 2 145 մ:
Անվանվել է աֆար ժողովրդի անվան արաբերեն *դանաքիլ* անունից:

ԴԱՆԱՔԻԼ - ամհարերեն **የዳንክሊል አግድ** Եդանիքիլիլի էղիդի, արաբերեն جبال الدناكل - Դանաքիլ, անգլերեն Danakil Alps, ֆրանսերեն Bloc Danakil. լեռնահամակարգ Եթովպիայի հյուսիս-արևելքում՝ Էրիթրեայի հարավում ու Ջիբութիի հյուսիսում: Տեղակայված է Կարմիր ծովի ափի երկայնքով, Թաջուրա ու Զուլա ծովախորշերի միջև: Երկարությունը՝ ավելի քան 300 կմ: Բարձր գագաթը՝ Նաբրո(Նաբեռ) հրաբուխ (2 218 մ):
Անվանվել է աֆար ժողովրդի արաբերեն *դանաքիլ* անունից:

ԴԱՐՖՈՒՐ - արաբերեն دارفور Դարֆըր, անգլերեն Darfur, ֆրանսերեն Darfour. սարավանդ Սուդանի արևմտյան մասում, Չադ լճի գոգավորության և **Սպիտակ Նեղոսի** հովտի միջև: Միջին բարձրությունները՝ 1 000-1 500 մ: Կենտրոնական մասում է գտնվում, սարավանդի ամենաբարձր կետը՝ **Մառա** (3 088 մ) հանգած հրաբուխը:
Հայտնի էր նաև *Դարդաջու*,*Դարթունջուր* անուններով:
Դարֆուր անունը արաբերենից թարգմանաբար նշանակում է *Ֆուրի* (ժողովրդի) *տուն:*
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն արաբերենից թարգմանաբար նշանակում է *Փռի երկրի տուն*:

ԴՐԱԱ - արաբերեն درعة وادي Ուադի Դերաա, բերբերերեն ⵓⴷⵔⴰⵄ ⵏ ⵜⵓⵎ ասիֆ ն դրա, ֆրանսերեն Drâa, իսպաներեն Río Draa. գետ Աֆրիկայի հյուսիս-արևմուտքում, Մարոկկոյում ու Ալժիրում: Նախկինում կազմավորվում էր Բարձր Ատլասից՝ Դադես և Ասիֆ Իմինի գետերի միախառնումից, սակայն Էլ Մանսուր էդ Դահաբի ջրամբարի կառուցումից հետո, այն սկիզբ է առնում այստեղից: Հոսում է հարավ-արևելյան ուղղությամբ մինչև Թագունիտ քաղաքը, որտեղ կտրուկ փոխելով իր ուղղությունը հարավ-արևմտյանի Թան Թան քաղաքից 26 կմ հյուսիս թափվում Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ Էլ Ման, Զեմուլը, Տուֆասուրը և այլն: Երկարությունը՝ 1 150 կմ: Ավազանը՝ շուրջ 40 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 24,3 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 104 մ:
Հայտնի է նաև *Ուեդ Դրա* անունով:
Անվանումը բերբերերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *վահան* , *զրահ*:

Մեկ այլ վարկածի համաձայն անունն ունի արաբական ծագում և թարգմանաբար նշանակում է *ձեռքեր*:

ԴՈՒՆԳՈՒՆԱԲ - արաբերեն نقـــــج ـــابد خليِ Խալիջ Դունաքնաբ, անգլերեն Dungonab Bay. Կարմիր ծովի ծովախորշ, Սուդանի հյուսիսարևելյան մասում: Ծոցի կենտրոնում է գտնվում հռչակավոր Ռավայա մարջանե խութը: Մակերեսը՝ 1 995,24կմ^2 (ջրա- (հավաքը՝ 4 011,36 կմ^2): Առավելագույն երկարությունը՝ 33 կմ: Առավելագույն լայ- նությունը՝ 12 կմ:
Ծոցը հայտնի է նաև *Դունգոնաբ, Դոնգոնաբ* անուններով:
Անվանումը ստացել է խորշի հյուսիսարևմտյան ափին գտնվող *Դունգունաբ* քաղաքից:

Ե

ԵԹՈՎՊԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ - ամհարերեն ***የኢትዮጵያ ደጋማ ቦታዎች*** Եյթիոփիյա դեգամա բոթավոչի, արաբերեն إثـيوبيـــــــات ـــا مرتفع Մուրտաֆայաթ Իթյուբիան, ան- գլերեն Ethiopian Highlands, սվահիլի Milima ya Ethiopia, ֆրանսերեն Plateaux d'Éthiopie. լեռնահամակարգ Աֆրիկայի հյուսիս-արևելքում՝ Եթովպիայում, Էրիթ- րեայում, Ջիբութիում, Սոմալիում, Քենիայում ու Հարավային Սուդանում: Բարձրա- վանդակի արևելյան և հարավային եզրերը զառիվեր են, իսկ արևմտյանը՝ սանդ- ղաձև ու կտրտված **Կապույտ Նեղոսի** և նրա վտակների կիրճերով: Մակերեսը՝ 984 253 կմ^2: Երկարությունը՝ 2 372 կմ, լայնությունը՝ 2 272 կմ: Միջին բարձրությունը 2 000 -3 000 մ: Բարձր կետը՝ **Ռաս Դաշեն** լեռ (4 533 մ, Եթովպիայում): Հայտնի էր նաև *Աբեշտանի բարձրավանդակ* անվամբ:

ԵՎՐՈՊԱ - ֆրանսերեն Île Europa.կղզի **Էպարսե** կղզիների կազմում, **Մոզամբիկի նեղուցի** հարավային մասում, Աֆրիկայի ու **Մադագասկար** կղզու միջև: Կղզին շրջապատված է բուստային լողափերով ու առափնյա խութերով: Մակերեսը՝ 28 կմ^2: Երկարությունը՝ 7 կմ, լայնությունը՝ 6 կմ: Ափագիծը՝ 31,2 կմ: Առավելագույն բարձրությունը՝7մ:
Անվանումը ստացել է 1774 թ. դեկտեմբերի 24-ին կղզի ժամանած բրիտանական *Եվրոպա* նավից:

Զ

ԶԱՄԲԵԶԻ - անգլերեն Zambezi, պորտուգալերեն Rio Zambeze, ֆրանսերեն Zambèze, տսվանա Noka ya Zambezi, չևա (նյանջա) Mtsinje wa Zambezi. գետ Հա- րավային Աֆրիկայում՝ Անգոլայում, Նամիբիայում, Բոտսվանայում, Զամբիայում, Զիմբաբվեում ու Մոզամբիկում: Ակունքը գտնվում է Զամբիայի հյուսիս-արևմուտ- քում՝ Սև ճահիճների շրջանում, անտառապատ բլուրների միջև:Հոսելով շուրջ 240 կմ հարավ-արևմուտք, ապա դեպի հարավ, գետն իր մեջ է ընդունում բազմաթիվ վտակներ՝ **Կաֆուե**, Լվենա, **Լուանգվա**, Լումբալա, Մակոնդո, Կաբոմպո, Լունգվե- բունգու, Լուանգինգա և այլն: Սենանգա բնակավայրից քիչ հարավ Զամբեզին փոխում է իր հոսքը հարավարևելյանի ու շարունակելով հոսքը, արևելքից ընդու- նում բազմաթիվ մանր վտակներ՝ Կակենգե, Լումբե, Նջոկո, Լուսու և այլն: Երկա- րությունը՝ 2 574 կմ: Ավազանը՝ 1 570 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 18 600 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 500 մ:

Նախկինում հայտնի էր *Ռիո դոս Բոն Սինաիս*, *Ռիո Կուամա*, *Ռիո դի Սենա*, *Զեմբե-ռե*, *Լիամբի*, *Լուամբեջի*, *Լուամբեսի*, *Ամբեզի*, *Օջիմբեսի* և այլ անուններով:
Զամբեզի անվանումը տեղաբնիկների լեզվով թարգմանաբար նշանակում է *Մեծ գետ* և հավանաբար անվան հիմքում ընկած է գետի ակունքների մոտ բնակվող բիսա ժողովրդի՝ M'biza ցեղախմբի անունը:
Մեկ այլ վարկածի համաձայն անվան հիմքում ընկած է բանտու լեզվի mbege / mbeze *ձուկ* բառը՝ *Ձկան գետ*:

ԶԱՆԶԻԲԱՐ - սվահիլի Mfereji Zanzibar, անգլերեն Zanzibar Channel. Հնդկական օվկիանոսի նեղուց Աֆրիկայի հարավարևելյան մասում: Անջատում է Տանզանիայի Պվանի նահանգը **Ունգուջա** (նախկինում՝ Զանզիբար) կղզուց: Նեղուցն են թափվում Մսանգասի, Վամի, Ռուվու, Մլիգասի և այլ գետեր: Առավելագույն երկարությունը՝ 125 կմ, լայնությունը՝ 28-50 կմ:
Անվանումը ստացել է այժմյան **Ունգուջա**, նախկինում *Զանզիբար* կղզուց:

ԶԱՆԶԻԲԱՐ - սվահիլի Funguvisiwa la Zanzibar, անգլերեն Zanzibar Archipelago, արաբերեն زنجبـــار أرخبيـــل Արիխփիլ Զունջիբար. իր մեջ շուրջ 75 կղզիներ ընդգրկող կղզեխումբ Հնդկական օվկիանոսում, Աֆրիկայի հարավարևելյան մասում: Կղզեխմբի հիմքն են հանդիսանում երկու խոշոր՝ **Ունգուջա** (Զանզիբար) և **Պեմբա** կղզիները: Ընդհանուր մակերեսը՝ 2 654 կմ^2: Բարձր կետը՝ Մասինգինի բլուր (119 մ):
Անվանումն առաջացել է արաբերեն زنجبـــار Զանջիբար անունից, որն իր հերթին ծագում է պարսկերեն زنگبـــار Զանգբար՝ زنگ Զանգ *Սև* և بـار, բար *ափ* բառերից, որն ի վերջո նշանակում է *Սևամորթների ափ*:

Է

ԷԴՀԱՆ ՈՒԲԱՐԻ - արաբերեն أوبـاري أدهان Էդհան Ուբարի.ավազային անապատ **Սահարայում՝** Լիբիայի արևմուտքում: Ռելիեֆը հիմնականում բլրային է՝ հանդիպում են մինչև 200 մ հարաբերական բարձրությամբ առանձնացված ավազե բլուրներ: Անապատի ցածրադիր վայրերում են տեղակայված աղուտներ և չորացած լճեր, եզրերում՝ փոքր օազիսներ, իսկ հարավարևելքում՝ Գաբերուն բնակավայրի մոտ են գտնվում Մանդարա լճերը: Մակերեսը՝ 62 000 կմ^2: Առավելագույն բարձրությունը՝ 530 մ:
Հայտնի է նաև Ուբարի անապատ, Իդեհան Ուբարի, Իդեհան Աուբարի, Ուբարի էրգ անուններով:
Այժմյան անվանումը ստացել է անապատի հարավարևելյան մասում գտնվող *Ուբարի* քաղաքից:

ԷԴՈՒԱՐԴ - ֆրանսերեն Lac Édouard, սվահիլի Ziwa Edward, անգլերեն Lake Edward.լիճ Կենտրոնական Աֆրիկայում, **Մեծ ռիֆտային հովտում՝** Ուգանդայի ու Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության սահմանագլխին: Լիճն են թափվում Նիամուգասանի, Իշաշա, Ռուտսուրու, Ռուինդի և այլ գետեր, արտահոսում՝ Սեմլիկին: Մակերեսը՝ 2 325 կմ^2: Երկարությունը՝ 77 կմ, լայնությունը՝ 40 կմ: Ծավալը՝ 39,5 կմ^3: Ավազանի մակերեսը՝ 12 096 կմ^2: Միջին խորությունը՝ 17 մ, առավելագույնը՝ 112 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 913 մ:
Որոշ ժամանակ լիճը կրում էր Իդի Ամին Դադա անվանումը, որը ստացել էր Ուգանդայի բռնակալ Իդի Ամինի պատվին:

Հայտնի է նաև Ռուտանզիգե անվամբ:
Լիճն իր անունը 1888 թ-ին ստացել է Հ. Մ. Սթենլի կողմից, Վիկտորիա թագուհու ավագ որդի՝ Ուելսի արքայազն, հետագայում *Էդուարդ VII թագավորի* պատվին:

ԷԼ ՀԱՄՐԱ - արաբերեն الحمـادةالحمراء էլ Հիմադաթ էլ Համրա. բարձրադիր քարքարոտ սարահարթ **Սահարա** անապատի հյուսիսային մասում՝ Լիբիայում: Սարավանդը կազմված է կրաքարերից՝ հարթ միջագետքերը մասնատված են խորը ուադիների (չոր հուների) հովիտներով: Էլ Համրայի հյուսիսային բարձրացված ծայրը կտրվում է դեպի հարթավայր, Նեֆուս (719 մ) զառիվեր սանդղավանդով: Հարավարևմուտքում սարավանդը վեր է խոյանում **Էդհան Ուբարի** ավազե անապատի նկատմամբ: Մակերեսը՝ մոտ 84 000 կմ^2: Երկարությունը՝ 440 կմ, լայնությունը՝ 190 կմ: Առավելագույն բարձրությունը՝ 825 մ:
Հայտնի է նաև Համադա էլ Համրա անվամբ:
Այժմյան անվանումն արաբերենից թարգմանաբար նշանակում է *Կարմիր անապատ*:

ԷԼ ՋԵՐԻԴ - արաբերեն شـطـالجرى Շատ ալ Ջարիդ, ֆրանսերեն Chott el-Jérid. աղի լիճ և աղուտային իջվածք Թունիսի կենտրոնական մասում: Մակերեսը՝ 5 360-7 000 կմ^2: Երկարությունը՝ 120-250 կմ, լայնությունը՝ 60-120 կմ: Ջրահավաք ավազանը՝ 10 500 կմ^2: Բարձրությունը ծովի մակարդակից՝10-25մ:
Նախկինում հայտնի էր Տրիտոնիս Լակուս, Տրիտոնիս Պալուս, Սալինարում Լակուս անուններով:
Անվանումն արաբերենից թարգմանաբար նշանակում է *Արմավենու երկրի լճակ* :

ԷԼ ՋՈՒՖ - ֆրանսերեն El Djouf, արաբերեն الجوف էլ Ջոֆու. **Սահարա** անապատի արևմտյան ամենացածրադիր մասը՝ Մավրիտանիայի հյուսիս-արևելքում ու Մալիի հյուսիս-արևմուտքում: Երկարությունը մոտ 900 կմ, լայնությունը՝ 500-600 կմ: Առավելագույն բարձրությունը՝ 325 մ:
Անվանումն արաբերենից թարգմանաբար նշանակում է (*անապատի*) *որովայն* :

ԷԼԳՈՆ - սվահիլի Mlima Elgon, անգլերեն Mount Elgon, մասայերեն Ol Doinyo Ilgoon / Masaba. հանգած վահանաձև հրաբուխ **Արևելաաֆրիկյան** սարահարթում՝ **Վիկտորիա** լճից հյուսիս-արևելք, Ուգանդայի ու Քենիայի սահմանագլխին: Հրաբխային զանգվածի գլխավոր գագաթներն են՝ Վագագայը 4 321 մ, Սուդեկը 4 302 մ, Կոյտոբոսը 4 222 մ, Մուբիյին 4 211 մ, Մասաբան 4 161 մ և Չեմնիրոտը/ Կամելոգոն Պիկը 3 530 մ (1 510 մ): Էլգոնի լանջերին կան չորս հռչակավոր քարանձավներ՝ Նգվարիշան, Մակինջենին, Չեպնյալիլը և Կիտումը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 321 մ, հարաբերականը՝ 4 58 մ:
Հայտնի է նաև *Օլ Հոյնյո Իլգուն* և *Մասաբա* անուններով:
Անվանվել է ժամանակին լեռան հարավային լանջերին գտնվող քարանձավներում բնակվող *Էլգոն* ցեղախմբի անունով:

ԷՄԻ ԿՈՒՍԻ - ֆրանսերեն Emi Koussi, արաբերեն يـي إيمـآوس Էմի Կուսի. գործող հրաբուխ **Տիբեստի** բարձրավանդակի հարավարևմտյան մասում, **Սահարա** անապատի, ինչպես նաև Չադի ամենաբարձր կետը: Հրաբուխն իր կողմից ստեղծած հրաբխային զանգվածի հետ զբաղեցնում է շուրջ 4 600 կմ^2 մակերես: Լեռան գագաթն են պսակում երկու խառնարան, մեկը 12 x 15 կմ տրամագծով, մյուսը՝ 2x3 կմ տրամագծով և 350 մ խորությամբ: Էմի Կուսիի բարձր կետը տեղակայված է հարավային խառնարանի եզրին: Երկու խառնարաններից հարավ գոյացել է ևս

մեկ փոքր խառնարան Էրա Կոհոր անվամբ: Լեռան լանջերին են գտնվում հռչակավոր Յի Եռա ջերմուկները: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 415 մ, հարաբերականը՝ 2 934 մ:

ԷՅԱՍԻ - սվահիլի Ziwa Eyasi, անգլերեն Lake Eyasi. աղի լիճ Աֆրիկայի արևելքում, Տանզանիայի հյուսիսում: Տեղակայված է **Մեծ ռիֆտային հովտի** Սերենգեթի սարավանդից հարավ և Նգորոնգորո խառնարանից հարավ-արևմուտք: Լիճն երկարավուն է՝ ձգվում հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ: Լիճն է թափվում Սիբիտի, Մանյոնգա, Մատետե, Բարայ և այլ գետեր: Մակերեսը՝ 1 050 կմ^2: Երկարությունը՝ 72 կմ, լայնությունը՝ 16 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 029 մ:
Նախկինում հայտնի էր նաև *Նյարասա* և *Հոհենլոհե* անուններով:

ԷՆՆԵԴԻ - ֆրանսերեն Plateau de l'Ennedi, արաբերեն هضبة إنيدي Հադբատու Ինիդի. լեռնազանգված Չադի արևելքում՝ **Սահարա** անապատում, Էրդի սարավանդից հարավ: Իրենից ներկայացնում է մինչև 1 450 մ բարձրությամբ (Բասո լեռ) ավազաքարից կազմված, լեռնային սարավանդ: Այստեղից են սկիզբ առնում՝ Արշեյի, Շիլի, Կորդի, Բակոի, Բադի, Ում Հաջե, Սալա և այլ ջրահոսքերը: Մակերեսը՝ 30 445 կմ^2:

ԷՊԱՐՍԵ - ֆրանսերեն Îles Éparses de l'océan Indien. ավելի քան 20 կղզիներից ու խութերից կազմված հրաբխային կղզեխումբ Հնդկական օվկիանոսում՝ **Մոզամբիկի նեղուցում**, Աֆրիկայի ու **Մադագասկար** կղզու միջև (բացառությամբ **Տրոմլեն** կղզու): Խոշոր կղզիներն են՝ **Եվրոպան**, **Բասաս դա Ինդիան**, **Ժուան դա Նովան**, **Տրոմլենը,** Գրանդ Գլորյոզը, Լիսը և այլն: Մակերեսը՝ 53,19 կմ^2:
Éparses անվանումը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է *Ցրված* :

ԷՏՈՇԱ - անգլերեն Etosha Pan. ցամաքած լիճ, աղուտ Նամիբիայի հյուսիսում, որի տեղում նախկինում գոյություն է ունեցել **Կունենե** գետով սնվող հսկա լիճը: Էտոշան սնուցող գետերն են՝ Էկուման, Օշիգամբոն և Օմուրամբո Օվամբոն:
Մակերեսը՝ 4 760 կմ^2: Երկարությունը՝ 120 կմ, լայնությունը՝ 55 կմ: Բացարձակ բարձրությունը՝ 1 065 մ:
Էտոշա անվանումը օշիվամբո լեզվից թարգմանաբար նշանակում է *Մեծ սպիտակ մակերես* :

Թ

ԹԱԴԵՄԱՅԻԹ - ֆրանսերեն Tademaït. ժայռոտ սարավանդ **Սահարա** անապատում, Ալժիրի կենտրոնական մասում: Սակավ անձրևների ժամանակ այստեղ են կազմավորվում ժամանակավոր ջրահոսքեր՝ Ուեդ Սուֆ, Ուեդ Ին Սոկի, Ուեդ Մյա, Ուեդ Սարեթ և այլն: Մակերեսը՝ մոտ 10 000 կմ^2: Միջին բարձրությունը ծովի մակարդակից՝ 621 մ:
Անվանումը թամաշեկ լեզվից թարգմանաբար նշանակում է *Սատանայի այգի* :

ԹԱՀԱԹ - արաբերեն تاهات Թահաթ. հանգած հրաբուխ **Սահարա** անապատի կենտրոնական մասում, Ալժիրի հարավում, **Ահագգար** բարձրավանդակում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 2 918 մ, հարաբերականը՝ 2 328 մ:

ԹԱՆԱ - ամհարերեն **ጣና ሐይቅ** / **ጓና** Թանա հեյիքի / Ցանա. քաղցրահամ, տեկտոնական լիճ Աֆրիկայում, **Եթովպական բարձրավանդակում՝** Եթովպիայի հյուսիս-արևմուտքում: Լիճն են թափվում մոտ 50 գետեր ու գետակներ, որոնցից խոշորներն են՝ Փոքր Աբայը, Ռեբը, Գումարան և այլն, իսկ արտահոսում է **Կապույտ Նեղոսը**: Թանա լճի վրա կան ավելի քան 20 կղզիներ՝ Թանա կիրկոս,Դագա, Դեք, Մեշրալիա և այլն: Մակերեսը՝ 3 200-3 630 կմ^2: Երկարությունը՝ 84 կմ, լայնությունը՝ 66 կմ: Ծավալը՝ մոտ 27,32 կմ^3: Միջին խորությունը՝ 8 մ, առավելագույնը՝ 15 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 788 մ:
Հայտնի է նաև *Ցանա* և *Դեմբեա* անուններով:

ԹԱՍԻԼԻՆ ԱՋԵՐ - արաբերեն تاسيلي ناجر Թասիլի Նաջիր, ֆրանսերեն Tassili n'Ajjer, թամաշեկ ⵜⴰⵙⵉⵍⵉ ⵏ ⴰⵊⵊⴻⵔ Թասիլին Աջջեր. սարավանդ **Սահարա** անապատում, Ալժիրի հարավարևելյան մասում: Մակերեսը՝ ավելի քան 72 000 կմ^2: Երկարությունը՝ 800 կմ, լայնությունը՝ 60 կմ: Բարձր գագաթը՝ Ազաո լեռ (2 158 մ): Անվան թարգմանությունը թամաշեկ լեզվից բառացի նշանակում է *Գետերի սարավանդ,* որը հավանաբար վերաբերվում է այն ժամանակներին, երբ այստեղի կլիման ավելի խոնավ էր:

ԹԻՍ ԸՍԱԹ - ամհարերեն **ጥስ እሳት** Թիս Ըսաթ. ջրվեժ **Կապույտ Նեղոս** գետի վրա, **Թանա** լճից մոտ 30 կմ հարավ- արևելք՝ Եթովպիայում: Ջրվեժի անկման բարձրությունը տատանվում է 37-45 մ: L այնությունը՝ 100-400 մ-ի սահմաններում:
Հայտնի է նաև *Թիս Աբայ* և *Կապույտ Նեղոսի ջրվեժ* անուններով:
Անվանումն ամհարերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Ծխացող ջուր* :

ԹՅՈՌՆԵՐՍ - անգլերեն Turner's peninsula. 110 կմ երկարությամբ և 1,5-10 կմ լայնությամբ թերակղզի Սիեռա Լեոնեյում: Ձգվում է արևելքից արևմուտք ծովափին զուգահեռ: Տարածքը ցածրադիր է ու ճահճոտ:
Անվանվել է XIX-XX դարերի ամերիկացի պատմաբան և յուրօրինակ «Սահմանի թեորիա» թեզի ստեղծող՝ *Ֆրեդերիկ Ջեկսոն Թյոռների* պատվին:

ԹՈՄՍՈՆԻ ՋՐՎԵԺՆԵՐ - անգլերեն Thomson's Falls. ջրվեժներ **Աբերդերե** լեռնաշղթայից սկիզբ առնող Էվասո Նյիրոյի ձախ վտակ, Էվասո Նարոկի վրա, Քենիայի կենտրոնական մասում: Անկման բարձրությունը՝ 74 մ: Ակունքի բարձրությունը՝ 2 360մ: 1883 թ-ին անվանվել է շոտլանդացի երկրաբան և հետազոտող Ջոզեֆ Թոմսոնի կողմից իր հոր՝ *Ուիլյամ Թոմսոնի* պատվին:

ԹՈՒԲԿԱԼ - արաբերեն توبقال, բերբերերեն ⵜⵓⴱⵇⴰⵍ Թուբքալ, ֆրանսերեն Toubkal. լեռնագագաթ Աֆրիկայի հյուսիս-արևմուտքում, **Ատլաս** լեռների բարձր կետը՝ Մարոկկոյում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 167 մ, հարաբերականը՝ 3 755 մ:
Լեռան անվան հիմքում ընկած է բերբերերեն ⵜⵓⴱⵇⴰⵍ Թուբքալ *Այն ով նայում է բարձրից երկրին* արտահայտությունը:

ԹՈՒԼՈՒ ԴԻՄԹՈՒ - օրոմո Tulluu Diimtuu. բազմագագաթ լեռ Եթովպիայի հարավարևելյան մասում, Սանետի բարձրավանդակում, Բալե լեռներում: Հանդիսանում է Վեյիբ ու **Ուեբի Շեբելե** գետերի ջրահավաք ավազանների խզվածքի մասը: Գագաթներն են՝ Բադան 4 195 մ (1 605 մ), Կական/ Քեչան/ Չիկեն 4 193 մ (1 215 մ),

Վասեման 4 030 (420մ), Կաուան/ Լաջոն 3 830 մ (475 մ), Ֆիլֆոն/ Էնկուոլոն 3 805 մ (770 մ) և Սոմկարուն 3 760 մ (530 մ): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 389 մ, հարաբերականը՝ 2 527 մ: Անվանումը օրոմո լեզվից թարգմանաբար նշանակում է *Կարմիր լեռ* :

ԹՈՒՆԻՍԻ ԾՈՑ - արաբերեն خليـــتـــج ونس Խալիջ Թունիս. Միջերկրական ծովի ծոց Թունիսի հյուսիս-արևելքում: Տարածվում է արևմուտքում Ֆարինա հրվանդանից մինչև Բոն հրվանդանն արևելքում, որով իրարից են բաժանում Թունիսի ծոցը **Համամեթ** ծոցից: Հրվանդանի մոտակայքում են գտնվում Զեմբրետա և Զեմբրա կղզիները: Արևմուտքից ծոցն է թափվում Մեջերդա գետը, հարավից՝ Ուեդ Միլյանը: Ծոցի խորքում է գտնվում անտիկ ժամանակներում ստեղծված Մանդրակի արհեստական ծովախորշը: Երկարությունը՝ 50 կմ, լայնությունը՝ 60 կմ:
Անվանումը ստացել է *Թունիս* երկրից:

Ժ

ԺՈՒԱՆ ԴԱ ՆՈՎԱ - ֆրանսերեն Île Juan de Nova. կղզի **Էպարսե** կղզիների կազմում՝ **Մոզամբիկի նեղուցում**: Մակերեսը՝ 4,8 կմ^2: Առավելագույն երկարությունը՝ 5, 7 կմ, լայնությունը՝ 1,68 կմ: Ափագիծը՝ 13,2 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 12 մ:
Անվանումը ստացել է XV-XVI դարերի պորտուգալացի ծովագնաց ու հետազոտող *Ժուան դա Նովայի* պատվին:

Ի

ԻԳԻԴԻ - արաբերեն – ديڤِي عرق է Արաք Իյինգիդի, ֆրանսերեն Erg Iguidi. ավազային անապատ **Սահարայի** արևմուտքում՝ Ալժիրում ու Մավրիտանիայում: Տեղակայված է հյուսիս-արևմուտքում Դրաա, իսկ հարավ-արևելքում՝ Էլ Էղլաբ սարավանդների միջև: Ավազի կուտակումները հարթ մասերում կազմավորում են արևելյան և հյուսիսարևելյան ուղղությամբ ձգվող նեղ ավազաբլուրներ: Իգիդի անապատին բնորոշ են չորացնող հարմատան քամիները: Գրունտային ջրերը առատ են անապատի հյուսիսարևելյան եզրին, որով էլ բացատրվում է այստեղ բազմաթիվ օազիսների առկայությունը: Երկարությունը՝ 400 կմ, լայնությունը՝ 50-100 կմ: Առավելագույն բարձրությունը՝ 540 մ, միջինը՝ 410 մ:
Հայտնի է նաև *Էրգ Իգիդի* անվամբ:

ԻԵՌՈ - իսպաներեն El Hierro. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում, ամենաարևմտյանը և ամենափոքրը **Կանարյան կղզեխմբում**: Կղզու կենտրոնը զբաղեցնում է բարձրադիր սարավանդը իր Մալպասո գագաթով: Մակերեսը՝ 268,71 կմ^2: Ափագիծը՝ 105,5 կմ: Բարձր կետը՝ Մալպասո լեռ (1 501,762)մ:
Նախկինում հայտնի էր *Կապռարիա*, *Ֆեռռ*, *Էսեռռ* և *Հեռռ* անուններով: Հավանաբար անվան հիմքում ընկած է գուանչի լեզվի herro *ցիստեռն* բառը, որը հետագայում ենթարկվեց հնչյունափոխման և ստացավ այժմյան անվանումը:
Մեկ այլ վարկածի համաձայն, անվանումը գուանչի լեզվից թարգմանաբար նշանակում է *աղբյուր*:

Լ

ԼԱՄԱԴԱՅԱ - անգլերեն Lamadaya, սոմալիերեն Lamadaya, արաբերեն لمداي Լամադայ. ջրվեժ Սոմալիում, Սանաագ մարզի հյուսիսային մասում, Կալ Մադոու լեռների՝ Շիմբիրիս լեռան հյուսիսարևմտյան լանջին: Ակունքի բարձրությունը՝ 2 410 մ:
Անվանումը սոմալիերենից թարգմանաբար նշանակում է *Պետք չէ դիտել*, հաշվի առնելով ջրվեժի ուղղաձիգ կտրուկ թեքությունը:

ԼԱՆՍԱՐՈՏԵ - իսպաներեն Lanzarote. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում՝ ամենահյուսիսայինն ու արևելյանը **Կանարյան կղզեխմբում**: Մակերեսը՝ 845,94 կմ^2: Երկարությունը՝ մոտ 62 կմ, լայնությունը՝ մոտ 26 կմ: Բարձր կետը՝ Չաչե լեռ (670 մ):
Այն հայտնի է որպես Հուր ժայթքող լեռների կղզի:
Նախկինում հայտնի էր Պլուվիալիա, Ինվալե, Տիտերոգակայետ անուններով: Այժմյան անվանումը ստացել է XIV դարում կղզի այցելած ջենովացի առևտրական *Լանցերոտտո Մալոչելոի* պատվին:

ԼԻԲԻԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ - արաբերեն الليبيـــــة الصــحراء ալ Սահրաու ալ Լիբիյաթու. անապատ Աֆրիկայի հյուսիսում, **Սահարայի** հյուսիսարևելյան մասում՝ Լիբիայում, Եգիպտոսում ու Սուդանում: Արևմուտքում սահմանափակված է Էլ Հարուջ էլ Ասվադ լավային զանգվածով, հարավարևելքում՝ **Տիբեստի** բարձրավանդակով և **Էնեդի** սարահարթով, արևելքում՝ **Նեղոսի** հովտով: Անապատի հյուսիսային մասը ցածրադիր է և ծածկված մինչև 512 մ բարձրությամբ ավազաբլուրներով: Որոշ տեղերում գրունտային ջրերի հաշվին գոյացել են օազիսներ: Մակերեսը՝ շուրջ 1 100 000 կմ^2: Երկարությունը՝ մինչև 1100 կմ, լայնությունը՝ շուրջ 1 000 կմ:
Եգիպտոսում հայտնի է Արևմտյան անապատ անվամբ:
Անունը ստացել է *Լիբիա* երկրից:

ԼԻՄՊՈՊՈ - անգլերեն Limpopo, պորտուգալերեն Rio Limpopo, աֆրիկաանս Limpopo, տսվանա Limpopo, վենդա Mulambo wa Limpopo. գետ Հարավային Աֆրիկայում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում, Բոտսվանայում, Զիմբաբվեում ու Մոզամբիկում: Վերին հոսանքում հայտնի է Կրոկոդայլ անվամբ: Սկիզբ է առնում Պրետորիայից հարավ-արևմուտք գտնվող Վիտվատերսրանդ լեռներից՝ շուրջ 1 800 մ բարձրությունից, ապա կտրում անցնում Մոգալի լեռները, Բոտսվանայի սահմանի մոտ, ծովի մակարդակից 872 մ բարձրության վրա ընդունելով Մարիկո վտակը: Լիմպոպո անվամբ հոսում է հյուսիսարևելյան, արևելյան և հարավարևելյան ուղղությամբ ու Մոզամբիկում թափվում Հնդկական օվկիանոս: Վտակներն են՝ Ուոլիֆանթս, Մատլաբաս, Լեֆալալա, Մոգալակվենա, Սանդ, Լուվուվու, Նոտվանե, Շաշե և այլն: Երկարությունը՝ 1 750 կմ: Ավազանը՝ 415 000 կմ^2: Ջրի միջին ծախսը՝ 170 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 800 մ:
Բուրերը այն անվանում են *Կոկորդիլոսի գետ*, վերջիններիս առատության պատճառով:
Լիմպոպո անվանումը հյուսիսային սոթո լեզվից թարգմանաբար նշանակում է *Ուժեղ հորդացող ջրվեժներ*:

ԼԻՎԻՆԳՍՏՈՆԻ ՋՐՎԵԺՆԵՐ - ֆրանսերեն Chutes Livingstone. 32 ջրվեժներից, սահանքներից և հորձանուտներից կազմված խումբ **Կոնգո** գետի ստորին հոսան-

քում, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության և Կոնգոյի Հանրապետության սահմանագլխին: Սկիզբ առնելով ծովի մակարդակից 301 մ բարձրությունից և ձգվելով 350 կմ երկարությամբ, ջրվեժներն ունեն շուրջ 274 մ անկման բարձրություն: Որոշ ջրվեժներ ու սահանքներ ունեն անուններ՝ Ինգա, Իտումսիմա, Ելալա, Զոմբի, Գոմբե և այլն: Լայնությունը՝ 300-800 մ: Ջրի միջին ծախսը՝ 42 000 մ^3/վրկ: Ջրվեժները շոտլանդացի ճանապարհորդ և հետազոտող *Դ. Լիվինգստոնի* պատվին անվանվել է բրիտանացի լրագրող, ճանապարհորդ ու հետազոտող Հենրի Մորտոն Սթենլիի կողմից:

ԼՅՈՒԴԵՐԻՑ - աֆրիկաանս Lüderitzbaai, անգլերեն Lüderitz Bay, գերմաներեն Lüderitzbucht, պորտուգալերեն Angra Pequena. Ատլանտյան օվկիանոսի խորշ՝ Նամիբիայի հարավ-արևմուտքում: Խորշի հյուսիսարևելյան մասում՝ Ագաթ ծովափի դիմաց են գտնվում Պինգվին, Սիլ, Ֆլամինգո ու Շարկ կղզիները: Երկարությունը՝ 7,5-12 կմ, լայնությունը՝ 5 կմ:
Խորշը նախկինում հայտնի էր պորտուգալերեն Angra Pequena *Փոքրիկ ծովախորշ* և Angra de São Christóvão *Սուրբ Քրիստափորի ծովախորշ* անուններով:
Այժմյան անվանումը ստացել է նրա հարավարևելյան ափին գտնվող *Լյուդերից* քաղաքից:

ԼՈՄԱՄԻ - ֆրանսերեն Lomami, կոնգո Lomami. գետ Կենտրոնական Աֆրիկայում՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում, **Կոնգո** գետի ձախ վտակը: Սկիզբ է առնում Կատանգա սարավանդից՝ Կամինա քաղաքից հյուսիս-արևմուտք և հոսելով **Կոնգո** գետին զուգահեռ հյուսիսային ուղղությամբ, Իսանժի բնակավայրի մոտ միախառնվում մայր գետին: Խոշոր օժանդակն է Լուկաշի գետը: Երկարությունը՝ մոտ 1 450 կմ: Ավազանը՝ 95 830 կմ^2: Ջրի ծախսը՝ 837 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 122 մ, գետաբերանինը՝ 371 մ:
Հայտնի էր նաև *Լումամի* անվամբ:

ԼՈՐԻԱՆ - անգլերեն Lorian Swamp, սվահիլի Mto ya Lorian. ջրաճահճային տարածք Արևելյան Աֆրիկայում, Քենիայի արևելքում, Էվասո Նյիրո գետի գետաբերանի շրջանում: Տարածքը սնվում է Էվասո Նյիրո գետից, ինչպես նաև հյուսիս-արևմուտքից և հարավ-արևմուտքից հոսող՝ Աֆվեյ, Միլգիզ, Էլ Նադենի և այլ վադիներից: Էվասո Նյիրոն թափվելով ջրաճահճային տարածք դուրս է գալիս Լաղդերա վադի անվամբ: Գտնվելով չորային գոտում մշտական ճահճային տարածքը կրճատվել է 150 կմ^2-ից մինչև 8 կմ^2-ի: Ընդհանուր մակերեսը՝ 2 310 կմ^2: Երկարությունը՝ 196 կմ, լայնությունը՝ մինչև 25 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ ավելի քան 174 մ:
Հայտնի է նաև *Լորիանի ճահիճ* անվամբ:

ԼՈՖՈԻ - ֆրանսերեն Chutes de la Lofoï. ջրվեժ Կենտրոնական Աֆրիկայում, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում, Կունդելունգու լեռներում, Լուֆիրա գետի վտակ՝ Լոֆոիի վրա: Թափվելով ծովի մակարդակից 384 մ բարձրությունից, նրա անընդհատ անկումն ապահովող ամենաբարձր սանդղավանդի բարձրությունը կազմում է 347 մ:
Հայտնի է նաև *Կալոբա* անվամբ:
Անվանումը ստացել է *Լոֆոի* գետից:

ԼՈՒԱՆԳՎԱ - անգլերեն Luangwa River, պորտուգալերեն Rio Luangwa / Rio Aruângua, ֆրանսերեն Luangwa. գետ Աֆրիկայի հարավում՝ Զամբիայում ու Մոզամբիկում, **Զամբեզի** գետի ձախ վտակը: Սկիզբ է առնում **Նյասա** լճի հյուսիսային ծայրամասից արևմուտք գտնվող լեռների արևմտյան լանջերից: Վերին հոսանքում հոսելով լայնարձակ հովտով հարավ-արևմուտք ուղղությամբ և Զամբիայի արևելյան մասում՝ ստորին հոսանքում կազմելով սահման Մոզամբիկի հետ, Լուանգվա քաղաքի մոտ միախառնվում է մայր գետին: Վտակներն են՝ Լուկուսաշի, Նյիմբա, Մվուվիե, Մսանզարա, Կապամբա, Լուպանդե, Լուկուսուզի, Կավանդամա, Լուվալիզի, Մեսե և այլն: Երկարությունը՝ 806 կմ: Ավազանի մակերեսը՝ 145 700 կմ^2: Ակունքի բարձրությունը՝ 1 496 մ, գետաբերանինը՝ 327 մ:

ԼՈՒԱՊՈՒԼԱ - անգլերեն Luapula River, ֆրանսերեն Lwapula. գետ Զամբիայում ու Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում: Իր հոսքի գրեթե ամբողջ մասով, կազմում է բնական սահման երկու երկրների միջև: Իրար է միացնում **Բանգվեուլու** և **Մվերու** լճերը: Գետի հոսքի վերջին 100 կմ-ը զբաղեցնում են լայնարձակ ճահիճները:Վտակներն են՝ **Զամբեշին**, Լուոմբվան, Լուլիմալան, Մուլեմբոն, Լվելան, Արևելյան ու Արևմտյան Լուբեմբեները, Մաբիլան, Մանսան, Լուոնգոն և այլն: Երկարությունը՝ 560 կմ: Ակունքի բարձրությունը՝ 1 164 մ, գետաբերանինը՝ 922 մ:

Խ

ԽԱՌՆԱՐԱՆԱՅԻՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ - սվահիլի Ngorongoro, անգլերեն Crater Highlands, ֆրանսերեն Massif du Ngorongoro. հրաբխային բարձրավանդակ Աֆրիկայի արևելյան մասում՝ Տանզանիայի հյուսիսում, Նատրոն, Մանյարա և **Էյասի** լճերի միջև: Բարձրավանդակը ձևավորված է 8 հանգած հրաբխային կոներից, իրենց հսկա խառնարաններով, որոնցից խոշորագույնը 22 կմ տրամագծով՝ Նգորոնգորոն է, որի հատակը մասամբ զբաղեցված է Մագադի լճով: Երկարությունը՝ շուրջ 130 կմ, լայնությունը՝ առավելագույնը 50 կմ: Բարձր կետը՝ Լուլմալասին հրաբուխ (3 648 մ):

Կ

ԿԱԳԵՐԱ - կինյառուանդա Akagera, ֆրանսերեն Kagera, անգլերեն Kagera River, սվահիլի Mto Kagera. գետ Արևելյան Աֆրիկայում, Բուրունդիում, Ռուանդայում, Տանզանիայում ու Ուգանդայում: Կազմավորվում է Ռուվուբու ու Նյաբարոնգո գետերի միախառնումից, հոսում հյուսիսային ուղղությամբ լայնարձակ ճահճոտ հովտով, իր մեջ ընդունելով բազմաթիվ լճակների ջրերը, ապա Կաժիտումբա բնակավայրի մոտ թեքվում դեպի արևելք, Ուգանդայում թափվում **Վիկտորիա** լիճը: Վտակներն են՝ Մուվումբան, Կարանգազան, Կամիրամուգեզին և այլն: Երկարությունը՝ 420 կմ (Ռուվուբուի հետ 740 կմ): Ավազանը՝ շուրջ 60 000 կմ^2: Ջրի միջին ծախսը՝ շուրջ 1 500 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 350 մ, գետաբերանինը՝ 1 135 մ:
Նախկինում հայտնի էր նաև *Ալեքսանդրայի Նեղոս* անվամբ:
Ռուանդայում գետը կոչվում է Ակագերա:

ԿԱԼԱՀԱՐԻ - անգլերեն Kalahari Desert, տսվանա Kgalagadi, աֆրիկաանս Kalahari. անապատ Աֆրիկայի հարավում՝ Բոտսվանայում, Հարավաֆրիկյան Հան-

ռապետությունում, Նամիբիայում, Անգոլայում, Զիմբաբվեում ու Զամբիայում: Կալահարիում է գտնվում աշխարհի խոշորագույն **Օկավանգո** գետի ներքին դելտան: Մակերեսը՝ շուրջ 930 000 կմ^2: Երկարությունը՝ 1 780 կմ, լայնությունը՝ 1 450 կմ:
Կալահարի անունն առաջացել է տսվանա լեզվի kgala *մեծ պապակ*, *ծարավ* կամ Kgalagadi՝ *Անջուր վայր* բառերից:
Մեկ այլ վարկածի համաձայն Kgalagadi անունը կազմված է kgala *տարածք* և gadi *մեծ*, *հեռու* բառերից:

ԿԱԼԱՄԲՈ - անգլերեն Kalambo Falls, սվահիլի Maporomoko ya Kalambo. մեկ սանդղավանդից բաղկացած ջրվեժ, Զամբիայի և Տանզանիայի սահմանագլխին, **Տանգանյիկա** լճից 5 կմ հարավ-արևելք: Տեղակայված է շուրջ 1 կմ լայնությամբ և 300 մ խորությամբ կիրճով հոսող Կալամբո գետի վրա: Անկման բարձրությունը՝ 235 մ (մեկ այլ աղբյուրի համաձայն՝ 221 մ): Ակունքի բարձրությունը՝ 427 մ: Լայնությունը՝ 3,6-18 մ:
Հակառակ պաշտոնական Kalambo Falls հոգնակի անվան, այն իրենից ներկայացնում է միաթռիչք ջրվեժ:
Անունը ստացել է *Կալամբո* գետից:

ԿԱԼԱՆԴՈՒԼԱ - պորտուգալերեն Quedas de Kalandula. ջրվեժ Աֆրիկայում, Անգոլայի՝ Մալանժի պրովինցիայում, **Կվանզա** գետի՝ Լուկալա վտակի վրա: Անկման բարձրությունը՝ 105 մ: Երկարությունը՝ 410 մ:
Մինչև 1975 թ. հայտնի էր Բրագանսայի դուքսի ջրվեժ անունով:
Անունը ստացել է *Կալանդուլա* քաղաքից:

ԿԱՄԵՐՈՒՆ - ֆրանսերեն Mont Cameroun, անգլերեն Mount Cameroon, բակվերի Mongo ma Ndemi. երկգագաթանի գործող հրաբխային զանգված Կամերունի հարավարևմտյան մասում, **Գվինեական ծոցի** ափամերձ շրջանում: Զանգվածի գլխավոր գագաթն է Ֆակո լեռը 4 023 մ: Հարաբերական բարձրությունը՝ 3 884 մ:
Նախկինում հայտնի էր նաև *Կամերունյան լեռ*, *Գյոթեբերգ*, *Կամերունգեբիրգե*, *Վիկտորիաբերգ* և այլ անուններով:
Այժմ էլ գործածական են հրաբխի հետևյալ անունները՝ Ֆակո, որը նաև հայտնի է Մոնգո մա Լոբա *Որոտի լեռ* և Մոնգո մա Նդեմի *Աստվածների (վեհության) լեռ* անուններով:
Այժմյան անվանումը ստացել է *Կամերուն* երկրի անունից:

ԿԱՄԵՐՈՒՆՅԱՆ ԳԻԾ - անգլերեն Cameroon line, ֆրանսերեն Ligne du Cameroun, իսպաներեն Cordillera de Camerún, պորտուգալերեն Linha vulcânica dos Camarões. երկրաբանական բեկվածք կամ ռիֆտային գոտի: Ձգվում է հարավ-արևմուտքից հյուսիս-արևելք ուղղությամբ և **Գվինեական ծոցում** կազմված է վեց հրաբխային կղզիներից կամ ստորջրյա լեռներից: Հարավ-արևմուտքից հարավ-արևելք կղզեխմբեր են հանդիսանում՝ Պագալու (**Անոնբոն**), **Սան Թոմե**, **Պրինսիպի**, **Բիոկո**: Երկու ստորջրյա լեռները գտնվում են **Սան Թոմե** ու **Պրինսիպի** և **Պրինսիպի** ու **Բիոկո** կղզիների միջև: Մայրցամաքում Կամերունյան գիծը սկիզբ է առնում **Կամերուն** հրաբխից և ձգվում հյուսիսարևելյան ուղղությամբ, Նիգերիայի և Կամերունի սահմանի երկայնքով մինչև **Չադ** լիճը: Երկարությունը՝ 1 600 կմ, լայնությունը՝ 100 կմ: Բարձր գագաթը՝ **Կամերուն** հրաբուխ (Ֆակո գագաթ 4 023 մ):
Անվանումը ստացել է *Կամերուն* երկրից:

ԿԱՆԱՉ ՀՐՎԱՆԴԱՆ - ֆրանսերեն Presqu'Sle du Cap-Vert. ժայռոտ թերակղզի Արևմտյան Աֆրիկայում՝ Սենեգալում: Իրենից ներկայացնում է մի քանի ավազե պարանոցներով իրար հետ միացված մի քանի հրաբխային ծագման կղզիների շարք: Թերակղզու ափերը ողողում է Ատլանտյան օվկիանոսը: Այստեղ է տեղակայված Աֆրիկայի արևմտյան ծայրակետ՝ **Ալմադի** հրվանդանը: Երկարությունը՝ մոտ 30 կմ, լայնությունը՝ 4,5-15 կմ:
Անվանվել է 1444 թ-ին պորտուգալացի ծովագնաց Դինիշ Դիաշի կողմից, շնորհիվ թերակղզու փարթամ բուսականության, որը խիստ հակադրության մեջ էր շրջակա տարածքների նկատմամբ:

ԿԱՆԱՉ ՀՐՎԱՆԴԱՆԻ ԿՂԶԻՆԵՐ - պորտուգալերեն Ilhas do Cabo Verde. Հրաբխային կղզեխումբ Ատլանտյան օվկիանոսի կենտրոնական մասում, Սենեգալից արևմուտք: Ընդգրկում է ավելի քան 40 խոշոր ու մանր կղզիներ, ժայռեր ու խութեր: Պայմանականորեն բաժանվում են հողմատակ և հողմակողմ խմբերի: Հողմակողմ խումբն ընդգրկում է՝ **Սանտու Անտան**, **Սան Վիսենտի**, **Սան Նիկոլաու**, Սանտա Լուզիա, **Սալ**, **Բոա Վիշտա**, Բրանկու, Ռազու և այլն, հողմատակը՝ **Սանտյագու**, Բռավա, **Ֆոգու**, **Մայոու**, Գրանդի, Սիմա և այլ կղզիներ: Կղզիների մակերեսը բարձրադիր է, համեմված մեծ քանակությամբ բազմաթիվ հանգած ու գործող հրաբուխներով: Ափերը ժայռոտ են և դժվար հասանելի, ինչով էլ բացատրվում է նավահանգիստների սակավությունը: Այստեղ են գտնվում հետևյալ ծովախորշերը՝ Պորտու Գրանդին, Սան Ժորժինը, Սանտա Կլարան և այլն: Մակերեսը՝ 4 033 կմ^2: Ափագիծը՝ 965 կմ: Բարձր կետը՝ **Ֆոգու** հրաբուխ (2 829 մ, **Ֆոգու** կղզում):
Անվանումը ստացել է նրանց դիմաց՝ Սենեգալում գտնվող *Կանաչ հրվանդանից*:

ԿԱՆԱՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - իսպաներեն Islas Canarias. հրաբխային կղզեխումբ Ատլանտյան օվկիանոսում, Աֆրիկայի հյուսիսարևմտյան ափից ոչ հեռու: Ձգվում է հյուսիս-հարավ ուղղությամբ շուրջ 212 կմ, արևմուտքից արևելք՝ 340 կմ: Իր մեջ է ընդգրկում յոթ խոշոր կղզիներ՝ **Տեներիֆեն**, **Գոմերան**, **Իեռոն**, **Պալման**, **Գրան Կանարիան**, **Ֆուերտևենտուրան** ու **Լանսարոտեն,** ինչպես նաև Լոբոս կղզյակը և փոքր Չինիխո կղզեխմբի կղզիներ՝ Գրասիոսան, Ալեգրանսան, Մոնտանյա Կլարան, Արևմտյան և Արևելյան ժայռերը: Մակերեսը՝ 7 446,95 կմ^2:
Անունը հավանաբար առաջացել է լատիներեն Insula Canarias անվանումից, որը բառացի նշանակում է *Շների կղզիներ*:

ԿԱՊԻ ԹԵՐԱԿՂԶԻ - անգլերեն Cape Peninsula, աֆրիկաանս Kaapse Skiereiland. ժայռոտ թերակղզի Հարավաֆրիկյան Հանրապետության հարավ-արևմուտքում: Արևմուտքից ու հարավից ողողվում է Ատլանտյան օվկիանոսի, արևելքից՝ Ֆոլսբեյ ծովախորշի ջրերով: Թերակղզու հարավում են գտնվում **Բարեհուսո** և Քեյպ Փոյնթ հրվանդանները: Ձգվում է հյուսիսում Մոուլ հրվանդանից մինչև Քեյպ Փոյնթը հարավում: Երկարությունը՝ մոտ 52 կմ, լայնությունը՝ 0,8-12 կմ:
Անվան հիմքում ընկած է նիդերլանդերեն kaap *հրվանդան* բառը:

ԿԱՊԻ ԼԵՌՆԵՐ - անգլերեն Cape Fold Belt, աֆրիկաանս Kaapse Vougordel. Ուոլիֆանթս գետից մինչև Փորտ Էլիզաբեթ քաղաքը ձգվող լեռնահամակարգ Աֆրիկայի հարավում՝ Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Լեռները կազմված են իրար զուգահեռ մի քանի լեռնաշղթաներից, որոնցից կարևորագույններն են՝ Մայրուն, Լանգեբերգը, Սվարտբերգը, Պիկետբերգը, Կոդելբերգը և այլն: Լեռների լանջերից են սկիզբ առնում՝ Գրեյթ Ֆիշ, Սանդիզ, Ֆուել, Մելքս, Բաֆալո, Սիկաու, Կա-

ռեգա, Խրուտ Ռի, Ռենոստեր և այլ գետեր: Մակերեսը՝ 225 542 կմ^2: Երկարությունը՝ 480 կմ, լայնությունը՝ 984 կմ: Բարձր կետը՝ Կոմպասբերգ լեռ (2 503 մ):
Անվանումը ստացել է հոլանդերեն kaap *հրվանդան* բառից, նկատի ունենալով այստեղ գտնվող Բարեհուսո հրվանդանը:

ԿԱՊՈՒՅՏ ՆԵՂՈՍ - ամհարերեն **ጥቁር አባይ** Թիքյուրի Աբայի, արաբերեն النيـــل الأزرق ան Նիլ ալ աղրաք, անգլերեն Blue Nile. գետ Եթովպիայում ու Սուդանում, **Նեղոս** գետի աջ վտակը: Փոքր Աբբայ անվամբ սկիզբ է առնում Չոկե լեռների հյուսիսային լանջերից ու թափվում **Թանա** լիճը: Արտահոսելով լճից Աբբայ անվանումով, Սուդանի տարածքում գետը ստանում է Կապույտ Նեղոս (Բահր էլ Ազրակ) անվանումը և Խարթում քաղաքում միախառնվելով **Սպիտակ Նեղոսին** ձևավորում **Նեղոս** գետը: Վերին հոսանքում՝ **Եթովպական բարձրավանդակում**, գետը կոչվում է Աբբայ: Այն 500 կմ հոսում է 900-1 200 մ խորություն ունեցող կիրճով: Եթովպիայում Կապույտ Նեղոսը համարվում է Սուրբ գետ, որովհետև նրա ակունքները գտնվում են Եդեմում: Վտակներն են՝ Դինդերը, Ռահադը, Բելեսը, Մուգերը, Բետոն, Դիդեսան և այլն: Երկարությունը՝ 1 783 կմ: Ավազանը՝ շուրջ 325 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 1 525,3 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ մոտ 2 879 մ:
Հայտնի է նաև Աբբայ, Բահր էլ Ազրակ անուններով:
Անվանումը արաբերենից البحـــر الازرق Բահր էլ Ազրակ թարգմանաբար նշանակում է *Կապույտ ծով (գետ)*:
Կապույտ Նեղոս անունը հավանաբար առաջացել է ջրի գույնի երանգից:

ԿԱՌՈՒ - աֆրիկաանս Karoo, անգլերեն Karoo. կիսաանապատային սարավանդներից և միջլեռնային իջվածքներից կազմված չորային տարածաշրջան Աֆրիկայի հարավում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Արևմուտքից եզերված է Մայրու, արևելքից՝ Ձմեռային լեռներով, հյուսիսից՝ **Ռոխեֆելդ**, Կոմս, Նյուվելֆելդբերգ և Սնեյուբերգ լեռներով, հարավից՝ Վիտեբերգե ու Վինտերհուկ լեռներով: Կառուն բաժանվում է երկու հիմնական մասերի՝ Մեծ ու Փոքր, որոնք առանձնանում են իրենց ռելիեֆի բազմազանությամբ և կլիմայական պայմաններով: Մեծ Կառուն իրենից ներկայացնում է **Կապի լեռների** ու Մեծ սանդղավանդի միջև ընկած իջվածքը, Փոքր Կառուն՝ հովիտ **Կապի լեռներում**: Հաճախ տարանջատում են նաև Վերին Կառուն: Այժմ, վերը նշված ավանդական դասակարգումից բացի Կառուն բաժանում են նաև արևելքում՝ Նամա Կառու (Վերին Կառու) և արևմուտքում՝ Սուկուլենտ Կառու մասերի: Մակերեսը՝ 395 000 կմ^2:
Առաջին անգամ Կառու անվանումը հանդիպում ենք Հարավային Աֆրիկայի քաղխորհրդի 1794 թ. փետրվարի 4-ի բանաձևում:
Անվանումն առաջացել է կոյսան լեզվի karusa *չոր*, *անպտուղ* բառի ձևափոխման արդյունքում:

ԿԱՍԱԻ - ֆրանսերեն Kasaï, պորտուգալերեն Rio Cassai. գետ Կենտրոնական Աֆրիկայում՝ Անգոլայում ու Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում, **Կոնգո** գետի ձախ վտակը: Սկիզբ է առնում Անգոլայից, Լունդա սարավանդից: Վտակներն են՝ Կվիլու, Ֆիմի, **Սանկուրու**, Լուիա, Լուաշիմո և այլն: Գետի ստորին հոսանքի մի կարճ հատված՝ Ֆիմի վտակի թափման տեղից մինչև **Կոնգոյի** հետ միախառնվելը, կոչվում է Կվա: Երկարությունը 2 153 կմ: Ավազանը՝ 881 890 կմ^2: Ջրի ծախսը՝ 5 000- 20 000 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 394 մ, գետաբերանինը՝ 272 մ:

1877 թ. մարտի 9-ին Հենրի Մորթոն Սթենլին հասել է **Կոնգոյի** և **Կասաիի** միախառնման վայրը և վերջինիս անվանել Նկուտու, որը թարգմանաբար նշանակում էր *Հզոր և խոր գետ*:

ԿԱՐԻՍԻՄԲԻ - ֆրանսերեն Mont Karisimbi, կինյառուանդա Ikirunga cya Karisimbi, անգլերեն Mount Karisimbi. հանգած հրաբուխ Վիրունգա լեռնաշղթայում՝ Ռուանդայում: **Մեծ ռիֆտային հովտի** մաս կազմող 8 գագաթանի լեռնաշղթայի ինչպես նաև Ռուանդայի ամենաբարձր կետը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 507 մ, հարաբերականը՝ 3 312 մ:
Անվանումը հավանաբար առաջացել է isimbi բառից, որը կինյառուանդա լեզվից թարգմանաբար նշանակում է *Փոքրիկ սպիտակ ծովախեցի* և ակնարկում է հրաբխի գագաթին մերթ ընդ մերթ առաջացող ձյան շերտը:

ԿԱՖՈՒԵ - անգլերեն Kafue River. գետ Հարավային Աֆրիկայում, Զամբիայում, **Զամբեզի** գետի ձախ վտակը: Սկիզբ է առնում Զամբիայի և Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության սահմանից հարավ գտնվող, համեմատաբար տափակ սարավանդից՝ Միոմբո անտառներից:Վտակներն են՝ Լուֆուպա, Մուշինգոշի, Լունգա, Մունյոնշի, Կաֆուլաֆուտա, Լուսվիշի, Լուավամալա, Մուտամպանդա, Կասակա և բազմաթիվ այլ գետեր: Երկարությունը՝ 1 577 կմ: Ավազանի մակերեսը՝ 154 829 կմ^2: Ջրի ծախսը՝ 320 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 393 մ, գետաբերանինը՝ 369 մ:

ԿԻԼԻՄԱՆՋԱՐՈ - սվահիլի Kilimanjaro, անգլերեն Kilimanjaro. հրաբուխ Արևելյան Աֆրիկայում, Տանզանիայի ու Քենիայի սահմանին, Աֆրիկայի ամենաբարձր կետը: Բաղկացած է երեք հանգած հրաբուխներից՝ Կիբո (Ուհուրու պիկ 5 895 մ), Մավենզի (5 149 մ) և Շիրա (4 005 մ): Կիբոն իր վերին մասում պսակված է 3,6 կմ երկարությամբ և 2,4 կմ լայնությամբ էլիպսաձև կալդերայով, որը շրջապատում է շուրջ 900 մ տրամագիծ ունեցող Ռոյշ խառնարանը, որի կենտրոնում է գտնվում Աշ պիկ անվամբ 200 մ տրամագիծ ունեցող մոխրի կոնը: Հիմնական պիկը կոչվում է Ուհուրու, որը գտնվում է խառնարանի հարավային եզրին: Կիբոյի այլ հայտնի կետերից են Ներքին Կոնը (5 835 մ), Հանս Մայերի Կետը, Ջիլմանի Կետը, Ընձառյուծի Կետը, Յոհանի կիրճը: Շուրջ 2 կմ^2 սառցադաշտեր գոյություն ունեն միայն Կիբոյի գագաթին:
Նախկինում հայտնի էր նաև Կայզեր Վիլհելմի պիկ անունով:
Հավանական է, որ Կլիմանջարո այժմյան անվան հիմքում ընկած է սվահիլի լեզվի kilima *բլուր* և njaro *սպիտակ, փայլող* բառերը:Սակայն այս վարկածի թերությունը կայանում է նրանում, որ նա չի բացատրում ինչու՞ է լեռան անվան մեջ օգտագործվում kilima փոքրացուցիչ բառը, այլ ոչ թե mlima *լեռ* բառը, որն այս դեպքում պատշաճ կլիներ:

ԿԻՀՈՒՄԱ - սվահիլի Mlima Kihuma, անգլերեն Portal Peaks (Kihuma). լեռնագագաթ Ուգանդայում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 391 մ, հարաբերականը՝ 566 մ:
Հայտնի է նաև *Փորտալ պիկ* անունով:

ԿԻՆԱՆԳՈՊ - անգլերեն Mount Kinangop, սվահիլի Mlima Kinangop. հանգած հրաբուխ **Աբերդեր** լեռնաշղթայում, Կինանգոպ սարավանդի արևմտյան մասում, **Մեծ ռիֆտային հովտի** արևելյան լանջին՝ Քենիայում: Հրաբխի հիմքի լայնությունը կազմում է շուրջ 24 կմ: Լեռան լանջերի ստորին մասերը ծածկված են լայնարձակ

հնդկեղեգի անտառներով: Կինանգոպի լանջերից են սկիզբ առնում Մարագավա, Տիկա և այլ բազմաթիվ գետեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 906 մ, հարաբերականը՝ 850 մ:
Հայտնի է նաև Իլկինանգոպ անունով:

ԿԻՎՈՒ - ֆրանսերեն Lac Kivu, կինյառուանդա Ikiyaga cya Kivu, անգլերեն Lake Kivu. լիճ Կենտրոնական Աֆրիկայում, **Մեծ ռիֆտային հովտում**՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության ու Ռուանդայի սահմանագլխին: Կիվու լճի մեջ է թափվում Կալունդուրա գետը, իսկ արտահոսում՝ Ռուզիզին, որը հոսելով հարավային ուղղությամբ թափվում է **Տանգանյիկա** լիճը: Լճում է գտնվում քաղցրահամ ջրերում տեղակայված աշխարհի խոշորագույն կղզիներից մեկը՝ 285 կմ^2 մակերեսով Իջվինը: Աֆրիկայի մյուս լճերից առանձնանում է իր հատակին կուտակված շուրջ 55 մլրդ. մ^3 մեթանի առկայությամբ: Մակերեսը՝ մոտ 2 700 կմ^2: Երկարությունը՝ 89 կմ, լայնությունը՝ 48 կմ: Ծավալը՝ մոտ 640 կմ^3: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 7 000 կմ^2: Միջին խորությունը՝ 237 մ, առավելագույնը՝ 485 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 463 մ:

ԿՈՄՈԵ - ֆրանսերեն Comoé. գետ Արևմտյան Աֆրիկայում: Սկիզբ է առնում Բուրկինա Ֆասոյում, Սիկասո սարավանդի Սինդու բլուրներից, ապա հոսում Կոտ դ'Իվուարի հյուսիսարևելքով՝ Կոմոե ազգային պարկի տարածքով և շարունակելով իր հոսքը հյուսիս-հարավ ուղղությամբ, ի վերջո Էբրիե ծովալճակի միջոցով թափվում **Գվինեական ծոց**: Հիմնական վտակներն են՝ Իրինգուն, Բայան, Բան, Լերաբան և այլն: Երկարությունը՝ 813 կմ: Ավազանը՝ 82 408 կմ^2: Ջրի ծախսը՝ 106 մ^3/վրկ- 430 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 525 մ:
Նախկինում հայտնի էր Դիանու անվամբ:

ԿՈՄՈՐՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - կոմորերեն Komori, ֆրանսերեն Archipel des Comores, արաբերեն جزر كومورو Ջուզուր ալ Կաումուրու. հրաբխային կղզեխումբ Հնդկական օվկիանոսում՝ **Մոզամբիկի նեղուցի** հյուսիսային մասում, Աֆրիկա մայրցամաքի ու **Մադագասկար** կղզու միջև: Ունի 33 մեծ ու փոքր կղզիներ՝ **Նգազիջա** (Գրանդ Կոմոր), **Նձուանի** (Անժուան), **Մվալի** (Մոհելի), **Մայոթ**, Պամանզի, Մզամբորո, **Գլորյոզ**, ինչպես նաև Վայե, Գեյզեր խութերը և այլն: Կղզիները լեռնային են, շրջապատված բուստախութերով: Մակերեսը՝ 2 169 կմ^2: Բարձր կետը՝ Կարթալա հրաբուխ (2 361 մ):
Կղզիների անվան հիմքում ընկած է արաբերեն القمر ալ կամր *Լուսին* բառը:

ԿՈՆԳՈ - ֆրանսերեն Congo, պորտուգալերեն Rio Congo. գետ Կենտրոնական Աֆրիկայում, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում, Կոնգոյի Հանրապետությունում և Անգոլայում: Սկիզբ է առնում **Միտումբա** լեռների հարավարևմտյան լանջերից բխող աղբյուրներից, հոսում հյուսիսային ուղղությամբ, ապա փոխում իր հոսքը դեպի հյուսիս-արևմուտք, արևմուտք և հարավ-արևմուտք ու կազմելով շուրջ 3,5-19 կմ լայնությամբ էստուար՝ թափվում Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ **Ուբանգի**, **Կասաի,** Լուվուա, Լուֆիրա, Լուկուգա, **Լոմամի**, Լուլունգո, Ռուկի, **Արուվիմի**, Մոնգալա, Իտիմբիրի, Սանգա, Ինկիսի, Ալիմա և այլն: Կոնգոյի համակարգին են պատկանում մի քանի խոշոր լճեր՝ **Տանգանյիկան** և **Կիվուն**՝ Լուկուգայի ավազանում, **Բանգվեուլուն** և **Մվերուն**՝ Լուվուայի ավազանում, **Մաի Նդոմբեն՝ Կասաիի** ավազանում և **Նտումբան**, որը Իրեբու վտակի հոսքի միջոցով կապված է Կոնգո գետի հետ: Երկարությունը՝ 4 374 կմ (Լուվուայի, **Լու-**

ապուլայի և Շամբեշիի հետ միասին 4 835 մ): Ավազանը՝ 4 014 500 կմ^2: Ջրի ծախսը՝ 41 800 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 760 մ: Խորությունը՝ տեղ-տեղ 230 մ: Նախկինում հայտնի էր Barbila, Rio de Pedrão, Nzadi և Zaire անուններով: Այժմյան անվանումը գետը ստացել է *կոնգո* ժողովրդից:

ԿՈՆԳՈՅԻ ԱՎԱԶԱՆ - ֆրանսերեն Bassin du Congo, անգլերեն Congo Basin, պորտուգալերեն Bacia do Congo, սվահիլի Bonde la Kongo. **Կոնգո** գետի ջրահավաք գոգավորություն Կենտրոնական Աֆրիկայում: Եզերված է աստիճանաձև սարավանդներով ու սարահարթերով: Գլխավոր գետերն են **Կոնգոն**, իր՝ Լոմամի, Չուապա, **Ուբանգի**, **Կասաի** վտակներով: Այստեղ կան բազմաթիվ լճեր՝ Մաի Նդոմբե, Նտոմբա, Ուպեմբա,Կաբամբա, Լուկենգա, ինչպես նաև բազմաթիվ ճահիճներ: Մակերեսը՝ 1 000 000 կմ^2: Ջրահավաք ավազանը՝ 3 745 320 կմ^2: Ջրի ծախսը՝ 22 000-75 000 մ^3/վրկ: Բարձրությունը ծովի մակրդակից՝ 300-500 մ:
Անվանումը ստացել է ***Կոնգո*** գետից:

ԿՈՆՍԵՊՇՆ - աֆրիկաանս Conceptionbaai, անգլերեն Conception Bay, գերմաներեն Empfängnisbucht. Ատլանտյան օվկիանոսի ծոց Նամիբիայի արևմուտքում: Երկարությունը՝ 63 կմ, լայնությունը՝ 14 կմ:
Անվանումն աֆրիկաանս լեզվից թարգմանաբար նշանակում է *հղիություն*, հաշվի առնելով, որ այստեղ են առաջանում ալմաստները, որով հարուստ են Նամիբիայի ափամերձ շրջանները:

ԿՎԱՀՈՒ - անգլերեն Kwahu Plateau. սարավանդ Գանայի հարավում: Ունենալով մինչև 450 մ միջին բարձրություն, սարավանդը մասնատված է մի քանի խորը հովիտներով: Կվահուից են սկիզբ առնում՝ Պրա, Բիրիմ, Պոնպոն, Անկոբրա և այլ գետերը: Երկարությունը՝ 260 կմ: Բարձր կետը՝ Ակվավա լեռ (798 մ):
Անվանումը ստացել է *կվահու* ժողովրդից:

ԿՎԱՆԳՈ - պորտուգալերեն Rio Cuango, ֆրանսերեն Kwango.գետ Անգոլայում ու Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում, **Կասաի** գետի ձախ վտակը: Սկիզբ է առնում Լունդա սարավանդի Շիկապա բարձրավայրից, հոսում հյուսիսային ուղղությամբ կազմելով բնական սահման Անգոլայի ու Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունների միջև, հաղթահարելով Շուտե Տեմբո ջրվեժը, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության Բանդունդու քաղաքից ներքև թափվում մայր գետը: Օժանդակներն են՝ Վամբան, Ջուման, Կուգոն, Լուլոն, Լվին, Կվիլուն, Կամբոն և այլն: Երկարությունը՝ 1 100 կմ: Ավազանը՝ 128 280 կմ^2: Ջրի ծախսը՝ 2 700 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 372 մ (Շիկապա բարձրավայրում), գետաբերանինը՝ 292 մ:

ԿՎԱՆԶԱ - պորտուգալերեն Rio Kwanza. գետ Աֆրիկայի հարավ-արևմուտքում՝ Անգոլայում: Սկիզբ է առնում Կենտրոնական Անգոլայից, **Բիե** սարավանդից՝ Շիտեմբո լեռներից, հոսում հյուսիսային ուղղությամբ, ապա Մալանժե քաղաքից 26 կմ հարավ-արևմուտք կտրուկ փոխելով իր ուղղությունը արևելյանի, Լուանդայից 59 կմ հարավ թափվում Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ Շիմբամդիանգոն, Կունինգան, Տատոն, Լուկալան, Մուկոնգան, Լոմբեն, Գանգոն, Մվեմբեին, Կոնժոն, Կունդեն, Լվանդոն, Լվան և այլն: Երկարությունը՝ 965 կմ: Ավազանը՝ 152 570 կմ^2: Ջրի ծախսը՝ 825 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 492 մ:
Անվանումը հավանաբար առաջացել է սվահիլի լեզվի kwanza *առաջին* բառից:

ԿՈՒՆԵՆԵ - պորտուգալերեն Rio Cunene, անգլերեն Cunene River. գետ Աֆրիկայի հարավ-արևմուտքում՝ Անգոլայում ու Նամիբիայում: Սկիզբ է առնում Կենտրոնական Անգոլայից՝ **Բիե** սարավանդից, Ուամբո քաղաքից 29 կմ հյուսիս-արևելք բխող աղբյուրներից, ապա հոսելով հարավային ուղղությամբ, Մատալա բնակավայրի մոտ դուրս գալիս սարավանդից և հայտնվելով **Կալահարի անապատի** հյուսիսային եզրին,Պոլուսանջի բնակավայրի մոտ, կտրուկ փոխելով իր հոսքի ուղղությունը ու անցնելով մի շարք քարվաստների միջով, ավարտվում 124 մ բարձրությամբ Ռուականա ջրվեժով: Սկսած այս կետից գետը կազմում է Անգոլայի և Նամիբիայի բնական սահմանը, հոսելով խորը կիրճերով ու իր ճանապարհին կտրելով Զեբրա և Բայնիշ (Բեյնս) լեռնաշղթաները, դուրս գալիս **Նամիբ** անապատ, որտեղ զգալիորեն կորցնելով իր հոսքն ու կազմելով շուրջ 30 կմ լայնությամբ դելտա՝ թափվում Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ Կվենգեն, Կուսավան, Կեն, Կոլոնգան, Կուբանգոն, Օսին, Կալոնգան, Կակուլուվարը և այլն: Երկարությունը՝ 1207 կմ: Ավազանը՝ 109 832 կմ^2: Ջրի ծախսը՝ 174 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 776 մ:

Հ

ՀԱՄԱՄԵԹ - արաբերեն الحمامـــات خلي Խալիջ էլ Համամեթ. Միջերկրական ծովի ծոց Աֆրիկայի հյուսիսում, Թունիսի հյուսիս-արևելքում, **Գաբես** ծոցից հյուսիս: Տարածվում է հյուսիսում Բոն հրվանդանից մինչև Մոնաստիր բնակավայրը հարավում: Առավելագույն երկարությունը՝ 32 կմ: Առավելագույն լայնությունը՝ 75 կմ:
Անվանումը ստացել է *Համամեթ* քաղաքի անունից:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԿՂԶԻ - անգլերեն Ascension Island. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսի հարավային մասում, Աֆրիկա մայրցամաքից դեպի արևմուտք 1 600 կմ հեռավորությամբ: Մակերեսը՝ 88 կմ^2: Երկարությունը՝ 14 կմ, լայնությունը՝ 12 կմ: Բարձր կետը՝ Պիկ (Կանաչ լեռ) գագաթը 859 մ :
Կղզին 1501 թ-ին հայտնագործել է պորտուգալացի ծովագնաց Ժուան դի Նովան, սակայն այն իր այժմյան անվանումը ստացել է 1503 թ-ի մայիսի 21-ին, ծովագնաց Աֆոնսու դի Ալբուկերկիի կողմից՝ *Համբարձման* տոնի պատվին:

ՀԱՅԻԿ - ամիարերեն ***սյք սյք*** Հայիկ հայիկ. քաղցրահամ լիճ Եթովպիայի արևելյան մասում: Լիճն է թափվում և արտահոսում **Ավաշ** գետը: Մակերեսը՝ 23 կմ^2: Երկարությունը՝ 6,7 կմ, լայնությունը՝ 6 կմ: Առավելագույն խորությունը՝ 88 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 911 մ:
Հայտնի է նաև *Հայք*, *Հայկ* անուններով:
Ամիարերեն ***սյք*** Հայիկ անվանումը թարգմանաբար նշանակում է *լիճ* :

ՀԱՅՖԵԼԴ - անգլերեն Highveld, աֆրիկաանս Houveld. սարավանդ, Հարավաֆրիկյան ներքին սարավանդի բարձրադիր մասը: Արևելքից եզերված է **Վիշապների լեռներով**, հարավում՝ Մեծ Կառու իջվածքով, արևմուտքում՝ **Կալահարի** անապատով, հյուսիսում՝ Բուշֆելդով: Հայֆելդը կազմված է քարքարոտ հարթավայրերից, որոնք մերթ ընդ մերթ ընդհատվում են Վիտվատերսրանդ, Մագալիեսբերգ և այլ ժայռոտ շղթաներով: Այստեղ է գտնվում աշխարհի խոշորագույն շուրջ 300 կմ տրամագիծ ունեցող հարվածային խառնարաներից մեկը՝ Վրեդեֆորտ Դոմը: Այստեղով է հոսում **Վաալ** գետն իր համակարգով: Մակերեսը՝ 400 000 կմ^2: Միջին բարձրությունը՝ 1 500-2 100 մ:

Հայֆելդ անունն աֆրիկաանս լեզվից թարգմանաբար նշանակում է *Բարձր դաշտ*:

ՀԱՔԻՔ - արաբերեն خليج حقيق Խալիջ Հաքիք, անգլերեն Gulf of 'Agig. Կարմիր ծովի ծովախորշ, Սուդանի ծովափի հարավային մասում: Ծոցի արևելյան մասում են գտնվում Ամարեթյան, իսկ հարավ-արևմտյանում՝ Հայիուս Վա Քարայ կղզիները: Առավելագույն երկարությունը՝ 13 կմ: Առավելագույն լայնությունը՝ 20 կմ:
Անվանումը ստացել է խորշի հարավարևմտյան ափին գտնվող *Հաքիք* քաղաքից:
ՀՈՒՔԵՐ - անգլերեն Cape Hooker, աֆրիկաանս Kaap Hooker. Աֆրիկայի հարավային կղզային ծայրակետը՝ 46° 58′ 55,68″ S, 37° 49′ 41,13″ E կոորդինատներով, Արքայազն Էդուարդի կղզեխմբի, Մարիոն կղզում:
Անվանվել է բրիտանացի բուսաբան և ճանապարհորդ *Ջոզեֆ Դ. Հուքերի* պատվին:

Մ

ՄԱԴԱԳԱՍԿԱՐ - մալգաշերեն Madagasikara, ֆրանսերեն Madagascar. աշխարհի մեծությամբ չորրորդ կղզին՝ Հնդկական օվկիանոսում, Աֆրիկայի հարավարևելյան ափի մոտ: Աֆրիկայից բաժանվում է **Մոզամբիկի նեղուցով**: Մադագասկար կղզու զգալի մասը զբաղեցնում է Կենտրոնական բարձրավանդակը: Խոշոր լճերն են՝ **Ալաուտրան**, Կինկոնին, Իհոտրին և այլն: Խոշոր գետերն են՝ Մանիան, Մանգուկին, Մանգորոն, Մանանարան, Մանինգորին, Բեմարիվոն, Իվոնդրոն, Մանանժարին և այլն: Մակերեսը՝ 587 041 կմ^2: Երկարությունը՝ շուրջ 1 620 կմ, լայնությունը՝ մինչև 605 կմ: Ափագիծը՝ 4 828 կմ: Բարձր կետը՝ **Մարումուկուտրու** հրաբուխ (2 876 մ):
Նախկինում հայտնի էր Սուրբ Լորենցոյի անվամբ:
Մադագասկար անվանումը նախամալայերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Աշխարհի եզրը*:

ՄԱԴԵՅՐԱ - պորտուգալերեն Ilha da Madeira. համանուն կղզեխմբի հիմնական, խոշորագույն հրաբխային կղզին, Ատլանտյան օվկիանոսի հյուսիսային և Աֆրիկայի հյուսիսարևմտյան ափամերձ մասում: Ափերը հիմնականում զառիթափ են, մակերեսը լեռնոտ: Այստեղ բացի Պիկու Ռույվուից կան 1 800 մ-ից բարձր ևս երկու գագաթ՝ Պիկու դաշ Տոռեշ (1 850 մ) և Պիկու դու Արիեյռու (1 818 մ): Մակերեսը՝ 740,7 կմ^2: Երկարությունը՝ 57 կմ, լայնությունը՝ 22 կմ: Ափագիծը՝ 179,3 կմ: Բարձր կետը՝ Պիկու Ռույվու (1 862 մ):
Անվանումը պորտուգալերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Բնափայտ (Փայտանյութ)*:

ՄԱԴԵՅՐԱ - պորտուգալերեն Arquipélago da Madeira. հրաբխային կղզեխումբ Ատլանտյան օվկիանոսում, Աֆրիկայից հյուսիս-արևմուտք: Իր մեջ է ընդգրկում 25 խոշոր ու մանր կղզիներ՝ **Մադեյրա**, Պորտու Սանտու, Դեզերտաշ, Ագոշտինյու, Սան Լորենսու, Մոլի, Բայշու ու դա Կալ, Ֆեռու, Սենուրաշ, Ֆորա, Սիմա, Դեզերտա Գրանդի, Բուժիու, Շան և այլն: Մակերեսը՝ 797,4 կմ^2: Բարձր կետը՝ Պիկու Ռույվու (1 862 մ, Մադեյրա կղզում):
Անվանումը պորտուգալերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Բնափայտ (Փայտանյութ)*:

ՄԱԵ - ֆրանսերեն Mahé, անգլերեն Mahé. **Սեյշելյան կղզիների** ամենամեծ կղզին: Մակերեսը՝ 154,7 կմ^2: Երկարությունը՝ 26 կմ, լայնությունը՝ 17 կմ: Ափագիծը՝ 111,3 կմ: Բարձր կետը՝ Մոռն Սեյշելուա լեռ (906 մ):
Կղզին 1742 թ-ին անվանվել է **Մասկարենյան կղզիների** այն ժամանակվա ֆրանսիական նահանգապետ *Բերտրան Ֆրանսուա Մաե դը Լա Բուրդոնեի* պատվին:

ՄԱԼԵԲՈ - ֆրանսերեն Pool Malebo. լճախորշ **Կոնգո** գետի վրա, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության ու Կոնգոյի Հանրապետության սահմանագլխին: Լճի կենտրոնական մասը զբաղեցնում է Մբամու կղզին: Մակերեսը՝ 400 կմ^2: Երկարությունը՝ 35 կմ, լայնությունը՝ 23 կմ: Խորությունը՝ 3-10 մ, առավելագույնը՝ 16 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 266 մ:
Հայտնի էր նաև Նգոբիլա, Նկունդա և Սթենլի Փուլ անուններով:
Մալեբո անվանումը լճի կղզիներում մեծ քանակությամբ աճող Borassus flabellifer տեսակի արմավենու տեղական լիլեբո անվան հոգնակին է:

ՄԱԼԵՑՈՒՆՅԱՆԵ - սոթո Maletsunyane oa oa, անգլերեն Maletsunyane Falls. ջրվեժ Հարավային Աֆրիկայում, Լեսոթոյում, Մալեցունյանե գետի վրա: Կազմված է մեկ սանդղավանդից: Անկման բարձրությունը՝ 192 մ:
Անվանումը ստացել է *Մալեցունյանե* գետից, որի անունն իր հերթին սոթո լեզվից թարգմանաբար նշանակում է *կտրված* , *հատած* :

ՄԱԿԱՐՈՆԵԶԻԱ - հունարեն Μακριά νησιά, իսպաներեն Macaronesia, պորտուգալերեն Macaronésia. Աֆրիկայի ու Եվրոպայի ափերին մոտ գտնվող, Ատլանտյան օվկիանոսում տեղակայված Ազորյան, **Կանարյան**, **Կանաչ Հրվանդանի կղզիներ**, **Մադեյրա** ու **Սելվաժինս** 5 կղզեխմբերի ընդհանրական անվանումը:
Անվանումը հունարենից թարգմանաբար նշանակում է *Երանելի կղզիներ* :

ՄԱԿԳԱԴԻԿԳԱԴԻ - անգլերեն Makgadikgadi. անհոսք իջվածք Աֆրիկայի հարավում՝ Բոտսվանայում, **Օկավանգոյի** դելտայից հարավ-արևելք: Իջվածքի շուրջ 16 057,9 կմ^2 մակերեսի զգալի մասը զբաղեցնում են Սուա, Նտվետվե, Նկսաի և բազմաթիվ այլ աղի լճերը: Ջրի հիմնական աղբյուր են հանդիսանում Նատա (Ամանգանայամա) ու Բոտետի գետերը: Նախկինում իջվածքում տեղակայված էր շուրջ 80 000 կմ^2 մակերեսով և 30 մ խորությամբ լիճ, որի մեջ էին թափվում **Օկավանգո**, **Զամբեզի**, **Կվանգո** ու բազմաթիվ այլ գետեր: Երկարությունը՝ մինչև 320 կմ, լայնությունը՝ մինչև 280 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ ավելի քան 904 մ:
Նախկինում հայտնի էր Մակարիկարի անվամբ:
Այժմյան անվանումը տշուա լեզվից թարգմանաբար նշանակում է *Բաց հարթավայրերի մարդիկ* :
Մեկ այլ վարկածի համաձայն Մակգադիկգադի անվանման հիմքում ընկած է Կալահարի անվան նույն kga արմատը, որը սան ժողովրդի լեզվից թարգմանաբար նշանակում է *Անջուր վայր*:

ՄԱՅԻ ՆԴՈՄԲԵ - ֆրանսերեն Lac Mai-Ndombe. քաղցրահամ լիճ **Կոնգո** գետի ավազանի արևմտյան մասում, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության հյուսիս-արևմուտքում: Լիճն են թափվում՝ Լուտոյի, Լոկորո, Օլոնգոլուլե, Բատոկո, Բովելե և այլ գետերը, արտահոսում՝ Ֆիմի գետը: Մակերեսը՝ 2 325-8 200 կմ^2: Երկարությունը՝ 135 կմ, լայնությունը՝ 14-55 կմ: Ծավալը՝ 7-41 կմ^3: Ջրահավաք ավա-

զանը՝ 67 680 կմ^2: Միջին խորությունը՝ 10 մ: Առավելագույն խորությունը՝ 12 մ: Բարձրությունը՝ 292-340 մ:
Մինչև 1972 թ. հայտնի էր նաև *Լեոպոլդ* և *Լեոպոլդ II*-ի լիճ անուններով:
Լճի անվանումը լինգալա լեզվից թարգմանաբար նշանակում է *Սև ջուր*:

ՄԱՅՈԹ - ֆրանսերեն Grande-Terre.կղզի Հնդկական օվկիանոսում, **Մոզամբիկի նեղուցի** հյուսիսային մասում: Կազմում է **Կոմորյան կղզիների** մի մասը: Մակերեսը՝ 363 կմ^2: Երկարությունը՝ 39 կմ, լայնությունը՝ 22 կմ: Բարձր կետը՝ Բենարա լեռ (660 մ):
Հայտնի է նաև Մաորե, Գրանդ Տեր և Մահորե անուններով:
Այժմյան անվանումը ստացել է կղզու պատմական արաբերեն Ջազիրաթ ալ *Մաուրթ՝ Մահվան* կղզի անունից, որն հետագայում ֆրանսիացիների կողմից մեկնաբանվել է որպես Մայոթ:

ՄԱՅՈՒ - պորտուգալերեն Ilha do Maio. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում՝ **Կանաչ հրվանդանի կղզիներում**, **Սանտյագու** կղզուց արևելք: Կղզու եզրակետերն են հյուսիսայինը՝ Կայշը, հարավայինը՝ Ժամպալան, արևմտյանը՝ Բանկոնին, արևելյանը՝ Ֆլամենգուշը: Այստեղ կան սակավաջուր գետակներ ու ջրահոսքեր՝ Լագոա, Ֆիգուեյրա Լապա, Լոգար, Կուռամի, Կալյետա և այլն: Մակերեսը՝ 269 կմ^2: Երկարությունը՝ 24,1 կմ, լայնությունը՝ 16,3 կմ: Բարձր կետը՝ Պենոզու լեռ (436 մ):
Անվանումը պորտուգալերենից բառացի նշանակում է *Մայիս*:

ՄԱՇԱՆԳՈՒԼՈՒ - պորտուգալերեն Machangulo. թերակղզի Մոզամբիկի հարավային մասում: Արևելքում ողողվում է Հնդկական օվկիանոսի, իսկ արևմուտքում՝ Մապուտու ծոցի ջրերով: Մակերեսը՝ 100 կմ^2: Երկարությունը՝ 22 կմ (Ինյակա կղզու հետ 41 կմ), լայնությունը՝ 1-8 կմ: Ափագիծը՝ 20 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 86 մ:
Անվանումը կազմված է պորտուգալերեն Macha *ցոպ*, *ժպիրի*, *լկտի* և կուաս լեզվի ngulo *անկյուն* բառերից:

ՄԱՇԱՐ - անգլերեն Machar Marshes, արաբերեն المستنقعات مشار Մաշար ալ Մուստանղայր. ջրաճահճային խոշոր տարածք Հարավային Սուդանի հյուսիս-արևելքում: Ճահիճը սնվում է Խոր Մաշար (Բարո գետի վտակ), Յաբուս, Դագա, Փիբոր և այլ գետերով: Այստեղով է արտահոսում **Սպիտակ Նեղոսի**՝ Ադար վտակը: Մակերեսը՝ 8 700 կմ^2: Երկարությունը՝ 185 կմ, լայնությունը՝ 115 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 402 մ:

ՄԱՌԱ - արաբերեն جبل مرة Ջաբալ Մառա, անգլերեն Marrah Mountains. հանգած հրաբուխ Սուդանի արևմուտքում՝ **Դարֆուր** սարավանդում: Հրաբուխը շրջապատված է քարքարոտ անապատով, որի կենտրոնում տեղակայված են Դերիբա լճերի խումբը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 042 մ:
Հայտնի է նաև Ֆուգո Մառա անունով:
Ջաբալ Մառա անվանումը Սուդանի արաբերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Կանացի լեռներ*:

ՄԱՍԿԱՐԵՆՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - պորտուգալերեն Ilhas Mascarenhas, ֆրանսերեն Mascareignes, անգլերեն Mascarene Islands. կղզեխումբ Հնդկական օվկիանոսում՝

Մադագասկար կղզուց արևելք: Իր մեջ է ընդգրկում՝ **Ռեյունիոն**, **Մավրիկիոս**, **Ռոդ-րիգես** կղզիները և Ագալեգա ու Կարգադոս Կարախոս փոքր կղզեխմբերը: Մակե-րեսը՝ 4 519 կմ^2: Բարձր կետը՝ Պիտոն դե Նեժ լեռ (3 070,5 մ, **Ռեյունիոն** կղզում): Կղզիները 1528 թ. անվանվել են պորտուգալացի ծովագնաց Դիոգու Ռոդրիգեշի կողմից ի պատիվ ծովապետ *Պեդրու Մասկարենյաշի*:

ՄԱՎՐԻԿԻՈՍ - անգլերեն Mauritius Island, ֆրանսերեն Île Maurice հրաբխային կղզի Հնդկական օվկիանոսի արևմտյան մասում, **Մադագասկար** կղզուց արևելք, **Մասկարենյան կղզեխմբում**: Կղզին շրջապատված է բուստախութերով: Այստեղ կան մի շարք գետեր՝ Գրանդ Ռիվիեր Նուար, Պոստ դը Ֆլակ և այլն: Մակերեսը՝ 1 865 կմ^2: Երկարությունը՝ 65 կմ, լայնությունը՝ 45 կմ: Բարձր կետը՝ Պիտոն դը լա Պտիտ Ռիվիեր Նուար / Պիտոն լեռ (828 մ):
Հայտնի էր նաև Դինա Արոբի, Սիշնա և Իլ դը Ֆրանս անուններով:
Կղզին իր այժմյան անվանումը 1598 թ-ին ստացել է հոլանդացիների կողմից՝ դուքս *Մորից Օրանսկու* անվան լատինական *Mauritius* ձևից:

ՄԱՐՈՒՄՈՒԿՈՒՏՐՈՒ - մալգաշերեն Maromokotro, ֆրանսերեն Maromokotro. Հան-գած հրաբուխ **Մադագասկար** կղզու հյուսիսային մասում՝ Ցարատանանա լեռնա-զանգվածում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 2 876 մ:
Անվանումն առաջացել է մալգաշերեն maro *բազմություն* և mokotro *թարմացնող մրգատու ծառ* բառերի միացումից:

ՄԱՖԻԱ - սվահիլի Mfereji Mafia, անգլերեն Mafia Channel. Հնդկական օվկիանոսի նեղուց, Աֆրիկայի հարավարևելյան մասում: Անջատում է Տանզանիայի Պվանի նահանգը Մաֆիա կղզուց: Նեղուցում են տեղակայված՝ Բվեջու, Կվալե, Կոմա և բազմաթիվ այլ կղզիներ: Մաֆիա նեղուցն է թափվում Ռուֆիջի գետը: Երկարությունը՝ 130 կմ, առավելագույն լայնությունը՝ 18 կմ:
Անվանումը ստացել է ***Մաֆիա*** կղզուց:

ՄԱՖԻԱ - սվահիլի Kisiwa cha Mafia, անգլերեն Mafia Island. կղզի Հնդկական օվ-կիանոսում, Աֆրիկայի հարավարևելյան մասում, Տանզանիայի Պվանի նահանգից բաժանվում է համանուն նեղուցով: Մակերեսը՝ 435 կմ: Երկարությունը՝ 49 կմ, լայ-նությունը՝ 17 կմ: Բարձր կետը՝ 53 մ:
Հայտնի էր նաև Չոլե մշինի և Չոլե շամբա անուններով:
Մաֆիա անունը առաջացել է արաբերեն مورفاييـــه Մուրֆայիհ *խումբ*, *կղզեխումբ* բառից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվան հիմքում ընկած է սվահիլի լեզվի mahali pa afya *Առողջ կացարան* արտահայտությունը:

ՄԱՖԻՆԳԱ - անգլերեն Mafinga Hills. բլրածածկ սարավանդ Հարավային Աֆրիկա-յում, Զամբիայի և Մալավիի սահմանագլխին: Ջրբաժան է հանդիսանում է **Լուանգ-վա** գետի և **Նյասա** լճի միջև: Սարավանդը պայմանականորեն կարելի է բաժանել երեք մասի՝ Մաֆինգի շղթայի, Պիլեվոմբե և Կայունի Միսիսի բլրաշարերի: Այստե-ղից են սկիզբ առնում **Լուանգվա**, Կալունգու, Սոնգվե, Լուֆիլյա, Հյուսիսային Ռու-կուրու և բազմաթիվ այլ գետեր: Սարավանդի գլխավոր գագաթներն են՝ Մաֆինգա Կենտրոնական (2 339 մ), Մաֆինգա Հարավային (2 337 մ), Մաֆինգա Հյուսիսային (2 338 մ) և Նամիտավա (2 164 մ): Երկարությունը՝ շուրջ 100 կմ:

ՄԲՈՄՈՒ - ֆրանսերեն Mbomou. գետ Կենտրոնական Աֆրիկայում, Կենտրոնաաֆրիկյան ու Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություններում: Սկիզբ է առնում Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության և Հարավային Սուդանի սահմանամերձ գոտուց ու կազմելով Կոնգոյի և Կենտրոնաաֆրիկյան Հանրապետության սահմանը, հոսում արևմտյան ուղղությամբ և Կեմբա բնակավայրի մոտ միախառնվելով **Ուելե** գետի հետ, կազմավորում **Ուբանգի** գետը՝ **Կոնգո** գետի խոշորագույն վտակներից մեկը: Վտակներն են՝ Շինկո, Ուարա, Կերե, Մբոկու, Ասա, Բիլի, Մբարի և այլն: Երկարությունը՝ 816 կմ: Ավազանի մակերեսը՝ 156 950 կմ^2: Ջրի ծախսը՝ 822,8 -1 130 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 725 մ, գետաբերանինը՝ 396 մ: Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում գետը հայտնի է Բոմու անունով:

ՄԵԼՂԻՐ - արաբերեն طـغ شـــملغيِ Շաթ ուն Մալղիդ. անհոսք, ցամաքող աղի լիճ Աֆրիկայի հյուսիսում, **Ատլաս** լեռների հարավային մասում, **Էլ Ջերիդ** աղի լճից հյուսիս-արևմուտք: Լիճն են թափվում՝ Ջերիբետ, Էլ Միտա, Ուեդ Ջեդի, Ուեդ Իտե, Ուեդ Ջերբա և այլ գետեր ու ջրահոսքեր: Մակերեսը՝ 5 515 կմ^2: Առավելագույն երկարությունը՝ 130 կմ: Բացարձակ բարձրությունը՝ -33 մ:
Անվանումը բերբերերենից թարգմանաբար նշանակում է *աղբյուրակ* :

ՄԵԾ ՌԻՖՏԱՅԻՆ ՀՈՎԻՏ - պորտուգալերեն Vale do Rift, անգլերեն Great Rift Valley, ֆրանսերեն Vallée du grand rift, սվահիլի Bonde la Ufa la Afrika ya Mashariki, ամհարերեն **ታላቁ የስምጥ ሸለቆ** Թալաքու եսիմիթ շելեքո, արաբերեն المتصدع الـوادي ـــــالكبير էլ Վադի էլ Մուտասադի էլ Քաբիր. խզվածք Աֆրիկայի արևելյան մասում: Ձգվում է շուրջ 6 000 կմ երկարությամբ Սիրիայից հյուսիսում՝ մինչև կենտրոնական Մոզամբիկը՝ հարավում: Լայնությունը՝ 30-100 կմ: Խորությունը մի քանի հարյուրից մինչև մի քանի հազար մետր:
Հայտնի է նաև Արևելաաֆրիկյան բեկվածք անունով:
Իր անվամբ Մեծ ռիֆտային հովիտը պարտական է բրիտանացի հետազոտող Ջոն Ուոլթեր Գրեգորիին, ով XIX դարի վերջում խզվածքին տվեց այժմյան անվանումը:

ՄԵՐՈՒ - սվահիլի Mlima Meru, անգլերեն Mount Meru. գործող ստրատոհրաբուխ Աֆրիկայի արևելքում՝ Տանզանիայի հյուսիսում: Արևմուտքից հրաբուխը կոնաձև է, իսկ արևելյան լանջին է տեղակայված շուրջ 5 կմ լայնությամբ հսկա կալդերան:
Լեռն ունի երկու գագաթ՝ Մեծ Մերու (Սոցիալիզմի պիկ 4 562,13 մ) և Փոքր Մերու 3 820 մ: Հարաբերական բարձրությունը՝ 3 170 մ:
Անվանումը մերու լեզվից թարգմանաբար նշանակում է *Այն ինչը չի աղմկում* :

ՄԻԿԵՆՈ - ֆրանսերեն Mont Mikeno. հանգած հրաբուխ Վիրունգա լեռնաշղթայում՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 437 մ:
Անվանումը թարգմանաբար նշանակում է *աղքատ* և կոչվում է այդպես իր զառիվեր լանջերի պատճառով, որով էլ մատնանշվում է մարդկանց համար լեռան լանջերին բնակեցման անհնարինությունը:

ՄԻՏՈՒՄԲԱ - ֆրանսերեն Monts Mitumba. հրաբխային լեռնաշղթա **Արևելաաֆրիկյան սարավանդից** արևմուտք, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության արևելյան մասում, Բուրունդիում, Ռուանդայում և Ուգանդայում: Լեռները կազմա-

վորված են երիտասարդ հրաբխային և հին բյուրեղային ապարներից: Գերակշռում են մի քանի մակարդակներով տեղակայված հարթ գագաթներ: Միտումբայի արևելյան մասը ձգվում է **Էդուարդ**, **Կիվու** և **Տանգանյիկա** լճերով զբաղեցրած տեկտոնական իջվածքի երկայնքով: Լեռնաշղթայի երկու գլխավոր գագաթներն են՝ Կահուզի (3 308 մ) ու Բիեգա (2 790 մ) հանգած հրաբուխները: Այստեղից են սկիզբ առնում՝ Լուաբաբա (Կոնգո), Լուֆիրա, Լուգուա, Լուվուա, ինչպես նաև **Զամբեզի**, Կաբոմպո, Լունգա գետերը: Երկարությունը՝ շուրջ 1 300 կմ: Բարձր գագաթը՝ Կահուզի լեռ (3 308 մ):
Անվանումը թարգմանաբար նշանակում է *Ով որ ծխում է*, որի հիմքում ընկած է նանդե լեզվի eritúmba *ծխել* բայը:

ՄՅՈՐՉԻՍՈՆ ՖՈԼՍ - անգլերեն Murchison Falls. ջրվեժներ Ուգանդայում, **Ալբերտ** լճից 32 կմ հյուսիս-արևելք, Վիկտորիա Նեղոս գետի վրա: Վիկտորիա Նեղոսը սկիզբ առնելով **Վիկտորիա** լճից և հաղթահարելով բազմաթիվ սահանքներ, հանդիպում է նեղ՝ 7 մ լայնությամբ կիրճի, որտեղ կազմում է երեք ջրվեժներից կազմված կասկադ՝ ընդհանուր 120 մ անկմամբ, որոնցից ամենամեծը 43 մ բարձրությամբ Կաբալեգան է: Ջրի ծախսը՝ 300 մ^3/վրկ:
1864 թ ջրվեժը հայտնաբերել է անգլիացի ճանապարհորդ Սեմուել Բեյքերը և անվանել Մյորչիսոն Ֆոլս, ի պատիվ հռչակավոր շոտլանդացի երկրաբան *Ռոդերիկ Իմփի Մյորչիսոնի*:
1972 -1990 թթ-ին ջրվեժներն անվանվել է 1869-98 թթ-ին Բունյորո թագավորության օմուկամա (թագավոր) Չվա II Կաբալեգայի(Կաբարեգայի) պատվին, այնուհետ ջրվեժներին վերադարձվել է նախկին անվանումը:

ՄՈՉԱՄԲԻԿԻ ՆԵՂՈՒՑ - պորտուգալերեն Canal de Moçambique, ֆրանսերեն Canal du Mozambique, մալգաշերեն Lakandranon'i Mozambika, արաբերեն قناة موزمبيق Քանաթ Մուզիմբիք. Հնդկական օվկիանոսի նեղուց, Աֆրիկա մայր ցամաքի և **Մադագասկար** կղզու միջև: Համարվում է աշխարհի ամենաերկար նեղուցը: Այստեղ կան բազմաթիվ կղզիներ՝ Բազարուտո, **Մոզամբիկ**, Բե, Հարա, Միցիո, Եվրոպա, Բասաս դա Ինդիա, Ժուան դի Նովա և այլն: Նեղուցն են թափվում՝ **Զամբեզի**, Լուրիո, Մոնապո, Լիգոնիա, Ունգվե, Սավե, Սամբաո,Մանոմբո, Ռանոբե գետերը: Երկարությունը՝ 1 760 կմ, լայնությունը՝ 419-925 կմ: Առավելագույն խորությունը՝ 3292 մ:
Անվանումը ստացել է *Մոզամբիկ* երկրից:

ՄՎԱԼԻ - կոմորերեն Mwali, ֆրանսերեն Mohéli, արաբերեն موهيلي Մավհելի. կղզի Հնդկական օվկիանոսի **Մոզամբիկի նեղուցում**, **Կոմորյան կղզիների** կազմում: Ափերը խիստ մասնատված են: Կղզին անտառապատ է, կան մի քանի գետակներ: Մակերեսը՝ 290 կմ^2: Երկարությունը՝ 35 կմ, լայնությունը՝ 12 կմ: Բարձր կետը՝ Կուկուլե լեռ (790 մ):
Հայտնի է նաև Մոհելի անվամբ:

ՄՎԵՐՈՒ - ֆրանսերեն Lac Moero, անգլերեն Lake Mweru. խոշոր քաղցրահամ լիճ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության և Զամբիայի սահմանագլխին: Կազմում է **Մեծ ռիֆտային հովտի** լճերի շղթայի մասը: Մվերու լիճն են թափվում **Լուապուլա**, Կալունգվիշի, Լուֆուկվե և այլ գետեր, արտահոսում՝ Լուվուան: Լճի հարավարևմտյան մասում է գտնվում 25 կմ^2 մակերեսով Կիլվա և Իսոկվե կղզիները:Մակերեսը՝ 5 120 կմ^2: Երկարությունը՝ 131 կմ, լայնությունը՝ 56 կմ:Ծավալը՝ 38,4

կմ^3: Ափագիծը՝ 436 կմ: Միջին խորությունը՝ 7,5 մ, առավելագույնը՝ 27 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 922 մ:
Անվանումը բանտու մի քանի լեզուներից թարգմանաբար նշանակում է *լիճ*:

ՄՎԵՐՈՒ ՎԱՆՏԻՊԱ - անգլերեն Lake Mweru Wantipa. լիճ և ճահճային համակարգ Զամբիայի հյուսիսային մասում: Գտնվում է **Մեծ ռիֆտային հովտի** լճերի շղթայում: Լիճը հայտնի է ջրի մակարդակի և աղիության տատանումներով, որոնք ամբողջությամբ չեն բացատրվում տեղումների քանակով, հայտնի են դեպքեր, երբ այն ամբողջությամբ չորանում է: Մակերեսը՝ 1 500 կմ^2: Երկարությունը՝ 65 կմ, լայնությունը՝ 20 կմ: Ծավալը՝ 3 կմ^3:Առավելագույն խորությունը՝ 5 մ: Միջին խորությունը՝ 2 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 934 մ:
Հայտնի է նաև Մվերու ճահիճ անվամբ:
Մվերու անվանումը բանտուի մի քանի լեզուներում նշանակում է *լիճ*:
Լճի անվան երկրորդ Wa ntipa մասը տեղական բարբառներում կարելի է թարգմանել, որպես *ցեխոտ*, ի վերջո Mweru-wa-Ntipa անվանումը բառացի նշանակում է *Ցեխոտ լիճ*:

ՄՈՒԼԱՆՋԻ - անգլերեն Mulanje Massif, չևա (նյանջա) Phiri la Mulanje. բազմագագաթ լեռնազանգված Մալավիի հարավում: Լեռը կտրուկ վեր է խոյանում իրեն շրջապատող Չիրաձուլու հարթավայրի ու Մուլանջի թեյի տնկադաշտերի նկատմամբ: Լեռան հիմքը էլիպսաձև է, 22x26 կմ չափերով: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Սապիտվա Պիկը 3 002 մ, Չամբեն 2 556 մ և այլն: Հարաբերական բարձրությունը՝ 2 319 մ:

ՄՈՒՀԱԲՈՒՐԱ - կինյառուանդա Ikirunga cya Muhabura, ֆրանսերեն Muhavura, սվահիլի Mlima wa Muhabura, անգլերեն Mount Muhabura. ստրատոհրաբուխ Վիրունգա լեռների հյուսիս-արևելքում՝ Ռուանդայի ու Ուգանդայի սահմանագլխին: Գտնվում է **Մեծ ռիֆտային հովտի** արևմտյան մասում, Ալբերտինա գոտում: Հրաբխի հիմքն ունի շուրջ 6 կմ տրամագիծ՝ խառնարանում կա փոքր լիճ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 127 մ, հարաբերականը՝ 1 530 մ:
Անվանումը կինյառուանդա լեզվից թարգմանաբար նշանակում է *Ուղեցույց*:

ՄՈՒՏԱՐԱԶԻ - անգլերեն Mutarazi Falls, շոնա Mtarazi Nzizi. ջրվեժ Աֆրիկայում, Զիմբաբվեի Մանիկալենդ պրովինցիայի հյուսիսարևելյան մասում, Արևելյան բարձրավանդակի լանջերից սկիզբ առնող Մուտարազի գետի վրա: Կազմված է երկու սանդղավանդներից, որոնցից ամենամեծը ունի 479 մ բարձրություն:
Անկման բարձրությունը՝ 772 մ: Ակունքի բարձրությունը՝ 1 719 մ: Լայնությունը՝ 15 մ: Ջրի ծախսը՝ 1 մ^3/վրկ - 6 մ^3/վրկ:
Անվանումը ստացել է *Մուտարազի* գետից, որի անունն իր հերթին շոնա լեզվից թարգմանաբար նշանակում է *պարարտ*, *բերրի*:

ՄՈՒՐԶՈՒԿ - արաբերեն مرزق أدمان Էդիան Մուրզակոն. ավազային անապատ **Սահարայում**՝ Լիբիայի հարավ-արևմուտքում **Տիբեստի** լեռներով և **Թասիլին Աջեր** սարավանդով, անջատված է **Սահարա** անապատից: Անապատը տեղակայված է մնացորդային զանգվածներով եզերված գոգավորությունում: Հյուսիսում և հյուսիս-արևմուտքում հանդիպում են շուրջ 300 մ բարձրությամբ Դրաա անվամբ բազմաթիվ ավազաթմբեր: Մակերեսը՝ շուրջ 200 000 կմ^2: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 660 մ:

Հայտնի է նաև Իդեհան Մարզուկ, Իդիան Մուրզուկ, Մուրզուկ էրգ, Մուրզակ, Մարզուկ և այլ անուններով:

ՄՔՈՒՆ - արաբերեն مكون Մքոնոն, բերբերերեն ՀԿՀԻ ԸՄՍԻ Իղիլ Մգըն , ֆրանսերեն Ighil M'Goun. բազմագագաթ լեռնազանգված **Ատլաս** լեռների կենտրոնական մասում՝ Մարոկկոյում, Դրաա Տաֆիլալեթ մարզում: Լեռնազանգվածի գագաթներն են՝ Մքուն 4 071 մ (1 904 մ), Մքուն Արևմտյան 3 978 մ, Տիգնուսթին 3 819 մ (930 մ), Գհաթը 3 781 մ (470 մ), Ուաուգուլզաթը 3 763 մ (860 մ), ն'Անղոմարը 3 609 մ (1 420 մ) և Իգուդամենը 3 519 մ (550 մ):
Հայտնի է նաև Իգիլ Մքուն, Իրիլ Մքուն, Իգիլ ն'Ումուդ, Ամթ Մքուն անուններով և այլն:

Յ

ՅԱԼԱ - անգլերեն Yala Swamp. ջրաճահճային տարածք Արևմտյան Քենիայում, **Վիկտորիա** լճի հյուսիսարևելյան առափնյա մասում: Այն հանդիսանում է զտիչ **Վիկտորիա** լիճը թափվող՝ Նզոյա, Հվիրո և Ռապուդո գետերի, ինչպես նաև Սարե և Նամբոյո լճերի համար: Ճահիճը հաճախ համարում են **Նեղոսի** ակունքներից մեկը: Մակերեսը՝ մոտ 200 կմ^2: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 135-1 153 մ: Անվանումը ստացել է *Յալա* գետից:

ՅՈՈՒՐԻ ԲԵՅ - անգլերեն Yawri Bay. Ատլանտյան օվկիանոսի ծոց, Սիեռա Լեոնեի ափին: Ծոցի հյուսիսարևմտյան մասում են գտնվում երեք կղզիներից բաղկացած Բաննանա կղզեխումբը՝ Դուբլին, Ռիկետս ու Մես Մեշե, ինչպես նաև առանձնացված Թիստլ կղզին: Առավելագույն երկարությունը՝ 22 կմ: Առավելագույն լայնությունը՝ 29 կմ:

Ն

ՆԱՄԻԲ - անգլերեն Namib, պորտուգալերեն Deserto do Namibe. ավազային անապատ Աֆրիկայի հարավարևմտյան մասում՝ Նամիբիայում, Անգոլայում ու Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Աշխարհի ամենահին անապատը, որը կազմավորվել է շուրջ 55- 80 մլն. տարի առաջ: Այն բաժանվում է երեք աշխարհագրական շերտերի, որոնք ձգվում են Ատլանտյան օվկիանոսի ափին զուգահեռ.
1.շատ նեղ մերձափնյա շերտ, որտեղ ուժեղ է օվկիանոսի ազդեցությունը
2.արտաքին Նամիբ, որը զբաղեցնում է անապատի արևմտյան մասի փոքր կտորը
3.ներքին Նամիբ՝ անապատի արևելյան մայրցամաքային մասը
Այս շերտերի միջև գոյություն ունեն լայնարձակ անցումային շրջաններ: Մակերեսը՝ շուրջ 130 000 կմ^2: Երկարությունը՝ շուրջ 1600 կմ, առավելագույն լայնությունը՝ 70-160 կմ: Բարձր կետը՝ Բրանդբերգ լեռ (2 621 մ):
Անապատի անունը նամա լեզվից թարգմանաբար նշանակում է *Դատարկ տեղ*:
Մեկ այլ վարկածի համաձայն, անապատի անունը բառացիորեն նշանակում է *Հակայական վայր*:

ՆԱՅՎԱՇԱ - անգլերեն Lake Naivasha, սվահիլի Ziwa Naivasha. քաղցրահամ լիճ Արևելյան Աֆրիկայում՝ Քենիայում: Կազմում է **Մեծ ռիֆտային հովտի** լճերի շղթայի մասը: Լիճն են թափվում՝ Մելավա, Գիլգիլ և Կարատի գետերը: Մակերեսը՝ 139

կմ^2: Ծավալը՝ 0,0834 կմ^3: Միջին խորությունը՝ 6 մ, առավելագույն խորությունը՝ 30 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 883 մ:
Անունը մասայերեն լեզվից Nai'posha թարգմանաբար նշանակում է *Փոթորկոտ ջուր*, որը պայմանավորված է լճում հաճախակի տեղի ունեցող հանկարծակի փոթորիկներից:

ՆԳԱԶԻՋԱ - կոմորերեն Ngazidja, ֆրանսերեն Grande Comore. կղզի Հնդկական օվկիանոսի **Մոզամբիկի նեղուցում**, **Կոմորյան կղզիների** կազմում՝ Մոզամբիկից ու **Մադագասկար** կղզուց հյուսիս: Կղզու հյուսիսային մասը զբաղեցված է Լա Գրիլ քարքարոտ հարթավայրով: Ափերը թույլ են մասնատված: Մակերեսը՝ 1 012,9 կմ^2: Երկարությունը՝ 73 կմ, լայնությունը առավելագույնը՝ 25 կմ: Բարձր կետը՝ Կարթալա հրաբուխ (2 361 մ):
Հայտնի է նաև *Գրանդ Կոմոր* և *Նիազիջա* անուններով:

ՆԵՂՈՍ - արաբերեն النيـــل ալ Նիիլ, անգլերեն Nile, ամհարերեն **አባይ ወንዝ** (**ናይል**) Էբայի վենիզի (Նայիլի), սվահիլի Nile, ֆրանսերեն Nil, կինյառուանդա Nili, դինկա Nail, եբրայերեն הַשִּׁיחוֹר / הַיְאוֹר Հա Շիհոր / Հա Յեոր. գետ Բուրունդիում, Ուգանդայում, Սուդանում, Հարավային Սուդանում, Ռուանդայում ու Եգիպտոսում: Նեղոսի սկիզբն է համարվում **Կագերա** գետը: Վերջինս կազմավորվում է Ռուվուբու և Նյաբարոնգո գետերի միախառնումից, հոսում հյուսիսային ուղղությամբ լայնարձակ ճահճոտ հովտով և Ուգանդայի տարածքում թափվում **Վիկտորիա** լիճը: Արտահոսելով այդտեղից Նեղոսը կոչվում է Վիկտորիա Նեղոս, այնուհետ շարունակելով իր հոսքը դեպի **Ալբերտ** լիճը և այնտեղից դուրս գալով, ստանում է Ալբերտ Նեղոս անունը, իսկ հետագայում՝ Բահր էլ Ջեբել: Երբ գետն ընդունում է իր ձախ՝ Էլ Գազալ վտակը, այն ստանում է **Սպիտակ Նեղոս** (Բահր էլ Աբյադ) անվանումը: Նեղոս անվանումը գետը ստանում է **Սպիտակ** և **Կապույտ Նեղոսների** միախառնումից հետո: Նեղոսը միակ գետն է, որը կտրում անցնում է **Սահարա** անապատը և գետաբերանում ստեղծելով շուրջ 24 000 կմ^2 դելտա՝ թափվում Միջերկրական ծով: Գլխավոր վտակներն են՝ **Սոբաթ** (Բահր էլ Ասֆար-Դեղին գետ), **Կապույտ Նեղոս** (Բահր էլ Ազրակ-Կապույտ գետ), Ադբարա (Բահր էլ Ասֆադ-Սև գետ) և այլն: Երկարությունը 6 853 կմ (Կագերա գետի հետ): Ավազանը՝ 2 800 000-3 400 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 500-15 000 մ^3/վրկ:
Ի սկզբանե անվանումը կարող էր առաջանալ սեմիտերեն nahal *հովիտ, գետահովիտ, գետ* արմատից:
Մեկ այլ վարկածի համաձայն անունն առաջացել է լիբիական ցեղերի լեզվի lil *ջուր* բառից, որը հետագայում ձևափոխվելով ընդունել է nil տեսքը:
Հին եգիպտացիները Նեղոսն անվանում էին Ḥ'pī կամ Iteru (Hapy) հիպի/ իտերու, որը թարգմանաբար նշանակում է *գետ*:
Ղպտերենում գետը հայտնի է Piaro կամ Phiaro, որը ևս նշանակում է *գետ*:
Հայերեն Նեղոս անվանումն առաջացել է հունարեն Νείλος և Nilus անունների հնչյունափոխության արդյունքում:

ՆԵՂՈՍԻ ԴԵԼՏԱ - արաբերեն النيـــل دلتـــا Դելտ ալ Նայլա, հին եգիպտերեն Tamehet. աշխարհի խոշորագույն գետերից մեկի՝ **Նեղոսի**, գետաբերանը: Ձգվում է Միջերկրական ծովի երկայնքով 240 կմ՝ արևմուտքից Ալեքսանդրիա քաղաքից մինչև արևելք՝ Պորտ Սաիդ քաղաքը: Ծովը թափվելու վայրից 160 կմ հարավ: Մակերեսը՝ 24 000 կմ^2: Երկարությունը՝ հյուսիսից հարավ 160 կմ: Նեղոսը գետաբերանի շրջանում, նախկինում տրոհվում էր յոթ բազուկների՝ Պելուզինի, Սեբենիտսի, Կանոպուսի, Ֆատնիտին, Բոլբիտինի, Տանիսի, Մենդեզի, որոնցից այժմ մնացել են

երկուսը՝ արևելքում Դամիետան (նախկին Բուկոլի կամ Ֆատնիտի) և արևմուտքում՝ Ռոզետան (նախկին Բոլբիտին):
Նեղոսի դելտա եզրույթն առաջին անգամ իրենց խոսքում կիրառել են հին հույն աշխարհագրագետները: Նրանք նշել են, որ Նեղոսի դելտան ունի եռանկյունաձև տեսք, այն նմանեցնելով հունական այբուբենի Δ դելտա տառի հետ: Հենց այստեղից էլ առաջացել է Նեղոսի դելտա եզրույթը:

ՆԻԳԵՐ - ֆրանսերեն Niger, անգլերեն Niger, մանդինգո Jeliba / Joliba, իգբո Orimiri / Orimili, թամաշեկ Egerew n-Igerewen, սոնգայ Isa Ber, զարմա Isa, հաուսա Kwara, յորուբա Oya. գետ Արևմտյան Աֆրիկայում: Սկիզբ է առնում Գվինեայի հարավարևելքից, Լեոնա-Լիբերիական բարձրավայրից:Հոսելով հյուսիսարևելյան ուղղությամբ, կտրում անցնում է Մալիի սահմանը, որտեղ Մասինա քաղաքի մոտ գետը բաժանվում է մի քանի բազուկների, որոնք կազմավորում են նրա ներքին դելտան: Տոմբուկտու քաղաքի մոտ բազմաթիվ բազուկները միանում են մեկ հոսքի մեջ և հոսում արևելյան ուղղությամբ, ապա փոխելով իր հոսքը հարավարևելյանի ու հոսելով Նիգերի, Բենինի և Նիգերիայի տարածքով, ստեղծելով շուրջ 25 000 կմ^2 մակերեսով լայնարձակ դելտա՝ թափվում **Գվինեական ծոցը**: Վտակներն են՝ **Բենուե**, Սոկոտո, Կադունա, Միլո, Բանի և այլն: Երկարությունը՝ 4 184 կմ: Ավազանը՝ 2 262 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 8 630 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 745 մ:
Գետի ափերին բնակվող տեղաբնիկները գետն անվանում են տարբեր ձևերով. Jeliba/Joliba *Մեծ գետ*, Orimiri / Orimili *Մեծ ջուր,* Egerew n-Igerewen *Գետերի գետ*, Isa Ber *Մեծ գետ*, Isa *գետ* և այլն:
Համարվում է որ գետի այժմյան անվան հիմքում ընկած է տուարեգերեն nehier-ren-ը՝ *հոսող ջուր* բառը:
Մեկ այլ վարկածի համաձայն գետի Նիգեր անվանումը լատինական niger *սև* բառի ածանցյալն է:

ՆԶՈՒԱՆԻ - կոմորերեն Ndzuwani, ֆրանսերեն Anjouan, արաբերեն أنجوان Անջավան. կղզի Հնդկական օվկիանոսի **Մոզամբիկի նեղուցում**, **Կոմորյան կղզիների** կազմում: Բարձր կետը՝ Նտրինգի հանգած հրաբուխն է (1 595 մ), որի խառնարանում է գտնվում Ձիալանձե լիճը: Մակերեսը՝ 424 կմ^2:
Նախկինում հայտնի էր Յոհաննա, Հինզուան և Զուանի անուններով:
Աշխարհագրական գրականության մեջ օգտագործվում է նաև Անժուան անունը:

ՆՅԱՍԱ - անգլերեն Lake Malawi, չևա (նյանջա) Nyanja ya Malaŵi, սվահիլի Ziwa Nyasa, պորտուգալերեն Lago Niassa. մեծությամբ երրորդ լիճն Աֆրիկայի արևելքում՝**Մեծ ռիֆտային հովտում**՝ Մալավիում, Մոզամբիկում ու Տանզանիայում: Լիճն են թափվում բազմաթիվ գետեր և գետակներ, որոնցից կարևորագույնները 14-ն են՝ Ռուհուհուն, Սոնգվեն, Հյուսիսային և Հարավային Ռուկուրուները, Դվանգվան, Բուան, Լիլոնգվեն, Լուֆիլյան և այլն, իսկ արտահոսում՝ **Շիրեն**: Նյասա լճում կան բազմաթիվ կղզիներ՝ Լիկոմա, Լինդո, Նգկոյո, Չիզումուլու և այլն: Մակերեսը՝ 29 600 կմ^2: Երկարությունը՝ շուրջ 590 կմ, լայնությունը՝ մինչև 75 կմ: Ծավալը՝ 8 643 կմ^3: Ափագիծը՝ 1 245 կմ: Միջին խորությունը՝ 292 մ, առավելագույնը՝ 706 մ: Ջրի պարզությունը՝ 13-23 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 477 մ:
Հայտնի է նաև Մալավի անվամբ:
Այժմյան անվանումը յաո լեզվից թարգմանաբար նշանակում է *լիճ*:

ՆՅԻԿԱ - անգլերեն Nyika Plateau. շեղանկյունաձև սարավանդ Մալավիի հյուսիսային և Զամբիայի հյուսիսարևելյան մասերում: Մակերեսը՝ մոտ 40 000 կմ^2:

Երկարությունը՝ մոտ 90 կմ, լայնությունը՝ շուրջ 50 կմ: Միջին բարձրությունը՝ 2 000-2 100 մ: Բարձր կետը՝ Նգանդա լեռ (2 605 մ):
Նյիկա անվանումը չևա (նյանջա) լեզվից թարգմանաբար նշանակում է *Աշխարհ*:

ՆՅԻՐԱԳՈՆԳՈ - ֆրանսերեն Nyiragongo. հրաբուխ Վիրունգա լեռներում, **Կիվու** լճից 20 կմ հյուսիս՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության արևելյան մասում: Հրաբխի գլխավոր խառնարանը, որն ունի շուրջ 2 կմ լայնություն ու 250 մ խորություն, զբաղեցված է եռացող լավային լճով: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 470 մ:
Հայտնի է նաև Գրաֆ Գոթզեն Կրատեր, Կիրունգա Շա Նինա Գոնգո, Կիրնունգ Շա Նիրագոնգո, Կիրունգ Ցա Գոնգո, Կիրունգո Շա Գոնգո, Կիրունգու Ցա Գոնգո, Կիրունգու Ցա Գոնգվե, Նինագոնգո, Նիրագոնվե, Ռեվիր Նգանգա և այլ անուններով:
Այժմյան անվանումը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է *Նա ով ծխում է*:

ՆՈ - անգլերեն Lake No. լիճ Հարավային Սուդանում, **Սեդ** ճահճից հյուսիս, **Սպիտակ Նեղոս** (Բահր էլ Ջեբել) և Բահր էլ Գազալ գետերի միախառնման վայրում: Լճի ափերը խիստ մասնատված են: Կան բազմաթիվ կղզիներ: Մակերեսը՝ շուրջ 100 կմ^2: Երկարությունը՝ 18,6 կմ, լայնությունը՝ 8,1 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 396 մ:

ՆՏՈՒՄԲԱ - ֆրանսերեն Lac Tumba. լիճ Կենտրոնական Աֆրիկայում, Կոնգոյի ժողովրդավարական Հանրապետության հյուսիսարևմտյան մասում: Իրենից ներկայացնում է ջրածածկ գետահովիտների համակարգ: Պատկանում է **Կոնգոյի** ավազանին և միացած է նրա հետ Իրեբու միջագետակով: Լիճն են թափվում՝ Բոլոնգո, Լոմբամբո, Զոբա գետերը: Լճում կան մի քանի կղզիներ: Մակերեսը՝ 500-765 կմ^2: Առավելագույն խորությունը՝ 7 մ, միջինը՝ 4 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 295 մ:
Հայտնի է նաև Տումբա անվամբ:

ՆՈՒԲԻԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ - արաբերեն النوبـــة صـحراء Սահրաու ալ Նուբաթու, անգլերեն Nubian Desert. անապատ Աֆրիկայում՝ **Սահարայի** արևելքում, **Նեղոս** գետի և **Աթբայ** լեռների միջև, Սուդանում ու Եգիպտոսում: Ռելիեֆում գերակշռում են արևելքից դեպի արևմուտք՝ 350-1000 մ բարձրությամբ, սանդղաձև իջնող սարավանդները: Անապատը խիստ մասնատված է լայն հովիտներ ունեցող վադիներով: Մակերեսը՝ 1 240 000 կմ^2: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 500 մ: Բարձր կետը՝ Օդա լեռ (2 259 մ):
Անունը ստացել է *Նուբիա* երկրամասից:

Շ

ՇԱՆ ԴԻ ՄԱՆԳՐԱԴԻ - պորտուգալերեն Ponta do Chão de Mangrade. հրվանդան Կաբո Վերդիում, **Կանաչ հրվանդանի** կղզիների՝ **Սանտու Անտան** կղզում: Աֆրիկայի արևմտյան կղզային ծայրակետը՝ 17° 03′ 15,21″ N, 25° 21′ 39,50″ W կոորդինատներով:
ՇԱՇ - արաբերեն شـاش عرق է Արաք Շաշ, ֆրանսերեն Erg Chech.ավազային անապատ **Սահարայի** արևմտյան մասում՝ Ալժիրում ու Մալիում: Անապատը տեղակայված է արևմուտքում՝ Էլ Էղլաբ սարավանդի, իսկ արևելքում՝ Տանձրուֆթ հարթավայրի միջև ընկած իջվածքում: Շաշ անապատի հյուսիսային մասին բնորոշ

են շուրջ 300 մ բարձրությամբ երկարավուն ավազաբլուրներ, որոնք դեպի հարավ իջնում են մինչև 50 մ: Անապատը ստեղծվել է Ուադի Սաուրայի գետաբերանի ավազային նստվածքների հողմահարման հետևանքով: Երկարությունը՝ մոտ1 000 կմ, լայնությունը՝ մոտ 200 կմ: Առավելագույն բարձրությունը՝ 500 մ, միջինը՝ 250 -350 մ:
Հայտնի է նաև *Էրգ Շեշ* անվամբ:
Այժմյան անվանումն արաբերենից թարգմանաբար նշանակում է *շղարշ*:

ՇԱՐԻ - ֆրանսերեն Chari, անգլերեն Chari River, արաբերեն شاري نهر Նահր Շարի. գետ Կենտրոնական Աֆրիկայում՝ Կենտրոնաաֆրիկյան Հանրապետությունում, Չադում ու Կամերունում: Կազմավորվում է Կենտրոնաաֆրիկյան Հանրապետությունում, Գրիբինգի ու Բամինգի գետերի միախառնումից և Չադի տարածքով հոսելով հյուսիսարևմտյան ուղղությամբ, հոսքի վերջին շրջանում կազմելով բնական սահման Կամերունի հետ, թափվում **Չադ** լիճը: Վտակներն են՝ Լոգոնն, Ուհամը, Բահր Սալամատը, Բահր Սարիը, Բահր Աուկը, Բահր Կեիտան, Բաիլին, Էրգիգը, Բա Իլլին և այլն: Երկարությունը՝ 1 400 կմ (Գրիբինգի գետի հետ): Ավազանը՝ 603 275 կմ^2: Ջրի ծախսը՝ 1 059 մ^3/վրկ (Նջամենա): Ակունքի բարձրությունը՝ 374 մ, գետաբերանինը՝ 284 մ:
Անվանումը կոտոկո ժողովրդի լեզվից թարգմանաբար նշանակում է *գետ, հոսք*:

ՇԵԼԻՖ - արաբերեն الشـــلف وادي Վադի ալ Շալաֆի, ֆրանսերեն Chelif. գետ Աֆրիկայում՝ Ալժիրում: Կազմավորվում է Սահարական Ատլասի կենտրոնական մասը կազմող Ամուր լեռներից սկիզբ առնող Ուեդ Նահրի և Ուեդ Բու Սքիֆի միախառնումից: Կտրում անցնում է Թուիլ բարձր սարավանդը ու կորցնելով իր հոսքի մեծ մասը, վերածվում ճահիճների ու ցեխային ավազանների անընդհատ շղթայի: Ընդունելով Նահր Վասեթ օժանդակը, գետը կտրուկ թեքվում է դեպի հյուսիս և հոսում խորը կիրճով, ապա թեքվելով արևմուտք ու Միջերկրական ծովի ափին զուգահեռ հոսելով շուրջ 230 կմ, Մոստագանեմ քաղաքի մոտ թափվում է ծովը: Վտակներն են՝ Ուեդ Դուրդյոն, Ռուինան, Ուեդ Ֆոդան, Ուեդ Սլին, Ուեդ Ռիուն, Ուեդ Ջեդիույան, Ուեդ Մինան, Օարանը, Դահմուսը, Ուեդ Ռասը և այլն: Երկարությունը՝ 733 կմ: Ավազանի մակերեսը՝ 59 150 կմ^2: Ակունքի բարձրությունը՝ 1 500 մ: Ջրի ծախսը՝ 49-170 մ^3/վրկ:
Անվանումը բերբերերեն լեզվից Icc n'yilef թարգմանաբար նշանակում է *Վարազի պաշտպան*:

ՇԻՐԵ - անգլերեն Shire River, չևա (նյանջա) Mtsinje wa Shire, պորտուգալերեն Rio Chire. գետ Հարավային Աֆրիկայում՝ Մալավիում ու Մոզամբիկում, **Զամբեզի** գետի ձախ վտակը: Արտահոսում է **Նյասա** լճի հարավարևելյան եզրից, թափվում Մալոմբե լիճը, ապա դուրս գալով լճից շարունակում իր ճանապարհը հարավային ուղղությամբ, կտրում անցնում Էլեֆան ճահիճը և Մոզամբիկի տարածքում միախառնվում մայր գետին: Օժանդակներն են՝ Ռուոն, Լիզունգվեն, Վանկուրումաձին, Մասենժիրին, Արևելյան Տանգաձին և այլն: Երկարությունը՝ 402 կմ: Ավազանը՝ 149 159 կմ^2: Ջրի ծախսը՝ 498 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 477 մ, գետաբերանինը՝ 28 մ:
Ըստ ավանդույթի գետը ստացել է Shire *Կոմսություն* անվանումը, 1859 թ-ին Դ. Լիվինգստոնի կողմից, որը հետագայում աղավաղվելով ընդունել է այժմյան *Շիրե* ձևը:

Չ

ՉԱԴ - ֆրանսերեն Lac Tchad, արաբերեն تشـــاد بحـــيرة Բուհայրաթու տա Ծադ, անգլերեն Lake Chad. անհոսք, ծանծաղ, ռելիկտային լիճ Կենտրոնական Աֆրիկայում՝ Չադում, Կամերունում, Նիգերում ու Նիգերիայում: Ջրի մակարդակի անոմալ բարձրացումների ժամանակ այն սկսում է հոսել Բահար էլ Գազալ գետի հունով դեպի **Բոդելե** իջվածքը: Լճի ափերը հիմնականում ճահճային են: Չադը հայտնի է իր լողացող կղզիներով՝ Կանեմբա, Կանուրի, Բուլալա և Դացա: Արևելյան մասում են գտնվում մի շարք կղզեխմբեր՝ Բոգոմերոմը, Բուդուման, Կարկան,Կուրին և այլն: Լիճն են թափվում Շարի, Մբուլի, Նգադա, Դորմա և բազմաթիվ այլ գետեր, իսկ արտահոսում՝ Բահար էլ Գազալը: Մակերեսը՝ 1 540-26 000 կմ^2: Ծավալը՝ 72 կմ^3: Ավազանի մակերեսը՝ 2 381 635 կմ^2: Ափագիծը՝ 500-800 կմ: Միջին խորությունը՝ 4,11 մ, առավելագույնը՝ 10,5 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ մոտ 280 մ
Նախկինում հայտնի էր Նուբա ճահիճ, Կուար, Բոռնո և այլ անուններով:
Այժմյան անվանումը կանուրի լեզվից թարգմանաբար նշանակում է *Մեծ ջուր* (*ջրի մեծ տարածք*):

ՉԱՄԲԵՇԻ - անգլերեն Chambeshi River, ֆրանսերեն Chambeshi. գետ Զամբիայի հյուսիս-արևելքում, **Լուապուլայի** աջ վտակը: Սկիզբ է առնում Զամբիայի հարավ-արևելյան մասից, **Տանգանյիկա** լճի մոտ գտնվող լեռներից և հոսելով հարավային ու հարավարևմտյան ուղղությամբ, կտրում անցնում է Բանգվեուլու ճահիճն ու միախառնվում մայր գետին: Օժանդակներն են՝ Լուբանսենշին, Լուբուն, Կալունգուն, Չամֆուվուն և այլն: Երկարությունը՝ 480 կմ: Ակունքի բարձրությունը՝ 1 760 մ, գետաբերանինը՝ 1 163 մ:

ՉԻԼԱԼՈ - ամհարերեն **የቺላሎ ተራራ** Ըչիլալո թրարա. հանգած հրաբուխ Եթովպական խզվածքի արևելյան եզրին՝ Եթովպիայի հարավ-արևելքում, Օրոմիա շրջանում: Լեռան հիմքը էլիպսաձև է 30x20 կմ չափերով, գագաթն իրենից ներկայացնում է շուրջ 6 կմ տրամագիծ ունեցող, գրեթե կլոր կալդերա, որի արևելյան եզրն է համարվում լեռան գագաթը: Երկրաբանորեն Չիլալոն համարվում է **Եթովպական բարձրավանդակի** մասը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 082 մ, հարաբերականը՝ 873 մ:

ՉԻԼՎԱ - չևա (նյանջա) Nyanja ya Chilwa, անգլերեն Lake Chilwa. լայնարձակ ջրաճահճային անդաստաններով շրջապատված, խոշոր, անհոսք, աղի լիճ Մալավիի ու Մոզամբիկի սահմանագլխին: Զբաղեցնում է շուրջ 2250 կմ^2 մակերես ունեցող գոգավորության կենտրոնական մասը: Լճում կան կղզիներ, որոնցից խոշորագույններն են՝ Չիգին և Թոնգվեն: Չիլվա լիճն են թափվում Սամբանի, Ֆալոմբե և այլ գետեր: Մակերեսը՝ 1 750 կմ^2: Երկարությունը՝ 60 կմ, լայնությունը՝ 42 կմ: Ծավալը՝ 1,925 կմ^3: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 7 500 կմ^2: Ափագիծը՝ 200 կմ: Միջին խորությունը՝ 1,1 մ, առավելագույնը՝ 2,7 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 624 մ:
Մոզամբիկում հայտնի է Շիրուա անվամբ:

ՉՈՔԻ - ամհարերեն **ጮቄ ተራራ** Չոքի թրարա. բազմագագաթ լեռ Եթովպիայում, **Թանա** լճից հարավ, Գոջամ լեռներում: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 088 մ, հարաբերականը՝ 2 213 մ:

Անվանումն ամիարերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Աղաղակող լեռ* :

Պ

ՊԱԼՄԱ - իսպաներեն La Palma. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում, **Կանարյան կղզեխմբի** կազմում: Կղզու հյուսիսային մասում է գտնվում աշխարհի ամենամեծ էռոզիոն ծագմամբ խառնարանը՝ Կալդերա դե Տաբուրիենտեն: Կղզու կենտրոնից մինչև հարավային մասը ձգվում է Կումբրե Վեխա հրաբուխների շղթան, որոնցից առավել հայտնի է Տենեգիան, որի վերջին ժայթքումը եղել է 1971 թ-ին: Մակերեսը՝ 708,32 կմ^2: Երկարությունը՝ 45 կմ, լայնությունը՝ մինչև 28 կմ: Ափագիծը՝ 155,55 կմ: Բարձր կետը՝ Մուչաչոս ժայռ (2 426 մ):
Հայտնի էր նաև Սան Միգել դե լա Պալմա, Բենաուարի և Յունոնիա Մայոր անուններով:
Կղզու այժմյան անվանումը կապվում է այստեղ լայն տարածում ստացած Phoenix canariensis տեսակի արմավենուց, որի իսպաներեն Palma անունը բառացի նշանակում է *Արմավենի* :

ՊԵՄԲԱ - սվահիլի Mfereji Pemba, անգլերեն Pemba Channel.Հնդկական օվկիանոսի նեղուց, Աֆրիկայի արևելյան մասում: Անջատում է Տանզանիայի Տանգա նահանգը **Պեմբա** կղզուց: Ողողում է Տանզանիայի ու Քենիայի ափերը: Նեղուցն են թափվում Պանգանի, Ումբա և այլ գետեր: Այստեղ են գտնվում Ֆունդո, Մատուբինի, Պանգա կղզիները: Երկարությունը՝ մինչև 100 կմ, լայնությունը՝ 55-78 կմ: Անվանումը ստացել է ***Պեմբա*** կղզուց:

ՊԵՄԲԱ - սվահիլի Pemba, անգլերեն Pemba Island, արաբերեն جزيرة بمبا Ջազիր աթ Պեմեբա. մարջանե կղզի Հնդկական օվկիանոսում, Աֆրիկայի արևելյան մասում, **Զանզիբար** կղզեխմբում: Մայրցամաքից բաժանվում է **Պեմբա** նեղուցով: Մակերեսը՝ 984 կմ^2: Երկարությունը՝ 67 կմ, լայնությունը՝ 22 կմ: Բարձր կետը՝ 99 մ: Հայտնի է նաև արաբերեն جزيرة الخضراء ալ Ջազիրա ալ Խադրա, *Կանաչ կղզի* անվամբ:

ՊԻՏՈՆ ԴԵ ՆԵԺ - ֆրանսերեն Piton des Neiges. վահանաձև հանգած հրաբուխ **Ռեյունիոն** կղզու կենտրոնական մասում, համանուն լեռնազանգվածում: Լեռան լանջերը զառիթափ են ու հայտնի շուրջ 100 ջրվեժների առկայությամբ: Գագաթը կտրտված է երեք հիմնական իջույթներով՝ Մաֆատ (հյուսիս-արևմուտք), Սալազի (հյուսիս-արևելք) և Սիլաոս (հարավ): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 070,5 մ: Անվանումը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է *Ձյունե պիկ* :

ՊՐԻՆՍԻՊԻ - պորտուգալերեն Ilha do Príncipe. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսի **Գվինեական ծոցում**: Կղզու հարավային մասը լեռնոտ է, իսկ հյուսիսայինն ու կետրոնականը՝ հարթավայրային: Պրինսիպիի խոշոր գետերն են՝ Ագուլյաշը, Բանզուն ու Պապագայուն: Մակերեսը՝ 136 կմ^2: Երկարությունը՝ 19,3 կմ, լայնությունը՝ 10,6 կմ: Բարձր կետը՝ Պրինսիպի լեռ (948 մ):
Կղզին 1471 թ.-ի հունվարի 17-ին հայտնաբերվել է պորտուգալացի ծովագնացների կողմից և ստացել Սանտու Անտան անվանումը:
1475 թ-ին այն վերանվանվել է Պորտուգալիայի թագաժառանգ արքայազն *Ֆոնսուի* պատվին:

Ջ

ՋԱԴՈ - ֆրանսերեն Plateau du Djado. սարավանդ **Սահարա** անապատում, Նիգերի հյուսիս-արևելքում: Հյուսիսից եզերված է Մանգուենի, արևելքից՝ Չիգայի սարավանդներով, հարավից՝ Բիլմայի մեծ էրգ անապատով, հարավ-արևմուտքից՝ Տաֆասասետ ավազային հարթավայրով: Ջադո, Մանգենի, Չիգայի սարավանդները և Տումո լեռները պարփակում են Մադամա մեծ հարթավայրը: Մակերեսը՝ մինչև 60 000 կմ^2: Երկարությունը՝ մոտ 380 կմ, լայնությունը՝ շուրջ 260 կմ: Միջին բարձրությունը՝ 400-1000 մ: Առավելագույն բարձրությունը ծովի մակարդակից՝ 1042 մ:
Այստեղ են գտնվում միջնադարյան *Ջադո* բնակավայրի փլատակները, որից էլ սարավանդը ստացել է իր անունը:

ՋԵՐԲԱ - լատիներեն Meninx, արաբերեն جربة Ջարիբա, ֆրանսերեն Djerba. կղզի Միջերկրական ծովի՝ **Գաբես** ծոցի հարավային մասում: Աֆրիկայի միջերկրածովյան ափի խոշորագույն կղզին: Մակերեսը տափակ է, ջրային աղբյուրը՝ արտեզյան հորերը: Մակերեսը՝ 514 կմ^2: Երկարությունը՝ 31 կմ, լայնությունը՝ 31 կմ: Ափագիծը՝ 150 կմ: Բարձր կետը՝ Դհարեթ Գելալա բլուր (53 մ):
Կղզին հիշատակվել է Հոմերոսի «Ոդիսականում» Լոտոֆագի անվամբ:
Այն հայտնի էր նաև Բրախիոն, Մենինքս, Գերբա, Գիրբա և Ջարբաի անուններով:
Անվանվել է կղզու այժմյան վարչական կենտրոն Հումթ Սուկ բնակավայրի, նախկին *Ջերբա* անունից:

ՋՈՍ - անգլերեն Jos Plateau. սարավանդ Հյուսիս Գվինեական բարձրավայրում, **Նիգերի** և նրա վտակ **Բենուեի** միջագետքում, Նիգերիայի կենտրոնական մասում: Այստեղից են սկիզբ առնում **Նիգեր** գետի ու **Չադ** լճի ավազաններին պատկանող բազմաթիվ գետեր՝ Կադունան, Գալման, Դեպը, Շեմանկարը, Մադան, Բունգան, Գոնգոլան և այլն: Մակերեսը՝ 7 830 կմ^2: Միջին երկարությունը՝ 300-320 կմ, լայնությունը՝ շուրջ 180 կմ: Միջին բարձրությունը՝ 1 280 մ: Բարձր կետը՝ Շարե պիկ լեռ (1 698 մ):
Հայտնի էր նաև Բաուչի անվամբ:
Մեծ հավանականությամբ այժմյան անվանումը ստացել է այստեղ տեղակայված Ջոս քաղաքից, որի անունն իր հերթին, աղավաղման արդյունք է նախկինում այստեղ գտնվող Գվոշ գյուղի անունից:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումն առաջացել է տեղաբնիկների լեզվի jasad *մարմին* բառից:

ՋՈՐՋ - անգլերեն Lake George, սվահիլի Ziwa Dweru. լիճ Աֆրիկայում, Ուգանդայում՝ **Էդուարդ** լճից հյուսիս-արևելք: Ափերը խիստ մասնատված են՝ կան բազմաթիվ կղզիներ: Լիճն են թափվում՝ Մպանգա, Բուհինդագի, Դուրա և այլ գետեր: Կագինգա ջրանցքով արտահոսում է դեպի **Էդուարդ** լիճը: Մակերեսը՝ 250 կմ^2: Երկարությունը՝ 23 կմ, լայնությունը՝ 18 կմ: Ծավալը՝ 0,6 կմ^3: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 9 000 կմ^2: Միջին խորությունը՝ 2,4 մ, առավելագույնը՝ 7 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 915 մ:
Հայտնի է նաև Դվերու անվամբ:
Անվանվել է 1889 թ-ին, բրիտանացի հետազոտող Հենրի Մորտոն Սթենլիի կողմից, արքայազն George-ի, հետագայում Միացյալ Թագավորության թագավոր *George V-ի* պատվին:

ՋՈՒԲԲԱ - սոմալիերեն Wabiga Jubba, արաբերեն نهر جوبا Նահր Ջուբանան, իտալերեն Giuba, անգլերեն Jubba. գետ Եթովպիայում ու Սոմալիում: Կազմավորվում է Եթովպիայից՝ Մենդեբո լեռներից սկիզբ առնող Գանալե Դորիա ու Դաուա գետերի միախառնումից, ապա հոսելով հարավային ուղղությամբ, Կիսմայո բնակավայրից 12 կմ հյուսիս-արևելք, թափվում Հնդկական օվկիանոս: Վտակներն են՝ **Ուեբի Շեբելեն**, Դուդումեյը, Լակդերեն, Մակալան, Ֆար Օսբայը և այլն: Երկարությունը՝ 1 004 կմ (1 658 կմ Գանալե Դորիա վտակի հետ): Ավազանը՝ 497 626 կմ^2: Ջրի ծախսը՝ 127- 808 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 253 մ:
Հայտնի է նաև Ջուբա, Գանալե, Ջենալե անուններով:

Ռ

ՌԱՍ ԴԱՇԵՆ - ամհարերեն **ራስ ዳሸን / ራስ ደጀን** Ռաս Դաշեն / Ռաս Դեջեն. բազմագագաթ լեռ **Եթովպական բարձրավանդակի** հյուսիսային մասում՝ **Սըմեն** լեռներում: Գագաթներն են՝ Անկուա 4 462 մ (380 մ), Կիդիս Յարեդ 4 453 մ (730 մ), Հեյ 4 125 մ (660 մ) և Աբիերի 3 750 մ (780 մ): Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 533 մ, հարաբերականը՝ 3 980 մ:
Հայտնի է նաև Ռաս Դեջեն անվամբ:
Այժմյան անվանումն ամհարերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Գլխավոր պահապան*:

ՌԱՍ ՀԱՖՈՒՆ - սոմալիերեն Xaafuun, արաբերեն رأس حافون Ռաս Հաֆոն, իտալերեն Dante / Capo Hafun, անգլերեն Ras Hafun. Աֆրիկայի արևելյան ծայրակետը՝ 10° 26′ 36,98″ N, 51° 24′ 54,37″ E: Շուրջ 187 մ բարձրությամբ ժայռոտ հրվանդան Սոմալիի հյուսիսարևելքում: Սոմալիի ծովափի հետ միացված է 20 կմ երկարությամբ, 1-3 կմ լայնությամբ և 5 մ բարձրությամբ ավազե պարանոցով: Երկարությունը՝ 40 կմ:
Հայտնի է նաև Հաֆուն ու Դանտե անուններով:
Անվանումը կազմված է արաբերեն رأس ռաս *գլուխ*, *հրվանդան* և սոմալիերեն Xaafuun *հմայում*, *թովում* բառերից:

ՌԵՅՈՒՆԻՈՆ - ֆրանսերեն La Réunion. հրաբխային կղզի Հնդկական օվկիանոսում, **Մադագասկար** կղզուց 700 կմ արևելք՝ **Մասկարենյան կղզիներից** ամենամեծը: Մակերեսը լեռնոտ է՝ մոտ 20%-ը ծածկված լավային ծածկույթով: Կան բազմաթիվ գետեր՝ Սենտ Էտիենը, Ռամպարը, Լանժևենը, Մարսուենը, Իստը, Սեն Դենին, Գալեն, Բերնիկան, Մատը, Պալեն և այլն: Մակերեսը՝ 2 512 կմ^2: Երկարությունը՝ 75 կմ, լայնությունը՝ 55 կմ: Ափագծի երկարությունը՝ 207 կմ: Բարձր կետը՝ Պիտոն դե Նեժ լեռ (3 070,5 մ):
Նախկինում հայտնի էր Դիան Մորգաբին, Սանտա Ապոլոնիա, Բուրբոն և Բոնապարտ անուններով:
Ռեյունիոն անվանումը ֆրանսերենից թարգմանաբար նշանակում է *միացում*, *միավորում*:
Այժմյան անվանումը ստացել է Ֆրանսիայի Ազգային Ժողովի 1793 թ. մարտի 23-ի որոշմամբ, ի հիշատակ 1792 թ. օգոստոսի 10-ի ապստամբած մարսելցիների և ազգային գվարդիայի *հայրենասերների միավորման*:

ՌԻՈ ԴԵ ՕՐՈ - արաբերեն الدهب واد جزيرة شبه Շբիհի Ջազիրաթ Ուադ ալ Դահաբ, իսպաներեն Península de Río de Oro. թերակղզի Արևմտյան Սահարայում,

Ատլանտյան օվկիանոսի ափին: Արևելքից ողողվում է Ռիո Օրո ծոցի, իսկ արևմուտքից՝ Ատլանտյան օվկիանոսի ջրերով: Երկարությունը մոտ 43 կմ, լայնությունը՝ 2-6 կմ: Առավելագույն բարձրությունը ծովի մակարդակից՝ մինչև 20 մ:
Հայտնի է նաև Ուադ ադ Դահաբ և Վիլյա Սիսներոս անուններով:
Այժմյան անվանումը իսպաներենից թարգմանաբար նշանակում է *Ոսկե գետ*:

ՌԻՖ - արաբերեն الـــريف Ար Ռիֆ / الـــريف جبـــال Ջեբել ար Ռիֆ, ֆրանսերեն Rif, բերբերերեն ⵓⵔⵉⴼ/ⵓⵔⵔⵉⴼ/ⵏⵔⵔⵉⴼ Արիֆ / Արրիֆ / Նկոր. լեռնաշղթա Մարոկկոյի հյուսիսում՝ Միջերկրական ծովի ափին, Ջիբրալթարի նեղուցից մինչև Մուլույա գետի գետաբերանը: Երկրաբանական տեսակետից իրենից ներկայացնում է Պիրենեյան թերակղզու՝ Անդալուսյան լեռների շարունակությունը: Լեռնաշղթան կտրտված է բազմաթիվ գետերի կիրճերով: Հարավային մասում այն վերածվում է Մարոկկոյան Մեսետա հարթավայրի: Այստեղից են սկիզբ առնում՝ Ջերակնա, Նեկոր, Ուրինգա, Աուլայ, Աուդուր, Լաու, Լուկոս և բազմաթիվ այլ գետեր: Մակերեսը՝ 34 631 կմ^2: Երկարությունը՝ 201 կմ, լայնությունը՝ 314 կմ: Միջին բարձրությունը՝ 400-1 600 մ: Բարձր կետը՝ Տիդղին լեռ (2 456 մ):
Լեռների բերբերերեն Արրիֆ անվանումը թարգմանավար նշանակում է *Ափ* կամ *Երկրի ծայր*:

ՌՈԴՐԻԳԵՍ - անգլերեն Rodrigues, ֆրանսերեն Rodrigues. հրաբխային կղզի Հնդկական օվկիանոսի արևմտյան մասում, **Մադագասկար** կղզուց արևելք՝ **Մասկարենյան կղզիներից** ամենաարևելյանը: Կղզին շրջապատված է բուստախութերով, ափերը խիստ մասնատված են: Այստեղ կան բազմաթիվ գետեր՝ Սիգանգ, Բանան, Բալեյն, Կասկադ Վիկտուար, Կոկոս և այլն: Մակերեսը՝ 104 կմ^2: Երկարությունը՝ 18 կմ, լայնությունը՝ 8 կմ: Բարձր կետը՝ Լիմոն լեռ (398 մ):
Հայտնի էր նաև Բայգառոյս և Մարիան անուններով:
Կղզին իր այժմյան անվանումը 1528 թ-ի փետրվարին ստացել է պորտուգալացի հետազոտող և ծովագնաց *Դիոգու Ռոդրիգեսի* պատվին:

ՌՈԽԵՖԵԼԴ - աֆրիկաանս Roggeveld, անգլերեն Roggeveld. սարավանդ Հարավային Աֆրիկայում՝ **Կառու** իջվածքում: Արևմուտքից եզերված է **Ռոխեֆելդ**, հյուսիսից՝ Կարաբելդե լեռներով, հարավից՝ Նյուվեֆելբերգեր, արևելքից՝ Օնգերս գետի հովտով: Այստեղով են հոսում՝ Գրեյթ Ֆիշ, Սակ, Խրուտ Ռիտ, Խրուն, Բրակ, Սոլթ, Կրոմ և այլ գետեր: Երկարությունը՝ շուրջ 260 կմ, լայնությունը՝ 170 կմ: Միջին բարձրությունը՝ 1 000-1 500 մ:
Անվանվել է այստեղ լայն տարածում ունեցող Secale africanum Stapf տեսակի աֆրիկյան աշորայից՝ *Տարեկանի*, (*աշորայի) դաշտ*:

ՌՈԽԵՖԵԼԴ - անգլերեն Roggeveld Mountains, աֆրիկաանս Roggeveldberge.լեռնաշղթա Հարավային Աֆրիկայում՝ Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Լեռները ձգվում են հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ Կալվինիա ու Սազերլենդ քաղաքների միջև: Հյուսիսից եզերված է Վերին Կառու իջվածքով, հարավից՝ Կոմսբերգ լեռներով, արևելքից՝ **Ռոխեֆելդ** սարավանդով և արևմուտքից՝ **Կապի** լեռներով: Լեռների լանջերից են սկիզբ առնում՝ Ռեմոսթեր, Ֆիշ, Տանկվա, Ռույվեր և այլ գետեր: Երկարությունը՝ շուրջ 185 կմ: Բարձր գագաթը՝ Սնիյուքրանս լեռ (1 739 մ):

Անվանվել է այստեղ լայն տարածում ունեցող Secale africanum Stapf տեսակի աֆրիկյան աշորայից՝ *Տարեկանի*, (*աշորայի)դաշտ*:

ՌՈՒԿՎԱ - սվահիլի Ziwa Rukwa, անգլերեն Lake Rukwa. անհոսք, ծանծաղ, աղի լիճ Տանզանիայի հարավարևմտյան մասում, **Տանգանյիկա** և **Նյասա** լճերի միջև: Տեղակայված է Կենտրոնաաֆրիկյան խանդակի մասը կազմող տեկտոնական Ալբերտին իջվածքում: Հարավարևելքից եզերված է Մբեյա լեռնաշղթայով, արևմուտքից՝ Ուֆիպա ու Մբիզի զառիվերներով, հյուսիսարևելքից՝ Սանջ լեռան քարքարոտ զառիթափերով: Լիճն են թափվում՝ Լուպա, Չամբուա, Սոնգվե, Ռունգվա, Մոմբա և այլ գետեր: Մակերեսը՝ 2 570-5 760 կմ^2: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 79 337 կմ^2: Երկարությունը՝ 180 կմ, լայնությունը՝ 32 կմ: Միջին խորությունը՝ 3,5 մ, առավելագույնը՝ 5 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 802 մ:
Լիճը հայտնի էր նաև Լեոպոլդ անվամբ:

ՌՈՒՎԵՆԶՈՐԻ - անգլերեն Rwenzori Mountains, սվահիլի Safu ya Ruwenzori, ֆրանսերեն Rwenzori. լեռներ և լեռնազանգված Կենտրոնական Աֆրիկայում՝ Ուգանդայի ու Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության սահմանագլխին: Լեռնաշղթայի վեց հիմնական գագաթներն են՝ **Սթենլի**, **Սփիք**, **Բեյքեր**, Էմին, Գեսսի ու Լուիջի դի Սավոյան: Ժամանակին հայտնի էին շուրջ 7,5 կմ^2 մակերեսով՝ 43-ի հասնող սառցադաշտերից: Այժմ սառցապատման մակերեսը կազմում է 1,5 կմ^2 և գնալով նվազում է: Մակերեսը՝ 9 151 կմ^2: Երկարությունը՝ մինչև 161 կմ, լայնությունը՝ մինչև 114 կմ: Բարձր գագաթը՝ **Սթենլի** լեռ (5 109 մ):
Հավանական է, որ սրանք են անտիկ աշխարհագրագետների կողմից հիշատակվող Լուսնային լեռները:
Հայտնի է նաև Ռուվենզուրուու, Ռուվենյուրա, Ռունսորո, Ռունդյուորու, Ռուվենզուզու, Ռուվենզերի, Ռուենզորի և բազմաթիվ այլ անուններով:
Այժմյան անվանումն առաջացել է բատորո լեզվի Rwen dschura արտահայտությունից, որը կարելի է թարգմանել *Ինչպես ամպոտ թագավոր*:

ՌՈՒՎՈՒՄԱ - պորտուգալերեն Rio Rovuma, սվահիլի Mto wa Ruvuma, անգլերեն Ruvuma River. գետ Արևելյան Աֆրիկայում՝ Տանզանիայում ու Մոզամբիկում: Սկիզբ է առնում **Նյասա լճից** արևելք գտնվող Սոնգեյա քաղաքից հարավ ընկնող շուրջ 1500 մ բարձրությամբ լեռներից, հոսում դեպի հարավ, ապա փոխելով իր ուղղությունը արևմտյանի և կազմելով Տանզանիայի ու Մոզամբիկի սահմանը, թափվում Հնդկական օվկիանոս: Վտակներն են՝ Լուժենդան, Մեսինժին, Լուշերինգոն, Շիուլեգին, Մուհուվեսին, Մատիուն, Նինգան և այլն: Երկարությունը՝ 1 083 կմ: Ավազանը՝ 165 760 կմ^2: Ջրի ծախսը՝ 475 մ^3/վրկ:
Հայտնի է նաև Ռովումա անվամբ:

ՌՈՒՖԻՋԻ - սվահիլի Mto wa Rufiji, անգլերեն Rufiji River. **Նյասա լճից** արևելք գտնվող՝ Լիվինգստոնի լեռներից սկիզբ առնող Կիլոմբերո և Լուվեգու գետերի միախառնումից կազմավորվող գետ, Տանզանիայում: Վերին հոսանքի շրջանում իրենից ներկայացնում է սովորական լեռնային գետ, Շոգուլի ջրվեժից հետո հոսում լայն հովտով ու **Մաֆիա** կղզու դիմաց՝ կազմելով դելտա թափվում Հնդկական օվկիանոս: Գետի դելտայում է գտնվում աշխարհի ամենամեծ մանգրային անտառը: Վտակներից են՝ Մեծ Ռուահան, Լուվեգուն, Ռուհուջին, Պիտուն և այլն: Երկարությունը՝ բուն Ռուֆիջին 300 կմ, Ռուֆիջի-Կիլոմբերո՝ 745 կմ, Ռուֆիջի-Մեծ Ռուահա՝ 910 կմ: Ավազանը՝ 178 000 կմ^2: Ջրահավաք ավազանը՝ 204 780 կմ^2: Ջրի ծախսը՝ 86 մ^3/վրկ- 5 098 մ^3/վրկ:

Հայտնի է նաև Լուֆիջի և Ռուֆիյի անուններով:

Ս

ՍԱԲՅԻՆՅՈ - կինյառուանդա Ikirunga cya Sabyinyo, ֆրանսերեն Sabyinyo, անգլերեն Mount Sabyinyo, սվահիլի Mlima Sabyinyo. հանգած հրաբուխ Արևելյան Աֆրիկայում, Վիրունգա լեռներում, **Կիվու** լճից հյուսիս-արևելք, Բունյոնյի լճից արևմուտք՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության, Ռուանդայի ու Ուգանդայի սահմանագլխին: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 645 մ:
Լեռան Sabyinyo անվան հիմքում ընկած է կինյառուանդա լեզվի iryinyo *ատամ, ակռա* բառը:

ՍԱԹԻՄԱ - սվահիլի Mlima Satima, անգլերեն Mount Satima, մասայերեն Ol Donyo Lesatima. լեռնագագաթ **Աբերդեր** լեռնաշղթայում, **Մեծ ռիֆտային հովտի** արևելյան լանջին՝ Քենիայում: Լեռը շրջապատված է Վիշապի Ատամներ անվամբ մի շարք սրածայր հրաբխային կոներով: Սաթիմայի հյուսիսարևմտյան լանջին, 3 600-3800 մ բարձրության վրա կան մորենիներ: Լեռան լանջերից են սկիզբ առնում Էվասո Նյիրո, Սեգարա, Սուգու Ռոյի, Մուտարա և այլ գետեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 001 մ, հարաբերականը՝ 2 081 մ:
Հայտնի է նաև Լեսաթիմա անունով:
Այժմյան անվանումը մասայերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Ցլիկի լեռ* :

ՍԱԼ - պորտուգալերեն Ilha do Sal. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում, **Կանաչ Հրվանդանի կղզիներում** ամենահարթը: Կղզու եզրակետերն են հյուսիսասայինը՝ Պոնտա Նորտին, հարավայինը՝ Սինոն, արևմտյանը՝ Ալտարը, արևելյանը՝ Մոռինյու Վերմելյուն: Այստեղ կան սակավաջուր գետակներ ու ջրահոսքեր՝ Ֆեյժուալը, Ֆոնտունան, Պետինյան, Բեյրունան և այլն: Մակերեսը՝ 216 կմ^2:Երկարությունը՝ 29,7 կմ, լայնությունը՝ 11,8 կմ: Բարձր կետը՝ երկգագաթանի Գրանդի լեռ (406մ):
Նախկինում հայտնի էր Լյանա անվամբ:
Այժմյան անվանումը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է *աղ* , որով ակնարկվում է կղզու աղի հարուստ պաշարները:

ՍԱՀԱՐԱ - արաբերեն الصحراء الكبرى ալ Սահրա ալ Քուբրա, ֆրանսերեն Sahara, անգլերեն Sahara, բերբերերեն ⵜⵉⵏⵍⵓⴼ Թինիրի. աշխարհի խոշորագույն շոգ անապատը Հյուսիսային Աֆրիկայում: Անապատը մասամբ զբաղեցնում է Արևմտյան Սահարայի, Մարոկկոյի, Մավրիտանիայի, Ալժիրի, Մալիի, Թունիսի, Լիբիայի, Նիգերի, Չադի, Սուդանի տարածքները: Իր մեջ է ներառում բազմաթիվ բնական մարզեր՝ **Տեներե**, **Արևմտյան** և **Արևելյան Մեծ Էրգերը**, **Տանձրուֆթը**, **Էլ Համրան**, **Շաշը** , **Իգիդին**, **Լիբիական անապատը**, Տալակ անապատը և այլն: Ամեն տարի անապատն անընդհատ մեծանում է ու լայնանում հարավային ուղղությամբ 6-10 կմ-ով: Մակերեսը՝ շուրջ 8 600 000 կմ^2: Երկարությունը՝ 4 800 կմ, լայնությունը՝ 800-1 200 կմ:
Հայտնի էր նաև Terra Deserta *Լքյալ հողեր* ու Մեծ անապատ անուններով:
Այժմյան անվանումն առաջացել է արաբերեն صَحراء սահրա *անապատ* բառից:
Մեկ այլ վարկածի համաձայն, անվանումը հին արաբերենից թարգմանաբար նշանակում է *կարմրադարչնագույն*:

ՍԱՀԵԼ - արաբերեն الساحل ալ Սահիլ, ֆրանսերեն Sahel, անգլերեն Sahel, ամհարերեն ሳሕል Սալիլի. մարգագետիններից, սավաննաներից ու տափաստաններից կազմված բնական աշխարհագրական մարզ Աֆրիկայում: Համարվում է անցումային շրջան **Սահարա** անապատի ու **Սուդանի** (բնական մարզ) միջև: Սահելը ձգվում է արևմուտքում Ատլանտյան օվկիանոսից մինչև Կարմիր ծովը՝ արևելքում: Զբաղեցնում է Գամբիայի, Սենեգալի, Մավրիտանիայի, Մալիի, Ալժիրի, Բուրկինա Ֆասոյի, Նիգերի, Նիգերիայի, Կամերունի, Չադի, Սուդանի, Եթովպիայի ու Էրիթրեայի տարածքների մի մասը: Մակերեսը՝ 3 053 200 կմ^2: Երկարությունը՝ շուրջ 6 000 կմ, լայնությունը՝ 150-800 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 200-400 մ:
Անվանումն արաբերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *ափ* կամ *սահման*:

ՍԱՆ ԹՈՄԵ - պորտուգալերեն Ilha de São Tomé.հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսի **Գվինեական ծոցում**: Կղզին լեռնոտ է, ափերը զառիվեր ու ժայռոտ: Կան խառնարանային լճակներ ու բազմաթիվ փոքր գետեր՝ Ռիու Գրանդին, Մանուել Ժորժին, Մարտին Մենդիշը, Մելուն և այլն: Մակերեսը՝ 854 կմ^2: Երկարությունը՝ 48 կմ, լայնությունը՝ 32 կմ: Բարձր կետը՝ Սան Թոմե պիկ (2 024 մ):
Կղզին իր անվանումը ստացել է *Սուրբ Թոմասի* պատվին:

ՍԱՆ ՆԻԿՈԼԱՈՒ - պորտուգալերեն Ilha de São Nicolau.հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում՝ **Կանաչ Հրվանդանի կղզիների** հյուսիսային մասում: Կղզու եզրակետերն են հյուսիսայինը՝ Էշպեշին, հարավայինը՝ Վերմելյառիան, արևմտյանը՝ Բրոնկուն, արևելյանը՝ Կալյետան: Այստեղ կան սակավաջուր գետակներ ու ջրահոսքեր՝ Պրետա, Պուլգա, Կոշե, Բրավա, Ռեկանտու և այլն: Վաղ անցյալում այստեղ դիտվում էր հզոր հրաբխային գործունեություն, որի հետևանքով կղզու մակերեսը ընդունեց այժմյան տեսքը: Լեռնազանգվածները հաջորդվում են լայնարձակ հովիտներով: Մակերեսը՝ 388 կմ^2: Երկարությունը՝ 44,5 կմ, լայնությունը՝ 25 կմ: Բարձր կետը՝ Գորդու լեռ (1 304 մ):
Անվանումը ստացել է *Սուրբ Նիկողայոս Զմյուռնացու* պատվին:

ՍԱՆ ՎԻՍԵՆՏԻ - պորտուգալերեն Ilha de São Vicente.հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում՝ **Կանաչ Հրվանդանի կղզիների** հյուսիսարևմտյան մասում: Ափերը ողողվում են հյուսիսից՝ Սալամանսա, հյուսիսարևմուտքից՝ Պորտու Գրանդի ծովախորշերի, իսկ արևելքից՝ Սուժու նեղուցի ջրերով: Կղզու եզրակետերն են հյուսիսայինը՝ Մարիգուն, հարավայինը՝ Սուլը, արևմտյանը՝ Մաշադուն, արևելյանը՝ Կալյաուն: Չնայած իր հրաբխային ծագմանը կղզու մակերևույթը հիմնականում տափարակ է: Այստեղ կան մի շարք սակավաջուր գետակներ ու ջրահոսքեր՝ Ժուլիան, Շան դի Սանպեդրու, Շան դու Մադեյրալ, Ժուան դ'Էվորա և այլն: Մակերեսը՝ 226,7 կմ^2:Երկարությունը՝ 24,3 կմ, լայնությունը՝ 16,3 կմ: Բարձր կետը՝ Վերդի լեռ (774 մ):
Նախկինում հայտնի էր նաև Պորտու Գրանդի անվամբ:
Կղզին 1462 թվականի հունվարի 22-ին՝ *Սուրբ Վինսենտ Սարագոսացու* օրը, հայտնաբերվել է պորտուգալացի ծովագնաց Դիոգու Գոմեշի կողմից և ի պատիվ այդ օրվան ստացել իր անունը:

ՍԱՆԱԳԱ - ֆրանսերեն Sanaga, անգլերեն Sanaga River. գետ Կամերունի կենտրոնական մասում: Կազմավորվում է Ադամավա լեռների շուրջ 1 150 մ բարձրությունից սկիզբ առնող Ջերեմ և Ժադե բարձրավայրից՝ 1 200 մ բարձրությունից սկիզբ առնող Լոմ գետերի միախառնումից, հոսում դեպի հարավ, ապա Բելաբո բնակա-

վայրի մոտ փոխում իր ուղղությունը հարավարևմտյանի և մի քանի բազուկներով ստեղծելով լայնարձակ գետաբերան՝ թափվում Բիաֆրա ծոցը: Գետի միջին հոսանքում կան բազմաթիվ քարվաստներ ու ջրվեժներ: Վտակներն են աջից՝ Մբամ, Նջեկե, Նջիմ, Մբուկու, Լիժենե, Ջամ, Դորոնգ, Ժապե, Ուեմ, իսկ ձախից՝ Լոմ, Լոնգ, Տետե, Սելե, Մֆամ, Նգոբա,Պանգար և այլն: Երկարությունը՝ 525 կմ (918 կմ Ջերեմի հետ): Ավազանը՝ 129 212 կմ^2: Ջրի ծախսը՝ 234 մ^3/վրկ-6 950 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 628 մ:

ՍԱՆԳԱՐԵՅԱ - ֆրանսերեն Baie de Sangareya. Ատլանտյան օվկիանոսի ծովախորշ, Գվինեայի հարավ-արևմուտքում, Կոնակրի քաղաքից հյուսիս: Հարավից եզերված է Լոս կղզիներով: Ծոցն է թափվում Կոնկուրե գետը: Առավելագույն երկարությունը՝ 15 կմ, առավելագույն լայնությունը՝ 27 կմ:

ՍԱՆԿՈՒՐՈՒ - ֆրանսերեն Sankuru. գետ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում, **Կասաիի** աջ վտակը: Սկիզբ է առնում Կատանգա պրովինցիայի հարավ-արևմուտքում գտնվող բարձրավայրից՝ Լունդա սարավանդի հյուսիսային նախալեռներից և հոսելով հյուսիսային ուղղությամբ, Բենա-Դիբելե քաղաքի մոտ փոխում իր ուղղությունը արևմտյանի ու Բասոնգո բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ Լուկիբուն, Բուշիմաեն, Մուլունգուն, Լուեոն և այլն: Երկարությունը՝ 1 230 կմ: Ավազանը՝ շուրջ 156 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 700 - 4 300 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 205 մ, գետաբերանինը՝ 351 մ:
Վերին հոսանքում հայտնի է Լուբիլաշ անվամբ:

ՍԱՆՏՅԱԳՈՒ - պորտուգալերեն Ilha de Santiago. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում, ամենամեծը **Կանաչ Հրվանդանի կղզիներում**: Կղզու եզրակետերն են հյուսիսայինը՝ Մորեյան, հարավայինը՝ Տեմերոսան, արևմտյանը՝ Ժանելան, արևելյանը՝ Լոբուն: Այստեղ կան սակավաջուր գետակներ ու ջրահոսքեր՝ Բալեյա, Մանտանյա, Սանտա Կրուս, Ֆլամենգուշ, Գրանդի և այլն: Մակերեսը՝ 991 կմ^2: Երկարությունը՝ 55,6 կմ, լայնությունը՝ 27,2 կմ: Բարձր կետը՝ երկգագաթանի Պիկու դա Անտոնյա (1 394 մ):
Անվանումը ստացել է *Սուրբ Հակոբոս առաքյալի* պատվին:

ՍԱՆՏՈՒ ԱՆՏԱՆ - պորտուգալերեն Ilha de Santo Antão.հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում, մեծությամբ երկրորդը **Կանաչ Հրվանդանի կղզիների** հյուսիսարևմտյան մասում: Կղզու հյուսիս-արևելքից, հարավ-արևմուտք ուղղությամբ ձգվում է լեռնաշղթա, որն ավարտվում է Տոպու դա Կորոա հանգած հրաբխով: Լեռնաշղթան պսակված է ևս երկու պիկերով՝ հյուսիս-արևելքում Պիկու դա Կրուսը (1 814 մ), հարավ-արևելքում՝ Գուիդու դու Կավալեյրուն (1 811 մ): Նրա հրաբխային անցյալի հաստատման վառ նկարագիր է Կովա խառնարանը: Կղզու եզրակետերն են հյուսիսայինը՝ Սոլը, հարավայինը՝ Պեսան, արևմտյանը՝ Շան դի Մանգրադին, արևելյանը՝ Սալինան: Այստեղ կան սակավաջուր գետակներ ու ջրահոսքեր՝ Մերա, Տոռի, Գարկա, Բոդիշ, Լոպիշ և այլն: Մակերեսը՝ 779 կմ^2: Երկարությունը՝ մինչև 42,75 կմ, լայնությունը՝ մինչև 23,97 կմ: Բարձր կետը՝ Տոպու դա Կորոա հրաբուխ (1 979 մ):
Կղզին 1462 թվականի հունվարի 17-ին՝ *Սուրբ Անտոնի* օրը, հայտնաբերվել է պորտուգալացի ծովագնաց Դիոգու Աֆոնսուի կողմից և ի պատիվ այդ օրվան ստացել իր անունը:

ՍԵԴ - անգլերեն Sudd, արաբերեն السُّدّ էլ սեդ. հսկայական ճահիճ **Սպիտակ Նեղոսի** հովտում, Հարավային Սուդանում: Բահր էլ Գազալ գետի ավազանի հետ միասին **Սեդը** համարվում է աշխարհի ամենամեծ քաղցրահամ ջրաճահճային համակարգը: Մակերեսը՝ 30 000-150 000 կմ^2: Երկարությունը՝ մինչև 500 կմ, լայնությունը՝ շուրջ 200 կմ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 380-450 մ:
Հայտնի է նաև Սուդ, Բահր ալ Ջաբալ, Աս Սուդ, Ալ Սուդ անուններով:
Էլ Սեդ անվանումը արաբերենից թարգմանաբար նշանակում է *ամբարտակ, պատնեշ*:

ՍԵԼՎԱԺԻՆՍ - պորտուգալերեն Ilhas Selvagens. անմարդաբնակ փոքրիկ կղզեխումբ Ատլանտյան օվկիանոսում: Իր մեջ է ընդգրկում 20-ից ավելի մեծ ու փոքր կղզիներ՝ Մեծ ու Փոքր Սելվաժինսները, Ֆորան, Պալեյռու դա Տեռան, Պալեյռու դու Մարը, Սինյուն, Գրանդին, Սուլը, Պեկենուն, Ալտուն, Կոմպրիդուն, Ռեդոնդուն, Նորտին և այլն: Մակերեսը՝ 2,83 կմ^2: Բարձր կետը՝ Ատալեա բլուր 163 մ:
Հայտնի է նաև Սեբալդինես, Սեբալդս և Սալվաժ անուններով:
Այժմյան անվանումը պորտուգալերենից թարգմանաբար նշանակում է *Վայրի կղզիներ*:

ՍԵՅՇԵԼՅԱՆ ԿՂԶԻՆԵՐ - ֆրանսերեն Les îles intérieures, անգլերեն Inner Islands. կղզեխումբ Հնդկական օվկիանոսում՝ **Մադագասկար** կղզուց հյուսիս-արևելք: Իր մեջ է ընդգրկում 115 կղզիներ, որոնցից 42-ը՝ գրանիտե, 73-ը՝ բուստակղզիներ, որոնք համապատասխանաբար տեղակայված են երկու հիմնական խմբերում՝ Ներքին և Արտաքին կղզիներում: Գլխավոր կղզիներն են՝ **Մաեն**, Սիլուետը, Պրասլենը, Լա Դիգը, Պլատը, Ֆրեգատը, Մարիանը, Կոնսեպսիոնը, Արիդեն և այլն: Մակերեսը՝ 247,2 կմ^2:
Կղզիները 1756 թ-ին անվանվել են այն ժամանակվա Ֆրանսիայի՝ Լյուդովիկոս XV թագավորի, ֆինանսների գլխավոր վերահսկիչ նախարար, կոմս *Ժան Մորո դը Սեյշելի* պատվին:

ՍԵՆԵԳԱԼ - ֆրանսերեն Sénégal, արաբերեն السنغال نهر Նահր էլ Սենեգալ. գետ Արևմտյան Աֆրիկայում: Սենեգալը կազմավորվում է Գվինեայի **Ֆուտա Ջալոն** սարավանդից՝ Բաֆինգ ու Գվինեայի հյուսիսարևելյան մասից սկիզբ առնող Բակոյ գետերի միախառնումից և Մալիի Բաֆուլաբե քաղաքից արևելք, կազմելով բնական սահման Սենեգալի ու Մավրիտանիայի միջև, թափվում՝ Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ Ֆալեմեն, Կոլիմբինեն, Գորգոլը, Կարակորոն, Կետիուն և այլն: Երկարությունը՝ 1 086 կմ: Ավազանը՝ 337 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 640-3 260 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 92 մ:
Ենթադրվում է, որ անունը ստացել է գետի ափերին բնակվող *սենեգա* բերբերական ցեղից:

ՍԸՄԵՆ - ամհարերեն **ሰሜን ተራራ** Սըմենի թրարա. լեռնազանգված **Եթովպական բարձրավանդակի** հյուսիսային մասում: Լեռնազանգվածը կազմված է սարավանդից, իրարից անջատված հովիտներից ու բարձրադիր գագաթներից: Լեռների լանջերից են սկիզբ առնում՝ Կալիմա, Անգերեբ, Բելեգեզ, Սորոկա, Կազա և այլ գետեր: Երկարությունը՝ 140 կմ, լայնությունը՝ մինչև 70 կմ: Բարձր գագաթը՝ **Ռաս Դաշեն** լեռ (4 533 մ):
Անվանումն ամհարերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *հյուսիս*:

ՍԹԵՆԼԻ - իսպաներեն Ngaliema / Monte Stanley, սվահիլի Mlima Stanley, անգլերեն Mount Stanley. լեռ Լուսնի լեռներում, Ռուվենզորի լեռնազանգվածում՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության ու Ուգանդայի սահմանագլխին: **Սփիք** և **Բեյքեր** լեռների հետ միասին այն կազմում է եռանկյունի, որն իր մեջ է ընդգրկում Բուջուկու հովտի վերին մասը: Կազմված է մի քանի գագաթներից, որոնցից երեքը բարձր են 5 000 մ-ից՝ Մարգարիտա Պիկը 5 109 մ, Ալեքսանդրան 5 091 մ և Ալբերտը 5 087 մ: Աֆրիկայի բարձրությամբ երրորդ լեռն է:Այն կազմված է հնագույն բյուրեղային ապարներից: Գագաթները ծածկված են սառցադաշտերով: Հարաբերական բարձրությունը՝ 3 951 մ:
Հայտնի է նաև Ngaliema անվամբ, որը ստացել է 1881 թ-ին, Հ.Մ. Սթենլիի հետ «Եղբայրության պայմանագիր» ստորագրած ցեղապետի պատվին:
Անվանվել է բրիտանացի հետազոտող *Հենրի Մորթոն Սթենլիի* պատվին:

ՍԻՆԱՅԻ ԹԵՐԱԿՂԶԻ - արաբերեն **جزيرة شبه سيناء** Շբիհի Ջազիրաթ թա Սայնաա, եբրաերեն סיני. թերակղզի **Կարմիր** ծովում, Ասիայի և Աֆրիկայի միջև: Հյուսիսից սահմանափակված է Միջերկրական ծովով, արևմուտքից՝ Սուեզի և արևելքից՝ **Աքաբայի** ծոցերով: Մակերեսը՝ 60 088 կմ^2: Բարձր կետը՝ Կատրինա լեռ (2 637 մ):
Անվանումը, հավանաբար, առաջացել է *Սինա* լեռան անունից:

ՍԻՐԹ - արաբերեն سرت خليج Խալիջ Սըրաթ, լատիներեն Syrtis Major. Միջերկրական ծովի խոշոր ծոց Լիբիայի ափերի մոտ: Տարածվում է արևմուտքում Ռաս Կասր Համեթ հրվանդանից մինչև Բորեում Ռաս Թեյոնաս հրվանդանը արևելքում: Մակերեսը՝ շուրջ 57 000 կմ^2: Առավելագույն երկարությունը՝ 177 կմ: Առավելագույն լայնությունը՝ 439 կմ: Առավելագույն խորությունը՝ 1 374 մ:
Հայտնի է նաև Մեծ Սիրթ անվամբ:
Ծոցի լատիներեն Syrtis անվանումը փոխառություն է հին հունարենից, որտեղ Σύρτης-ը նշանակում է *Ավազի* և *լեռնային ապարների զանգված*, որն առաջացել է ծովափին ջրահոսքերի շնորհիվ:

ՍՈԲԱԹ - անգլերեն Sobat River, արաբերեն السوباط نهر Նահր ուլ Սաուբաթ. գետ Հարավային Սուդանում, **Սպիտակ Նեղոսի** աջ վտակը: Կազմավորվում է Եթովպիայի ու Հարավային Սուդանի սահմանագլխին՝ Բարո և Պիբոր գետերի միախառնումից, հոսում հյուսիսարևմտյան ուղղությամբ և Մալակալ բնակավայրից հարավ-արևմուտք, Դոլեիբ բլրի մոտ, թափվում մայր գետը: Վտակներն են՝ Թոռլուարը, Թուլը, Նյանդինգը և այլն: Երկարությունը՝ 354 կմ: Ավազանը՝ 225 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 99 մ^3/վրկ-680 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 403 մ, գետաբերանինը՝ 394 մ:

ՍՈԿՈՏՐԱ - արաբերեն سقطرى Սուքութրա. կղզի Հնդկական օվկիանոսի հյուսիսարևմտյան մասում, Ադենի ծոցի արևելյան ելքի մոտ, **Սոմալի** թերակղզուց մոտ 250 կմ հեռավորությամբ: Կազմում է Սոկոտրա կղզեխմբի մասը: Մակերեսը՝ 3 579 կմ^2: Երկարությունը՝ շուրջ 133 կմ, լայնությունը՝ մինչև 42 կմ: Ափագիծը՝ 314,63 կմ: Բարձր կետը՝ Մեշանիգ լեռ (1 503 մ):
Անվանումը սանսկրիտերենից सुखधारा द्वीप սուկիադհարա դվիպ, թարգմանաբար նշանակում է *Երանություն ապահովող կղզի*:

ՍՈՄԱԼԻ - սոմալիերեն Jasiiradda Soomaali, արաբերեն الأفـــــريقي القــرن ալ Կառն ալ Աֆրիկիու, ամհարերեն **የአፍሪካ ቀንድ** յաֆիրիկա քենիդի,տիգրինյա **ቀርኒ አፍሪቃ** քերինի աֆիրիկա, ֆրանսերեն Corne de l'Afrique, անգլերեն Horn of Africa, օրոմո Gaaffaa Afriikaa. թերակղզի Աֆրիկայի արևելքում, հյուսիսից ողողվում է Ադենի ծոցի, արևելքից՝ Հնդկական օվկիանոսի ջրերով: Թերակղզու հյուսիսարևելյան ծայրամասում է գտնվում **Գվարդաֆույ** հրվանդանը: Այստեղ է տեղակայված նաև Աֆրիկայի արևելյան ծայրակետ՝ **Ռաս Հաֆուն** հրվանդանը: Մակերևույթի մեծ մասը զբաղեցնում է 1 000-1 500 մ բարձրությամբ սարավանդը: Այստեղով են հոսում **Ջուբբա** և **Ուեբի Շեբելե** գետերը, ինչպես նաև բազմաթիվ ժամանակավոր ջրահոսքերը՝ Դուրդուրը, Հոդմոն, Յիբիրթին, Դհաորը, Դհուդոն, Նուգաալը և այլն: Մակերեսը՝ շուրջ 750 000 կմ^2:
Հույն աշխարհագրագետ Պտղոմեոսը թերակղզին հիշատակում է Հարավային եղջյուր անունով:
Այն հայտնի է նաև Աֆրիկյան եղջյուր, Բիլադ ալ Բարբար, Սոմալիական թերակղզի, Գեսկա Աֆրիկա, Ջասիրադա Սոմալի կամ Գասանդհուլկա Սոմալի, Յաաֆրիկա Կանդ, Գաֆա Աֆրիկայա և այլ անուններով:
Ենթադրվում է, որ անվան հիմքում ընկած է քուշյան լեզուներում *թուխ*, *սև* իմաստ արտահայտող բառը:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը ստացել է սոմալի ժողովրդի նախահայր Սամաալեից, որի անունն իր հերթին հավանաբար առաջացել է sac maal, *խոշոր եղջերավորների ծառաներ* արտահայտությունից:

ՍՊԻՏԱԿ ՆԵՂՈՍ - անգլերեն White Nile, ֆրանսերեն Nil Blanc, արաբերեն النيـــل الأبيـــض ան Նիլ ալ աբյադ, սվահիլի Nile nyeupe, կինյառուանդա Nili Year. գետ Աֆրիկայում՝ Ուգանդայում, Հարավային Սուդանում և Սուդանում, Նեղոսի ձախ վտակը: Սպիտակ Նեղոսի սկիզբը **Կագերա** գետն է, որը կազմավորվում է Ռուվուբու և Նյաբարոնգո գետերի միախառնումից: Հոսելով հյուսիսային ուղղությամբ Ուգանդայի տարածքում թափվում է Վիկտորիա լիճը, որտեղից արտահոսելով, շարունակում է իր հոսքը դեպի **Ալբերտ** լիճը ուր գետն անցնում է 7 մ լայնությամբ կանյոնով, առաջացնելով **Մյորչիսոն Ֆոլս** ջրվեժները: Այնուհետ հոսելով **Սեդ** հսկայական ճահճով, **Նո** լճում միանում է Բահր էլ Գազել գետին և ստանում Սպիտակ Նեղոս անունը:Վտակներն են՝ Սոբաթ, Լաու, Դոլեիբ, Բահր էլ Զերաֆ, Տհուլ և այլն: Երկարությունը՝ 3 700 կմ: Ավազանը՝ 1 800 000 կմ^2 է: Ջրի ծախսը՝ 878 մ^3/վրկ:
Հայտնի է նաև Բահր էլ Աբյադ անունով:
Արաբերենից Բահր էլ Աբյադը թարգմանաբար նշանակում է բահր *գետ*, աբյադ *սպիտակ՝ Սպիտակ գետ*:
Գետը անվանումը ստացել է ջրի սպիտակավուն երանգից՝ սպիտակ կավից, որը բերում է Սոբաթ վտակը:

ՍՈՒԴԱՆ - արաբերեն الســودان بــلاد Բիլադ աս Սուդան, ֆրանսերեն Soudan, անգլերեն Sudan, ամհարերեն **ሱዳን** Սուդանի. բնական աշխարհագրական մարզ Կենտրոնական Աֆրիկայի հյուսիսային մասում, **Սահելից** հարավ: Արևմուտքում ձգվում է Սենեգալից մինչև Եթովպիան արևելքում: Բաժանվում է Ցածր Սուդանի ու Բարձր Սուդանի, վերջինս էլ իր մեջ է ընդգրկում Արևմտյան, Կենտրոնական ու Արևելյան Սուդանները: Մակերեսը՝ շուրջ 5 000 000 կմ^2:
Անվանումն առաջացել է արաբերեն الســودان بــلاد Բիլադ աս Սուդան *Սևերի երկիր* արտահայտությունից:

ՍՈՒԵԶԻ ԾՈՑ - արաբերեն السويس خليج Խալիջ աս Սուվեյս.ծոց Կարմիր ծովի հյուսիսարևմտյան մասում, Աֆրիկա մայր ցամաքի և **Սինայի թերակղզու** միջև: Ծոցը Սուեզի ջրանցքով իրար է կապում Կարմիր և Միջերկրական ծովերը: Երկարությունը՝ մինչև 314 կմ, լայնությունը՝ 19-55 կմ: Միջին խորությունը՝ 40 մ, առավելագույնը՝ 70 մ:
Հայտնի էր նաև *Հերոսների ծոց* անվամբ:
Անվանումը ստացել է *Սուեզ* քաղաքից:

ՍՈՒՐԲ ՀԵՂԻՆԵ ԿՂԶԻ - անգլերեն Saint Helena, ֆրանսերեն Sainte-Hélène. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսի հարավային մասում, Աֆրիկա մայրցամաքից դեպի արևմուտք 1 800 կմ հեռավորությամբ:Կղզու հարավային մասում են գտնվում մի քանի հանգած հրաբուխների խառնարաններ: Կղզին ծածկված է մարգագետիններով, թփուտներով և եզակի անտառներով:Մակերեսը՝ 123,28 կմ^2: Երկարությունը՝ 15 կմ, լայնությունը՝ 11 կմ: Բարձր կետը՝ Դիանայի պիկ 818 մ:
Կղզին 1502 թ մայիսի 21-ին հայտնաբերվել է պորտուգալացի ծովագնաց Ժուան դի Նովայի կողմից և ի պատիվ այդ օրվա տոնի անվանվել *Սուրբ Հեղինե*:

ՍՓԻՔ - գերմաներեն Duwoni/ Mount Speke, ֆրանսերեն Mont Speke, սվահիլի Mlima Speke, անգլերեն Mount Speke. բազմագագաթ լեռ Լուսնի լեռներում, Ռուվենզորի լեռնազանգվածում՝ Ուգանդայում: **Սթենլի** և **Բեյքեր** լեռների հետ միասին այն կազմում է եռանկյունի, որն իր մեջ է ընդգրկում Բուջուկու հովտի վերին մասը: Լեռան գլխավոր գագաթներն են՝ Վիկտոր Էմանուելը 4 890 մ, Էնսոնգան 4 865 մ, Ջոնստոնը 4 834 մ և Թրայդենթը 4 572 մ:
Հայտնի է նաև Դուվոնի անվամբ:
Անվանումը ստացել է բրիտանական բանակի սպա և Աֆրիկայի հետազոտող *Ջոն Հ. Սփիքի* պատվին:

Վ

ՎԱԱԼ - աֆրիկաանս Vaalrivier, անգլերեն Vaal River, հյուսիսային նդեբելե Likwa, զուլու Ikwa, սվազի Ilikwa, սոթո Lekwa, խոյխոյ Cuoa. գետ Հարավային Աֆրիկայում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում, **Օրանժի** աջ վտակը: Սկիզբ է առնում **Վիշապների լեռներից** և հոսելով արևմտյան, ապա հարավարևմտյան ուղղությամբ, Բակլանդս բնակավայրի մոտ միախառնվում մայր գետին: Օժանդակներն են՝ Վիլգեն, Ռենոստերը, Ֆալսը, Հարտսը, Ֆետը, Սանդսպրյուտը և այլն: Երկարությունը՝ 1 251 կմ: Ավազանը՝ 196 438 կմ^2: Ջրի ծախսը՝ 124,59 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 678 մ (Բրեյտեն բնակավայրի մոտ), գետաբերանինը՝ 976 մ:
Հայտնի է նաև Վաալռիվիեր, Լիկվա, Իկվա, Իլիկվա, Լեկվա, Կուռա անուններով:
Գետի հոլանդերեն Vaal անվանումը համարժեք է հոտենտոտերեն Tky- Gariep-ին, ինչպես Vaal-ը այնպես էլ Tky-ն թարգմանաբար նշանակում են *պղտոր*, *մոխրագույն*:

ՎԻԿՏՈՐԻԱ - անգլերեն Victoria Falls, չիտոնգա Mosi-oa-Tunya. ջրվեժ Աֆրիկայի հարավում, Զամբիայի ու Զիմբաբվեի սահմանագլխին, **Զամբեզի** գետի վրա: Անկման բարձրությունը՝ աջ ափում 80 մ, իսկ կենտրոնում մինչև 110 մ: Լայնությունը՝ մինչև 1 708 մ: Բացարձակ բարձրությունը՝ 120 մ: Ջրի ծախսը՝ 170 մ^3/վրկ-10 000

մ^3/վրկ:
Հայտնի է նաև Սեոնգո *Ծիածան* անվամբ:
Ջրվեժը 1855 թ-ի նոյեմբերի 17-ին հայտնագործել է շոտլանդացի ճանապարհորդ ու հետազոտող Դ. Լիվինգստոնը և կոչել այն Միացյալ Թագավորության թագուհի՝ *Վիկտորիայի* անունով:
Չիտոնգա լեզվով ջրվեժը հայտնի է Mosi-oa-Tunya *Շառաչող ծուխ* անունով:

ՎԻԿՏՈՐԻԱ - սվահիլի Ziwa Viktoria, անգլերեն Lake Victoria.աշխարհում մակերեսով երկրորդ քաղցրահամ լիճը (Ամերիկայի Վերին լճից հետո) Աֆրիկայի արևելքում՝ Տանզանիայի, Քենիայի ու Ուգանդայի սահմանին: Տեղակայված է **Մեծ ռիֆտային հովտի** տեկտոնական ճկվածքում: Լճում կան 84 կղզիներ՝ Ուկերեվե, Բուգալա, Բուվումա, Բուկասա, Բուգայա, Մֆանգանո, Ուկարա, Ռուբոնդո, Մայիսոմե, Կոմե և այլն: Ափերը խիստ մասնատված են, որով էլ բացատրվում է բազմաթիվ ծոցերի և խորշերի առկայությունը, որոնք են՝ Կավիրոնդոն, Սպիկը, Վինամը, Էմին Փաշան, Սանգոն, Բույագան և այլն: Լիճն են թափվում **Կագերա**, Նզոյա, Ռուիգա, Մարա, Մորի, Մոամե, Սիմիյու, Սեզիբվա և այլ գետեր, արտահոսում՝ Վիկտորիա Նեղոսը: Մակերեսը՝ 68 870 կմ^2: Երկարությունը՝ 337 կմ, լայնությունը՝ 250 կմ: Ծավալը՝ 2 755 կմ^3: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 238 900 կմ^2: Ափագիծը՝ մոտ 7 000 կմ: Միջին խորությունը՝ 40 մ, առավելագույնը՝ 83 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 1 135 մ:
Հայտնի է նաև Նիյանզա և Ուկերեվե անուններով:
Լիճն եվրոպացիներից առաջինը 1858 թ-ի հուլիսի 30-ին հայտնաբերել է բրիտանական բանակի սպա ու Աֆրիկայի հետազոտող Ջոն Հ. Սփիքը և անվանել Մեծ Բրիտանիայի *Վիկտորիա* թագուհու պատվին:

ՎԻՇԱՊՆԵՐԻ ԼԵՌՆԵՐ - անգլերեն Drakensberg, աֆրիկաանս Drakensberge, զուլու uKhahlamba, սոթո Maluti / Maloti. լեռնահամակարգ Աֆրիկայի հարավում՝ Հարավաֆրիկյան Հանրապետությունում, Լեսոթոյում ու Էսվատինիում: Ջրբաժան են հանդիսանում Հնդկական օվկիանոսի և **Օրանժ** գետի ավազանների միջև: Այստեղից են սկիզբ առնում՝ **Օրանժ**, Կալեդոն, **Վաալ**, Ուիլջ, Քլիփ Էլանդս, Մլումատի, Լուշուշվանա, Բուֆես, Տուգելա, Կենեկա և այլ գետեր: Մակերեսը՝ 402 418 կմ^2: Երկարությունը՝ 1 169 կմ, լայնությունը՝ 732 կմ: Բարձր կետը՝ **Տհաբանա Նտլենյանա** լեռ (3 482 մ, Լեսոթոյում):
Հայտնի է նաև uKhahlamba *Նիզակավոր պատնեշ* ու Maluti / Maloti անուններով:
Լեռները ստացել են Drakensberge անվանումը, որի հայերեն պատճենումն է՝ *Վիշապների լեռներ*:

ՎՈԼՏԱ - ֆրանսերեն Volta, անգլերեն Volta River. գետ Արևմտյան Աֆրիկայում՝ Բուրկինա Ֆասոյում ու Գանայում: Կազմավորվում է Սպիտակ (Նակամբե) և Սև (Մուհուն) Վոլտաներ գետերի միախառնումից: Գետի վրա կառուցված է «Ակոսոմբո» հիդրոէլեկտրակայանի ամբարտակը, որի շնորհիվ կազմավորվել է շուրջ 400 կմ երկարությամբ, խոշոր Վոլտա լիճ անվամբ ջրամբարը: Գետը լճից արտահոսելով և առաջացնելով դելտա թափվում է **Գվինեական** ծոց: Վտակներն են՝ Օտի, Նազինոն (Կարմիր Վոլտա), Սիսիլի, Սենե, Մավլի, Չուկո, Բենչի, Սուր, Մո և այլն: Երկարությունը՝ 1 400-1 600 կմ (Սև Վոլտա գետի հետ): Ավազանը՝ 407 093 կմ^2: Ջրի ծախսը՝ 1 210 մ^3/վրկ:
Անվանումը 1741 թ-ին գետին տվել են Գանայում ոսկու առևտրով զբաղվող պորտուգալացիները Rio de Volta *Վերադարձի գետ* ձևով. դա գետային այն ճանա-

պարին էր, որով պորտուգալական արշավախմբերը վերադառնում էին Աֆրիկայի խորքերից:

Տ

ՏԱԳԱՆԹ - արաբերեն المهضبةكانت ալ Հաբադա ու Տականաթ, ֆրանսերեն Tagant Plateau. քարոտ սարավանդ **Սահարա** անապատում, Մավրիտանիայի արևելյան մասում: Արևելքից եզերված է Դահր ու Սեն, հարավ-արևելքից՝ Ռգեյբա անապատներով, արևելքից՝ Աուկար և արևմուտքից՝ Աֆթուդ էշ Շերգի չոր ավազաններով: Սակավ անձրևների ժամանակ այստեղ են կազմավորվում մի շարք ժամանակավոր ջրահոսքեր: Մակերեսը՝ ավելի քան 20 000 կմ^2: Միջին բարձրությունը ծովի մակարդակից՝ 400 մ:

ՏԱՆԱ - անգլերեն Tana River, սվահիլի Mto wa Tana. գետ Քենիայում: Սկիզբ է առնում **Աբերդեր** լեռնաշղթայի արևելյան լանջերից, հոսում դեպի արևելք, **Քենիա** լեռնազանգվածի մոտ թեքվում հարավ ու վերածվում Կինդարումա ամբարտակով ստեղծված Մասինգա և Կիամբերե ջրամբարների: Ամբարտակից հետո գետը թեքվում է դեպի հյուսիս, ապա փոխելով իր ուղղությունը հարավարևելյանի, թափվում Հնդկական օվկիանոսի Ունգվանա ծոցը: Վտակներն են՝ Տիկան, Տուլան, Տիվան, Կոկանին, Բունան և այլն: Երկարությունը՝ 800 կմ: Ավազանը՝ 126 026 կմ^2: Ջրի ծախսը՝ 13 մ^3/վրկ-1 864 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 3 355 մ:

ՏԱՆԳԱՆՅԻԿԱ - անգլերեն Lake Tanganyika, սվահիլի Ziwa Tanganyika, ֆրանսերեն Lac Tanganyika, կիրունդի Tanganyika. քաղցրահամ լիճ Աֆրիկայի արևելքում՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության, Տանզանիայի, Զամբիայի ու Բուրունդիի սահմանին: Խորությամբ աշխարհի երկրորդ լիճը՝ Բայկալից հետո: Կազմում է **Մեծ ռիֆտային հովտի** լճերի շղթայի մասը, ափերը ուղղաձիգ են, տեղ-տեղ բարձր ու զառիվեր: Տեղակայված է Կենտրոնաաֆրիկյան խանդակի մասը կազմող տեկտոնական Ալբերտին իջվածքում: Լիճը բաժանվում է երեք ծավալային ավազանների՝ հյուսիսում Կիգոմա իր առավելագույն 1 310 մ խորությամբ, կենտրոնում՝ Կունգվե 885 մ և հարավում՝ Կիպիլի 1 470 մ: Լիճն են թափվում Ռուզիզի, Մալագարասի, Լուֆուբու, Լուիչե, Մսենգուսե, Իֆումե, Լունանգվա և այլ գետեր, արտահոսում՝ Լուկուգան: Մակերեսը՝ 32 893 կմ^2: Երկարությունը՝ 676 կմ, լայնությունը՝ 72 կմ: Ծավալը՝ 18 900 կմ^3: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 231 000 կմ^2: Ափագիծը՝ 1 828 կմ: Միջին խորությունը՝ 570 մ, առավելագույնը՝ 1 470 մ: Ջրի պարզությունը՝ 30 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 768 մ:
Հայտնի էր նաև Լիյեմբա անվամբ:
Այժմյան անվանումը տեղաբնիկների լեզվով հավանաբար նշանակում է *Հարթավայրի պես լայնարձակ* (*մեծ*) *լիճ* կամ *Լիճ- հարթավայր* :
Մեկ այլ վարկածի համաձայն Տանգանյիկա անվանումը տեղացիների լեզվից թարգմանաբար նշանակում է *Ջրերի միախառնում*:
Հայտնի է նաև այն տեսակետը, որ անվանումը կազմված է բեմբա լեզվի tanga *լիճ* և nyika *վայրի տեղանք* բառերից:

ՏԱՆԶՐՈՒՖԹ - արաբերեն تنزروفـــت سهل Սահլ Տանձրուֆթ, ֆրանսերեն Tanezrouft, բերբերերեն ⵜⴰⵏⵣⵔⵓⴼⵜ Թանզրուֆտ. լայնարձակ սարավանդ և ավազաքարքարուտային անապատ **Սահարայում՝** Ալժիրի հարավում ու Մալիի հյուսիսում:

Համարվում է **Ահագգար** բարձրավանդակի արևմտյան շարունակությունը: Սարավանդի մեծ մասը իրենից ներկայացնում է համադա, որի հիմքը կազմավորված է բյուրեղային ապարներից: Երկարությունը՝ 600 կմ: Միջին բարձրությունը՝ 310 մ, առավելագույնը՝ 362 մ:
Անվանումը բերբերերենից բառացի նշանակում է *վախի և ծարավի երկիր (անապատ)*:

ՏԱՋՈՒՐԱ - արաբերեն خليج تاجورة Խալիջ Տաջուրահ, ֆրանսերեն Golfe de Tadjourah, սոմալիերեն Badda Tajuura, անգլերեն Gulf of Tadjoura. Հնդկական օվկիանոսի ծոց Աֆրիկայի արևելյան ափերի մոտ՝ Ադենի ծոցի արևմտյան վերջավորությունը: Գտնվում է Բաբ Էլ Մանդեբ նեղուցից հարավ-արևմուտք և ողողում Ջիբութիի ու Սոմալիի(չնչին մասը) ափերը: Ծոցի մուտքի մոտ են տեղակայված փոքր՝ Մուշա, Մասկալի, Աբու Մայա և Վառամուս կղզիները: Մակերեսը՝ 1 920 կմ^2: Ջրահավաք ավազանը՝ 2 368 կմ^2: Առավելագույն երկարությունը՝ 64 կմ: Առավելագույն լայնությունը՝ 26 կմ: Առավելագույն խորությունը՝ 1 080 մ:
Անվանումը ստացել է ծոցի հյուսիսային ափին գտնվող *Տաջուրա* քաղաքից:

ՏԵՅԴԵ - իսպաներեն Teide. հրաբուխ **Կանարյան կղզիների Տեներիֆե** կղզում: Ունենալով շուրջ 7 500 մ հարաբերական բարձրություն Ատլանտյան օվկիանոսի հատակի նկատմամբ, Տեյդեն հանդիսանում է այդ օվկիանոսի բարձրագույն գագաթը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 718 մ:
Հայտնի էր նաև Nivaria *Ձնոտ լեռ*, Monte Claro *Պայծառ, պարզկա լեռ*, Pitón de Azúcar *Շաքարե կեռ* / Pan de Azúcar *Շաքարե ծալ, փոթ*, Pic de Ténériffe անուններով:
Հավանաբար այժմյան անվան հիմքում ընկած է հրաբխին տեղաբնիկ գուանչինների կողմից տրված Echeide/Echeyde *Դժոխք* անվանումը:
Մեկ այլ վարկածի համաձայն անվանումը թարգմանաբար նշանակում է *Ձյունե սար*:

ՏԵՆԵՐԵ - արաբերեն تينـــــيري صـحـراء Սուհրաու Տայնիրի, ֆրանսերեն Ténéré, բերբերերեն ⵜⴻⵏⵔⴻ Թինիրի. անապատ Աֆրիկայի հյուսիսում, Կենտրոնական Սահարայի հարավում՝ Նիգերի հյուսիս-արևելքում: Էրգը զբաղեցնում է **Աիր** սարահարթի, **Ահագգար** բարձրավանդակի, **Ջադո սարավանդի**, **Տիբեստի** լեռնազանգվածի և **Չադ** լճի ավազանի միջև ընկած տարածքը: Մակերեսը ավելի քան 400 000 կմ^2: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 430 մ:
Անվանումը բերբերերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *անապատ* :

ՏԵՆԵՐԻՖԵ - իսպաներեն Tenerife. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում, մեծությամբ առաջինը **Կանարյան կղզիներում**: Զբաղեցնում է կենտրոնական դիրք և արևելքում հարևան է **Գրան Կանարիա**, արևմուտքում՝ **Գոմերա** կղզիներին: Ռելիեֆը լեռնային է, կազմված հովիտներով իրարից բաժանված մի շարք լեռնաշղթաներից ու լեռնազանգվածներից՝ Անագա, Տենո, Ադեհե, Աբեկե և այլն: Հովիտներից հայտնի են՝ Սան Անդրիասը, Տագանանան, Լա Օրոտավան, Գուիմարը և այլն: Կղզուն բնորոշ է բազմաթիվ հեղեղատների առկայությունը՝ Ռուիս, Ֆասնիա, Ինֆեռնո, Էռկես և այլն: Ափերը զառիվեր են ու ժայռոտ: Կղզու կենտրոնում վեր է խոյանում **Տեյդե** հրաբուխը, որը կիսում է այն երկու՝ հարավային ու հյուսիսային մասերի: Մակերեսը՝ 2 034,38 կմ^2: Ափագիծը՝ 342 կմ: Երկարությունը՝ 82,5 կմ, լայնությունը՝ 7,5 կմ-51,5 կմ: Բարձր կետը՝ **Տեյդե** հրաբուխ (3 718 մ):

Նախկինում հայտնի էր Աչինետ, Չինետ, Նիվարիյա և Ինֆեռնո անուններով:
Կղզու այժմյան անվանումը կազմված է tene *լեռ* և ife *սպիտակ* բառերից, որոնց հետագայում ավելացվել է r հնչյունը, որը բերեց վերը նշված բառերի միացմանը:

ՏԻԲԵՍՏԻ - ֆրանսերեն Massif du Tibesti, արաբերեն تيبســـــــتي جبــال Ջիբալ Թաբստի. հրաբխային ապարներից կազմված բարձրավանդակ Կենտրոնական Սահարայում՝ Չադում ու Լիբիայում: Սարավանդում, առավելապես հարավարևելքում հաճախակի են հանդիպում գեյզերներ և տաք ջերմուկներ: Բարձրավանդակից են սկիզբ առնում Գերե, Տեդոգորա, Էների Մարո, Տուդուֆու, Էների Եբիգե, Տուգումշի և այլ ջրահոսքեր: Մակերեսը՝ շուրջ 100 000 կմ^2: Երկարությունը՝ ավելի քան 380 կմ: Լայնությունը՝ ավելի քան 350 կմ: Բարձր կետը՝ **Էմի Կուսի** լեռ (3 415 մ):
Տիբեստին անվանվել է այստեղ բնակվող *տուբու* ժողովրդի պատվին, որոնց անունը կանուրի լեզվից ստուգաբանվում է հետևյալ կերպ՝ tu *քար*, *լեռ* և bu *մարդ*, *բնակիչ՝ լեռների մարդիկ* և այս կերպ Տիբեստի անվանումը բառացիորեն նշանակում է *Վայր, որտեղ բնակվում են լեռների մարդիկ*:

ՏԻՆԳԻՏԱՆԱ - արաբերեն يبـــالا جـزيرة شـــبه Ճբիհի Ջազիրաթ Յուբալան, իսպաներեն Península tingitana, աստուրերեն Península tinxitana. թերակղզի Աֆրիկայի հյուսիսարևմուտքում՝ Մարոկկոյում: Այն Իսպանիայի ծայր հարավային մասի հետ միասին եզերում է Ջիբլաթարի նեղուցը: Այստեղով են հոսում՝ Ուեդ Լուկոս, Մահանզե, Լաու, Ուեդ Միարհար ու Ուեդ Հաշեֆ ժամանակավոր ջրահոսքերը:
Հայտնի է նաև Տանժեր և Եբալա անուններով:
Այժմյան անվանումը ստացել է ժամանակին այստեղ գտնվող հռոմեական *Mavritania Tingitana* պրովինցիայից:

ՏՀԱԲԱՆԱ ՆՏԼԵՆՅԱՆԱ - սոթո Thabana Ntlenyana, անգլերեն Thabana Ntlenyana. լեռնագագաթ Աֆրիկայի հարավում՝ Լեսոթոյում, **Վիշապների լեռների** ամենաբարձր կետը: Լեռան հարավարևելյան ստորոտից է սկիզբ առնում Ումկոմասա գետը: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 482 մ, հարաբերականը՝ 2 390 մ:
Անվանումը սոթո լեզվից թարգմանաբար նշանակում է *Փոքրիկ գեղեցիկ սև լեռ*:

ՏՐԻՍՏԱՆ ԴԱ ԿՈՒՆՅԱ - անգլերեն Tristan da Cunha. հրաբխային կղզեխումբ Ատլանտյան օվկիանոսի հարավային մասում, Աֆրիկա մայրցամաքից դեպի արևմուտք: Կղզեխումբը կազմված է 6 կղզուց և բազմաթիվ կղզյակներից ու ժայռերից՝ Տրիստան Դա Կունյա, Գոֆ (Դիեգո Ալվարես 91 կմ^2), Ինակսեսիբլ (14 կմ^2), Նիգտինգալ (3,4 կմ^2), Միդլ (0,1 կմ^2), Ստոլտենհոֆ (0,1 կմ^2) և այլն: Կղզիների ափերը ժայռոտ են ու խիստ կտրտված: Ընդհանուր մակերեսը՝ 207 կմ^2: Բարձր կետը՝ Քվին Մերի (2 062 մ):
Համարվում է, որ կղզեխմբի հյուսիսային կղզիները, 1506 թ-ին հայտանաբերել է պորտուգալացի ծովագնաց Տրիստան դա Կունյան, որոնք հետագայում ստացել են իր անունը:

ՏՐՈՄԼԵՆ - ֆրանսերեն Île Tromelin. հրաբխային կղզի **Էպարսե** կղզիների կազմում, Հնդկական օվկիանոսում՝ **Մադագասկար** կղզուց 450 կմ արևելք: Մակերեսը՝ 1 կմ^2: Երկարությունը՝ 1,7 կմ, լայնությունը՝ 0,7 կմ: Առավելագույն բարձրությունը՝ 7 մ:
Նախկինում հայտնի էր Ավազե կղզի անունով:

Այժմյան անունը ստացել է 1776 թ. նոյեմբերի 29-ին կղզի այցելած, ֆրանսիական Լա Դոֆին ռազմանավի հրամանատար *Բեռնար Մարի Բուդեն դը Տրոմլենի* պատվին:

ՏՐՈՒ Դ'ԱՐԺԱՆ - անգլերեն Trou d'Argent, ֆրանսերեն Trou d'Argent.Աֆրիկայի արևելյան կղզային ծայրակետը՝ 19° 42′ 39,08″ S, 63° 30′ 07,26″ E կոորդինատներով, Ռոդրիգես կղզում:
Անվանումը ֆրանսերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Արծաթե ճեղք*:

ՏՈՒԳԵԼԱ - աֆրիկաանս Tugelawaterval, անգլերեն Tugela Falls, զուլու ITugela Izimpophoma. ջրվեժ Հարավային Աֆրիկայում, **Վիշապների լեռների** արևելյան մասում, Տուգելա գետի վրա: Իր բարձրությամբ աշխարհում երկրորդ ջրվեժն է: Կազմված է հինգ սանդղավանդներից, որոնցից ամենամեծը ունի 411 մ բարձրություն: Անկման բարձրությունը՝ 948 մ: Ակունքի բարձրությունը՝ 2 972 մ: Լայնությունը՝ 15 մ: Ջրի ծախսը՝ 1 մ^3/վրկ:
Անվանումը ստացել է *Տուգելա* գետից, որի անունն իր հերթին զուլու լեզվից թարգմանաբար նշանակում է *անակնկալ*, *անսպասելի*, *հանկարծակի*:

ՏՈՒՐԿԱՆԱ - սվահիլի Ziwa Turkana, անգլերեն Lake Turkana, ամհարերեն **የቱርካና ሐይቅ** Եթուրիկանա հեյիքի. անհոսք աղի լիճ **Մեծ ռիֆտային հովտում՝** Քենիայի ու Եթովպիայի սահմանագլխին: Լճում կան 3 հրաբխային կղզիներ՝ Հարավային, Կենտրոնական (Կրոկոդայլ) և Հյուսիսային: Հարավային ափին է գտնվում Տելեկի հրաբուխը: Լիճն են թափվում Օմո, Թերքուել, Քերիո, Լոբելոիկ, Կաալակոլ, Լոմենյանգապարա և այլ գետեր: Մակերեսը՝ 6 405 կմ^2: Երկարությունը՝ 220-268 կմ, լայնությունը՝ 32- 50,1 կմ: Ծավալը՝ մոտ 194 կմ^3: Ջրահավաք ավազանի մակերեսը՝ 130 860 կմ^2: Միջին խորությունը՝ 30,2 մ, առավելագույնը՝ 109 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 361,4 մ:
Նախկինում հայտնի էր Ռուդոլֆ անվամբ (ի պատիվ թագաժառանգ արքայազն Ռուդոլֆ Ավստրիացու):
Հայտնի է նաև Basso Narok *Սև լիճ*, Anam Ka'alakol *Ձկներով լի ծով* և Anaam a Ceper անուններով:
1975 թ-ին լիճը վերանվանվել է Տուրկանա՝ նրա արևմտյան ափին բնակվող *տուրկանա* նիլոտական ցեղի պատվին:

Ու

ՈՒԱՆՈՒԿՐԻՄ - արաբերեն اوانوكـــريم جبـل Ջաբալ Աուանուկրիմ, բերբերերեն ᴱᴸᴼ-ᴼ⁝ᴵ ᴸᴼ-ᴼ⁝ᴵ Իդռ-ռեն Դռ-ռեն, ֆրանսերեն Ouanoukrim. բազմագագաթ լեռնազանգված Մարոկկոյում՝ **Ատլաս** լեռների բարձրությամբ երկրորդը: Լեռնազանգվածի գագաթներն են հարավում՝ Տիմզգիդան 4 089 մ, հյուսիսում՝ Ռաս ն'Ուանուկրիմը 4 083 մ, Ռաս Աֆելան 4 015 մ և այլն: Երկու գագաթներն անջատված են իրարից 3 968 մ բարձրությամբ ոչ մեծ կապանով: Լեռը գտնվում է Թուբկալ ազգային պարկում, **Թուբկալ** լեռից 3,92 կմ հեռավորությամբ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 4 089 մ, հարաբերականը՝ 345 մ:

ՈՒԲԱՆԳԻ - ֆրանսերեն Oubangui / Ubangi. սահմանային գետ Կենտրոնաաֆրիկյան, Կոնգոյի Ժողովրդավարական ու Կոնգոյի Հանրապետություններում, **Կոնգո**

գետի աջ վտակը: Կազմավորվում է Յակոմա բնակավայրի մոտ, **Մբոմու** և **Ուելե** գետերի միախառնումից: Առաջին 370 կմ-ը գետը հոսում է արևմտյան ուղղությամբ, ապա թեքվելով դեպի հարավ-արևմուտք, Կենտրոնաաֆրիկյան Հանրապետության Բանգի մայրաքաղաքի մոտ, փոխելով իր ուղղությունը հարավայինի և կազմելով բնական սահման Կոնգոյի և Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունների միջև, Իրեբու բնակավայրի մոտ թափվում մայր գետը: Վտակներն են՝ **Ուելեն**, **Մբոմուն**, Գիրին, Մոտաբան, Իբենգան, Լուան, Բամբան, Կոտտոն, Մբին, Ուական և այլն: Երկարությունը՝ 1 142 կմ (**Ուելե** վտակի հետ՝ 2 272 կմ): Ավազանը՝ 754 830 կմ^2: Ջրի ծախսը՝ 800 -11 000 մ^3/վրկ: Գետաբերանի բարձրությունը՝ 295 մ:

ՈՒԵԲԻ ՇԵԲԵԼԵ - ամհարերեն **ሸበሌ ወንዝ** Շեբելե վենց, սոմալիերեն Wabiga Shabeelle, արաբերեն شـــــبيلي نهر Նահր Շաբիլի, իտալերեն Uebi Scebeli. գետ Եթովպիայում ու Սոմալիում, **Ջուբբա** գետի ձախ վտակը: Սկիզբ է առնում Եթովպիայի հարավից, Օրոմիա շրջանի արևմտյան բարձրադիր մասից և հոսելով շուրջ 1 000 կմ Եթովպիայի տարածքով, Ֆըրֆըր բնակավայրից մոտ 20 կմ հարավ-արևմուտք կտրում անցնում է Սոմալիի սահմանը, ապա հոսելով հարավային ուղղությամբ, Բալկադ բնակավայրի մոտ, փոխում իր ուղղությունը հարավարևմտյանի և շարունակելով իր հոսքը Հնդկական օվկիանոսի երկայնքով շուրջ 400 կմ, Կամսումա քաղաքի մոտ թափվում մայր գետը: Օժանդակներն են՝ Էրերը, Գալետին, Վաբեն, Դաուաբիդը, Դակետան, Մոջոն, Իլիլին, Ֆաֆենը և այլն: Երկարությունը՝ 1 820 կմ: Ավազանը՝ 336 627 կմ^2: Ջրի ծախսը՝ 73 մ^3/վրկ (Եթովպիայի և Սոմալիի սահմանագլխին) - 301 մ^3/վրկ:
Սոմալիում հայտնի է Ուաբի Շաբիլի անվամբ:
Գետի սոմալիերեն անվանումը թարգմանաբար նշանակում է *Ընձառյուծի գետ*:

ՈՒԵԴ ՍԱՈՒՐԱ - արաբերեն الســـاورة وادي Վադի ալ Սաուրա, ֆրանսերեն Oued Saoura. ընդհատվող գետ կամ վադի Մարոկկոյում ու Ալժիրում: Կազմավորվում է Իգլի բնակավայրից 4 կմ հյուսիս, Բարձր Ատլաս լեռներից սկիզբ առնող Ուեդ Գիրի ու Ուեդ Ձուսֆանայի միախառնումից և կազմավորելով Սաուրա հովիտը, հոսում հարավարևելյան ուղղությամբ ու թափվում անհոսք աղի Սեբխա էլ Մելահ լիճը: Երկարությունը՝ 285 կմ, Ուեդ Գիրի հետ՝ 718 կմ: Միջին լայնությունը՝ 250 մ: Ավազանը՝ շուրջ 380 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 30 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 499 մ, գետաբերանինը՝ 293 մ:

ՈՒԵԼԵ - ֆրանսերեն Uele / Uélé / Ouélé, լինգալա Wɛlɛ. գետ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում, **Ուբանգի** գետի ձախ վտակը: Կիբալի անվամբ սկիզբ է առնում Կապույտ լեռների հյուսիս-արևմուտքում գտնվող աղբյուրներից, Նիանգարա բնակավայրի մոտ ընդունելով մի քանի փոքր վտակներ ու ստանալով Ուելե անունը, հոսում դեպի հյուսիս-արևմուտք և Յակոմա քաղաքի մոտ միախառնվում **Մբոմու** գետին, կազմավորելով **Ուբանգին**: Վտակներն են՝ Ուերեռ, Բոմոկանդիո, Գադաո, Դուրուռ և այլն: Երկարությունը՝ 1 130 կմ: Ավազանը՝ 135 400 կմ^2: Ջրի ծախսը՝ 1 354-1 530 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 730 մ, գետաբերանինը՝ 398 մ:
XIX դարում գետի ակունքները հայտնաբերել են ռուս աշխարհագրագետ ու ճանապարհորդ Վիլհելմ Յունկերը և գերմանացի հետազոտող Ֆրիդրիխ Բոնդորֆը:

ՈՒԶՈՒԴ - արաբերեն شلالات أوزود Շիլալ աթ Օվզութ, ֆրանսերեն Cascades d'Ouzoud, բերբերերեն ⵜⴰⵣⵓⴷⵉ Ի ⵓⵣⵓⴷ Իմուզզար ն Վուզուդ, իսպաներեն Cascadas de Ouzoud. ջրվեժ Մարոկկոյում, Բարձր Ատլասի լեռներում, Թադլա-Ազիլալ մարզում՝ Էլ Աբիդ գետի վրա: Կազմված է երեք սանդղավանդներից, որոնցից ամենամեծը ունի 75 մ բարձրություն: Անկման բարձրությունը՝ 110 մ: Ակունքի բարձրությունը՝ 1 068 մ:
Անվանումը բերբերերենից թարգմանաբար նշանակում է *Ձիթենուտ*, հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեպի ջրվեժ տանող ճանապարհը անցնում է ձիթենիների պուրակով:

ՈՒԼՈՒԳՈՒՐՈՒ - սվահիլի Milima ya Uluguru, անգլերեն Uluguru Mountains. լեռնաշղթա Տանզանիայի արևելյան մասում, Հնդկական օվկիանոսից մոտ 200 կմ հեռավորությամբ: Քենիայի Տաիտա, Ուպարե, Ուսամբար, Ունգուու, Ռուբեհո, Ուկագուրու, Ուձունգվա, Ուվիդունգա և Մահենգե լեռների հետ միասին կազմում է Արևելյան Տաո լեռնահամակարգի մասը: Բարձր կետերն են՝ Կիմհանդու (2 646 մ) ու Մտինգիրե գագաթները: Լեռների լանջերից են սկիզբ առնում՝ Ռուվու, Մգետա, Նգերեներե և բազմաթիվ այլ գետեր: Երկարությունը՝ մոտ 80 կմ, լայնությունը՝ մինչև 50 կմ:
Անվանումը ստացել է այս լեռներում բնակվող *ուալուգուրու* ցեղից:

ՈՒԿԵՐԵՎԵ - սվահիլի Kisiwa cha Ukerewe, անգլերեն Ukerewe Island. կղզի Աֆրիկայում, **Վիկտորիա** լճում, Տանզանիայում: Կղզու ափերը խիստ մասնատված են: Մակերեսը՝ 530 կմ^2:Երկարությունը՝ մինչև 56 կմ, լայնությունը՝ մինչև 22 կմ: Բարձր կետը՝ Անդեբեզյո բլուր (172 մ):
Անվանումը սվահիլի լեզվից թարգմանաբար նշանակում է *Բարի գալուստ*:

ՈՒՆԳՈՒՋԱ - սվահիլի Unguja, անգլերեն Unguja, արաբերեն أنغوجا جزيرة Զազիր աթ Էնգուժան. կղզի Հնդկական օվկիանոսում, Աֆրիկայի հարավարևելյան մասում, **Զանզիբար** կղզեխմբում: Մայրցամաքից բաժանվում է **Զանզիբար** նեղուցով: Կղզին շրջապատված է բազմաթիվ մանր կղզիներով՝ Մնեմբա, Տումբատու, Ուզի, Տելե, Կվալե, Ուկոմբե, Պամունդա և այլն: Մակերեսը՝ 1 666 կմ^2: Երկարությունը՝ մոտ 85 կմ, լայնությունը՝ 37 կմ: Բարձր կետը՝ Մասինջինի բլուր 119 մ (Կոանի շղթայում):
Նախկինում հայտնի էր Զանզիբար անվամբ:
Այժմյան անվանումը սվահիլի լեզվից թարգմանաբար նշանակում է *բոս կամ դու միայնակ ես*:

ՈՒՈԼՖԻՇ ԲԵՅ - աֆրիկաանս Walvisbaai, անգլերեն Walvis Bay, գերմաներեն Walfischbucht / Walfischbai, պորտուգալերեն Golfo de Santa Maria da Conceição. Ատլանտյան օվկիանոսի ծովախորշ, Նամիբիայի արևմուտքում: Արևմուտքից սահմանափակված է Պելիկան հրվանդանով: Երկարությունը՝ 10 կմ, լայնությունը՝ 10 կմ-ից ավելի: Առավելագույն խորությունը՝ 11 մ:
Անվանվել է ծովախորշի արևելյան ափին տեղակայված *Ուոլֆիշ Բեյ* քաղաքից:

ՈՒՊԵՄԲԱ - ֆրանսերեն Lac Upemba.լիճ Աֆրիկայում, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում՝ Կատանգա պրովինցիայում: Ուպեմբան մոտավորապես 50 այլ լճերի հետ միասին կազմում է Կամալոնդո իջվածքի մասը, որն այժմ վերածվել է Լուալաբա գետի կողմից ձևավորված ճահճային խոշոր ավազանի:

Լիճն են թափվում Լուալաբա, Սանգա և բազմաթիվ այլ գետեր, արտահոսում՝ Լուալաբան: Ուպեմբան հայտնի է իր լողացող կղզիներով: Մակերեսը՝ 530 կմ^2: Երկարությունը՝ 70 կմ, լայնությունը՝ մինչև 45 կմ: Ծավալը՝ 0,742 կմ^3: Միջին խորությունը՝ 1,4 մ, առավելագույնը՝ 3,2 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 566 մ:

Ք

ՔԱԹԹԱՐԱ - արաբերեն القطـــارة منخفـــض Մունխաֆիդ ալ Քթարտու. ջրազուրկ իջվածք **Լիբիական անապատում՝** Եգիպտոսում: Հյուսիսից և արևմուտքից եզերված է շուրջ 100 մ բարձրությամբ գահավեժ կրաքարային զառիթափերով: Այստեղ է գտնվում Կարա օազիսը: Մակերեսը՝ 19 605 կմ^2: Երկարությունը՝ 298 մ, լայնությունը՝ 80 մ: Միջին բարձրությունը՝ -60 մ: Ցածր կետը՝ -133 մ:
Անվանումն արաբերեն լեզվից թարգմանաբար նշանակում է *Ցածր կաթիլ*:

ՔԵՆԻԱ - սվահիլի Mlima Kenya, անգլերեն Mount Kenya, կիկույու Kĩrĩ Nyaga, էմբու Kiri Njeru, մասայերեն Ol Donyo Keri, մերու Kirimara. բազմագագաթ ստրատոհրաբուխ Աֆրիկայում, Քենիայի կենտրոնական մասում, Նայրոբի քաղաքից 150 կմ հյուսիս-արևելք: Աֆրիկայում բարձրությամբ երկրորդ լեռը: Բարձր կետերն են՝ Բատիանը (5 199 մ), Նելիոնը (5 188 մ) և Փոյնթ Լենանան (4 985 մ): Լեռան գագաթային մասում կան 11 սառցադաշտեր՝ Նորթի, Կրապֆ, Գրեգորի, Լյուիս, Դայմոնդ, Դարվին, Ֆորել, Հեյմ, Տինդալ, Ցեզար ու Ջոզեֆ անուններով: Լեռան լանջերից սկիզբ առնող գետերն ունեն մշտական հոսք և կարևոր դեր են խաղում նրա ստորոտում բնակվող բնակիչների կյանքում: Հարաբերական բարձրությունը՝ 3 825 մ:
Հայտնի է նաև Kĩrĩ Nyaga *Փայլատակող լեռ*, Kiri Njeru *Սպիտակավուն լեռ*, Ol Donyo Keri *Բազմագույն գոլավոր լեռներ* ու Kirimara *Այն ինչն ունի սպիտակ նյութ* (ձյուն) անուններով:
Քենիա անվանումը կամբա լեզվից թարգմանաբար նշանակում է *Ջայլամներով լի վայր*:

ՔԻՆՅԵՏԻ - անգլերեն Kinyeti. լեռնագագաթ Իմատոնգ լեռներում՝ Հարավային Սուդանում, Ուգանդայի հետ սահմանամերձ գոտում: Լեռան լանջերից են սկիզբ առնում՝ Քինյետի, Ապեպի, Կիտ, Վանդիդա, Սոն, Կոս, Արինգա և այլ գետեր: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 3 187 մ, հարաբերականը՝ 2 120 մ:
Մի խումբ բարձր գագաթներ, որոնց մեջ է նաև Քինյետին, երբեմն հայտնի են Լոմարիտի կամ Լոլոբալ լեռներ անվամբ:

Օ

ՕԳԱԴԵՆ - ամհարերեն **ኦጋዴን** Օգադենի, անգլերեն Ogaden, սոմալիերեն Ogaadeen. սարահարթ Արևմտյան Աֆրիկայում, Եթովպիայի արևելյան մասում, Ջիբութիի, Քենիայի ու Սոմալիի սահմանին: Բարձրությունը տատանվում է հարավում 300 մ-ից մինչև 1 500 մ հյուսիս-արևմուտքում: Մակերեսը՝ 327 068 կմ^2:
Անվանվել է *Օգադենի-Դարոդ* տոհմից, որին պատկանում է Եթովպիայում բնակվող սոմալիների մեծամասնությունը:

ՕԿԱՎԱՆԳՈ - պորտուգալերեն Rio Cubango (Okavango), անգլերեն Okavango, տսվանա Noka ya Okavango.գետ Հարավարևմտյան Աֆրիկայում՝ Անգոլայում, Նա-

միբիայում ու Բոտսվանայում: Սկիզբ է առնում Անգոլայի **Բիե** սարավանդից, հոսում դեպի հարավ, ապա փոխելով իր ուղղությունը հարավարևելյանի ու կազմելով բնական սահման Անգոլայի ու Նամիբիայի միջև և հոսելով արևելյան ուղղությամբ՝ Մուկուսո բնակավայրի մոտ, կրկին փոխելով իր հոսքը հարավարևելյանի ու առաջացնելով շուրջ 4 մ բարձրությամբ մի շարք քարվաստներ, որոնք հայտնի են Պոպի ջրվեժներ անվամբ: Այնուհետ անցնում է Բոտսվանայի տարածք և վերջանում **Կալահարի անապատի** հյուսիսային մասում՝ ճահճոտ ներքին դելտայում: Վտակներն են՝ Կվիտոն, Կուեբեն, Կուտատոն, Կուշի Կվեբեն, Կվատիրը, Կվիտոն, Օմատակոն, Նգամասերին, Մագվեգկանան և այլն: Երկարությունը՝ 1 700 կմ: Ավազանը՝ 721 258 կմ^2: Ջրի ծախսը՝ 475-1 000 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 1 778 մ, գետաբերանինը՝ 925 մ:
Անգոլայում գետը հայտնի է Կուբանգո անվամբ:
Անունը ստացել է *վակավանգո* ցեղից:

ՕՐԱՆԺ - անգլերեն Orange, աֆրիկաանս Oranjerivier, սոթո Senqu. գետ Աֆրիկայի հարավում՝ Լեսոթոյում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում ու Նամիբիայում: Սկիզբ է առնում Լեսոթոյի Մալուտի լեռների Մոնտ օ Սուրս լեռան արևմտյան լանջից, հոսում հարավարևմտյան ուղղությամբ, ապա փոխելով իր հոսքը արևմտյանի, կտրում անցնում է Հյուսիսային Կապի մարզը, այնուհետ կազմելով Հարավաֆրիկյան Հանրապետության ու Նամիբիայի սահմանը՝ թափվում Ատլանտյան օվկիանոս: Վտակներն են՝ **Վաալ** , Կալեդոն, Կրայ, Բրակ, Սիկաու, Բրուկպուրտ և այլն: Գետի վրա են գտնվում՝ Աուգրաբիս,Կետանե, Մալեցունյանե ջրվեժները: Երկարությունը՝ 2200 կմ: Ավազանը՝ 973 000 կմ^2: Ջրի ծախսը՝ 800 մ^3/վրկ: Ակունքի բարձրությունը՝ 3 282 մ:
Հայտնի էր նաև Գարիպ, Գրոոտ Ռիվեր անուններով:
Գետն իր անունը 1779 թ-ին ստացել է Քեյփթաունի կայազորի հրամանատար, գնդապետ Ռոբերտ Գորդոնի կողմից, ի պատիվ Նիդերլանդների վերջին շտատհալտեր *Վիլլեմ V Օրանժ- Նասսաուի*:

Ֆ

ՖԱԳԻԲԻՆ - ֆրանսերեն Lac Figuibine. չորացող լճերի համակարգ Մալիի հյուսիսային մասում, Տիմբուկտու քաղաքից արևմուտք, **Նիգեր** գետի ներքին դելտայի շրջանում: Կազմված է **Նիգեր** գետից Ֆարաբանգո ջրահոսքի միջոցով սնվող հինգ լճերից՝ Ֆագիբինից, Տելեից, Տակարայից, Գուբերից և Կամանգոյից: Ջրառատ տարիներին ջուրը կարող է տարածվել ավելի քան 80 կմ: Մակերեսը՝ 0-590 կմ^2: Միջին խորությունը՝ 4,3 մ, առավելագույնը՝ 11 մ: Բարձրությունը ծովի մակարդակից 259 մ:
Հայտնի է նաև Ֆիգիբին անվամբ:

ՖԱՐԻՆ ՌՈՒՎԱ - անգլերեն Farin Ruwa. ջրվեժ **Զոս** սարավանդում, Նիգերիայի կենտրոնական մասում: Կազմված է երեք սանդղավանդներից: Անկման բարձրությունը՝ 150 մ: Լայնությունը՝ 50 մ:
Անվանումը հաուսա լեզվից թարգմանաբար նշանակում է *Սպիտակ ջուր*:

ՖԱՐԿՈՒԱՐ - ֆրանսերեն Groupe Farquhar, անգլերեն Farquhar Group.13 կղզիներից կազմված կղզեխումբ Հնդկական օվկիանոսում՝ Արտաքին Սեյշելյան կղզիների

կազմում: Կղզիներն են՝ Ֆարկուարը, Սեն Պիերը, Փրովիդենսը, Սերֆը, Ուիզարդը և այլն: Մակերեսը՝ 10,68 կմ^2:
Կղզեխումբն իր անվանումը ստացել է ամենախոշոր Ֆարկուար ատոլից, որի անունն իր հերթին կազմված է արաբերեն فاركوهـار ֆարկուհար բառակապակցությունից, որը թարգմանաբար նշանակում է *Կորուսյալ երկիր*:

ՖԻԱՆԳԱ - ֆրանսերեն Lac Fianga, արաբերեն فيانجـــا بحـــيرة Բուհայրաթու տա Ֆյանջա, անգլերեն Lake Fianga. ծանծաղ լիճ Կամերունի ու Չադի սահմանագլխին: Ֆիանգան իր սնուցումը ստանում է իրենից արևելք գտնվող ճահիճներից: Լիճն են թափվում Լոգոնե, Կաբիա գետերը և բազմաթիվ ջրահոսքեր, իսկ արտահոսում՝ Մայո Կեբբին: Երկարությունը՝ մինչև 40 կմ, լայնությունը՝ մինչև 5 կմ: Միջին խորությունը՝ 2-3 մ, առավելագույնը՝ 4 մ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 320 մ:

ՖՈԳՈՒ - պորտուգալերեն Pico do Fogo. գործող ստրատոհրաբուխ համանուն կղզում, **Կանաչ Հրվանդանի կղզեխմբում՝** Կաբու Վերդիում: Լանջերից սկիզբ են առնում բազմաթիվ գետակներ: Բարձրությունը ծովի մակարդակից՝ 2 829 մ:
Անվանումը ստացել է ***Ֆոգու*** կղզուց:

ՖՈԳՈՒ - պորտուգալերեն Ilha do Fogo. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում՝ **Կանաչ հրվանդանի կղզիներում**, **Սանտյագու** կղզուց 50 կմ հարավարևմուտք: Կղզու եզրակետերն են հյուսիսայինը՝ Մոնտի Վերմելյուն, հարավայինը՝ Պեսկադեյրուն, արևմտյանը՝ Վալի դի Կավալեյրուշը: Այստեղ կան մի շարք սակավաջուր գետակներ ու ջրահոսքեր՝ Մոռու, Բանանա, Մոնտի Կառմու, Տելյա և այլն: Մակերեսը՝ 476 կմ^2: Երկարությունը՝ 26,1 կմ, լայնությունը՝ 26,2 կմ: Բարձր կետը՝ Ֆոգու հրաբուխ (2 829 մ):
Նախկինում հայտնի էր Սան Ֆիլիպի անվամբ:
Այժմյան անվանումը պորտուգալերենից բառացի նշանակում է *Կրակ (Հուր)*:

ՖՈՒԵՐՏԵՎԵՆՏՈՒՐԱ - իսպաներեն Fuerteventura. հրաբխային կղզի Ատլանտյան օվկիանոսում, մեծությամբ երկրորդը **Կանարյան կղզեխմբում**: Ունի ամենաերկար լողափերը ամբողջ կղզեխմբում: Մակերեսը՝ 1 659,74 կմ^2: Երկարությունը՝ մոտ 100 կմ, լայնությունը՝ 31 կմ: Բարձր կետը՝ Սարսա հրաբուխ (Խանդիա, 807 մ):
Նախկինում հայտնի էր Պլանասիա և Էրբանիա անուններով:
Այժմյան անվանումն առաջացել է իսպաներեն fuerte *ամուր*, *վստահելի* և ventura *հաջողություն*, *երջանկություն* բառերից:

ՖՈՒՏԱ ՋԱԼՈՆ - ֆրանսերեն Fouta-Djalon, ֆուլա Fuuta Jaloo. սարավանդ Արևմտյան Աֆրիկայում՝ Գվինեայում: Կազմում է Վերինգվինեական բարձրավայրի մասը: Այստեղից են սկիզբ առնում Արևմտյան Աֆրիկայի երեք խոշոր գետերը՝ **Նիգերը**, **Սենեգալը** և **Գամբիան**: Բարձր գագաթը՝ Լուրա լեռն է (1 515 մ): Մակերեսը՝ 81 952 կմ^2:
Հայտնի է նաև Միջին Գվինեա անվամբ:
Նկատի ունենալով այն, որ այստեղից են սկիզբ առնում բազմաթիվ գետեր, Արևմտյան Աֆրիկայի ժողովուրդները Ֆուտա Ջալոնն անվանում են *Ջրերի հայր* կամ *Ջրմուղ աշտարակ*:
Անվանումն առաջացել է ֆուլա լեզվից տարածաշրջանի Fuuta անունից, որին գումարվել է նաև այժմ անհետացած Յալունկա կամ Ջալոնկե տեղաբնիկների անունը:

Աֆրիկայի խոշոր ֆիզաշխարհագրական օբյեկտների տեղեկատու-բառարան

Տեղեկատու-բառարանը կազմվել է
Հայաստանի Հանրապետության
Կադաստրի կոմիտեի
Գեոմատիկայի կենտրոնի կողմից

Գլխավոր խմբագիր՝ Յու. Վարյան

Խմբագիր՝ Վ. Թովմասյան